AZG NEW SHABAT 1.QXD 18/02/2016 22:00 Page 1

19 ՓԵՏՐՈՒԱՐ 2016 ՈՒՐԲԱԹ 6(5406)

# Ազգ Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Երեք նախարար եւ երկու մարզպետ ՀՅԴ-ից

Չնայած որեւէ գաղտնիք այլեւս չկար ՀՅԴ-ի կողմից առաջադրվելիք նախարարի թեկնածուների անունների առումով, քանի որ ԶԼՄ-ները բազմիցս գրել էին այդ մասին, այնուամենայնիվ ՀՅԴ խմբակցության ղեկավար **Արմեն Ռուստամյանի** երեկվա բացահայտումն այդ առթիվ լուրերն ավելի հավաստի դարձրեց: Այսպես՝ տարածքային կառավարման նախարար կդառնա Դավիթ Լոքյանը, կրթության եւ գիտության նախարար՝ Լեւոն Մկրտչյանը, էկոնոմիկայի նախարար՝ Արծվիկ Մինասյանը:ՀՅԴ-ն կունենա նաեւ երկու մարզպետ՝ Արագածոտնի մարզպետ կդառնա Գեւորգ Գյոզալյանը, Շիրակի մարզպետ՝ Հովսեփ Սիմոնյանը: ՀՀԿ-ի եւ ՀՅԴ-ի միջեւ կկնքվի քաղաքական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, որտեղ մանրամասնված է լինելու համագործակցության բովանդակությունը:

**Մ.Խ.**

<u>ՕՐԵՐԻ ՀԵՏ</u>

## Ի՞նչ է լինելու պրոֆեսիոնալ լրագրության ճակատագիրը

Անցյալ շաբաթ միջազգային մամուլի ասպարեզում տեղի ունեցավ մի բան, որը մեկ անգամ եւս ընդգծեց բարձր տեխնոլոգիաների հաղթանակի անխուսափելիությունը նաեւ այդ ոլորտում. դադարեց բրիտանական «Դի Ինդիփենդենտ» (The Independent) ազդեցիկ օրաթերթի թղթային կյանքը, եւ այսուհետեւ այդ թերթը լույս կտեսնի, ավելի շուտ՝ կհրապարակվի միայն համացանցային on-line տարբերակով:

Անշուշտ «Ինդիփենդենտ»ը ոչ առաջինը եւ ոչ էլ վերջինն է նման ճակատագրով. նույնիսկ ամերիկյան մեծատիրաժ եւ մեծազդեցիկ «Նյուզուիք» (Newsweek) շաբաթաթերթը այսօր, արդեն տեւական ժամանակ, վաճառքի դրված իր՝ շուրջ 1 միլիոն տպաքանակով: Սակայն բրիտանական օրաթերթի այս ընկրկումը խորապես տխրեցրեց ինձ՝ տպագիր մամուլի ներկայացուցչիս– վստահ եմ՝ լուրջ մամուլի բոլո՛ր սիրահարներին նաեւ– ոչ միայն իր՝ մի քիչ ձախ թեքված լիբերալդեմոկրատական ուղղության եւ ոչ էլ իր լրագրողների հրաշալի խմբում Ռոբերտ Ֆիսքի նման մեծություններ ունենալու պատճառով, այլեւ աշխարհաքաղաքական խաբեությունների ու մոլորեցումների մեր դարաշրջանում անկախ մտածողության եւ արդարասիրության արտահայտիչը լինելու հանգամանքով: «Ինդիփենդենտը» գրում էր այն, որը դո՛ւ էիր մտածում, բայց թեմային խորությամբ չտիրապետելու եւ կամ այլ պատճառով չէիր կարող գրել կամ ասել: Եվ ամենեւին պատահական չէր, որ այդ թերթը բրիտանական ողջ մամուլում գրեթե միակն էր, որ Հայոց ցեղասպանության եւ ընդհանրապես աշխարհում տեղի ունեցող անարդարությունների ու խժդժությունների վերաբերյալ հասու, հստակ եւ արդարամետ կեցվածք ուներ:

Բայց ափսոսանքի համար կար եւս մի պատճառ, որը զգայուն տրամադրությամբ ու տրամաբանությամբ լավագույնս արտահայտեց թերթի գլխավոր խմբագիր Ամոլ Ռաժանը (Amol Rajan): Հայտարարելով թերթի թղթային տարբերակի փակման որոշման մասին՝ նա մոտավորապես արտահայտեց հետեւյալ միտքը. «Խոր ցավ եմ ապրում այս ստիպողական որոշման համար ոչ միայն այն պատճառով, որ անձամբ ռոմանտիկ սիրով եմ կապված տպագիր մամուլին, այլեւ այն բանի համար, որ խիստ մտահոգիչ է պրոֆեսիոնալ լրագրության ճակատագիրը. այսուհետեւ ո՞վ է հսկելու, հակակշռելու կառավարությունների ու կառավարիչների գործունեությունը, ո՞վ է հետաքննելու նրանց արարքները»:

Եվ իրոք, պրոֆեսիոնալ լրագրողները լավ կհասկանան գլխավոր խմբագրին: Միայն այն փաստը, որ զանգվածային լրատվամիջոցների ու լրագրողների դեմ աշխարհում հարուցված դատական գործերի ավելի քան 90 տոկոսը ուղղված է հենց տպագիր մամուլին, հաստատում է նրա մտահոգության հիմնավոր լինելը պրոֆեսիոնալ լրագրության ճակատագրի վերաբերյալ:

Անշուշտ, «Ինդիփենդենտի» տպագիր տարբերակի փակումը ունի հիմնականում բիզնես պատճառներ: Թերթը այդպես էլ չկարողացավ, հակառակ իր նոր սեփականատեր՝ ռուս օլիգարխ Ալեքսանդր Լեբեդեւի բազմամիլիոն ներդրումներին, նաեւ աշխատավարձի եւ աշխատակազմի կրճատումներին, վերագտնել իր նախկին ֆինանսական վիճակը եւ 400,000 տպաքանակը, եւ վերջին տարիներին լույս էր տեսնում ընդամենը 200,000 օրինակով: Նրա գլխավոր մրցակիցները ո՛չ «Դը Գարդիանն» էր (The Guardian), ոչ էլ մամուլի մոգուլ Ռյուպերտ Մըրդոքի (Rupert Murdoch) այլազան թերթերը: Բուն մրցակիցը համացանցն էր եւ համացանցային լրատվամիջոցները, որոնք խորշակի նման ներխուժել՝ չորացնում են տպագիր մամուլը:

Սակայն դա այն բնական ընթացքն է, որին ենթակա է նաեւ մեր՝ հայաստանյան արդեն տկար ու հիվանդ տպագիր մամուլը: Նոր տեխնոլոգիաները, ինչպես միշտ, պարտադրում են իրենցը: Դա անխուսափելի է, ցավոք: Բայց անխուսափելի՞ է նաեւ պրոֆեսիոնալ լրագրության անհետացումը:

Հարցադրմանը կանդրադառնամ առաջիկայում:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Ո՞ւմ է հանձնվում իշխանությունը



Նախագահ Սարգսյանը փետրվարի 12-ին Սահմանադրության փոփոխությունների կենսագործման վերաբերյալ իր ելույթում կրկին փաստի առաջ կանգնեցրեց գործադիր եւ օրենսդիր իշխանությունների իր գործընկերներին՝ մեր տպավորությամբ նրանցից ոչ մեկն այդպիսի բովանդակության ու այդ ծավալի ելույթի չէր սպասում, ու նրանք կարծես մի քանի օր անսպասելիությունից ցնցվել էին, համենայնդեպս՝ առաջին արձագանքները մեր այդ տպավորության օգտին են խոսում: Ասենք, որ դա ռազմական հրամանատարի գործելակերպ է՝ անսպասելի ու ծածուկ ծրագրված հարված տալ թշնամուն, որը սովորաբար մեծ արդյունքի է բերում ռազմական իրավիճակներում: Իսկ թե որքան էր արդյունավետ այս հերթական անսպասելիությունը առօրյա կյանքում ու սեփական գործընկերների, հայ հանրության հանդեպ՝ չգիտենք, մեր տրամաբանությամբ՝ երկրի ղեկավարը պետք է կանխատեսելի լինի՛ եւ քաղաքական դաշտի, և՛ սեփական ժողովրդի համար:

Անցնող շաբաթ ելույթից ստացած փորձագիտական թիվ մեկ տպավորությունն այն է, թե այդ ելույթը հեռացող նախագահի ելույթ չէր:Վերլուծաբաններն այդ ելույթի շատ ենթատեքստեր փորձել են վերծանել՝ չենք կրկնվի, սակայն մի քանի նկատառում, այնուամենայնիվ, որ վերլուծություններում չենք նկատել, կհայտնենք:

Մեր տպավորությունը մի քիչ այլ է՝ նայելով այն նշանակումներին, որ իրականացրել է Սերժ Սարգսյանը հիմա, եւ մի փոքր ավելի վաղ: Երիտասարդ մարդկանց նշանակումները, եթե լավ ուսումնասիրենք նրանց կենսագրությունները, ցույց են տալիս, որ, այնուամենայնիվ, իրականացվում է իշխանության ժառանգական հանձնում որոշակի շրջանակի: Ասենք՝ գլխավոր դատախազը, ԱԱԾ նորանշանակ պետը, ՄԻՊ-ի իշխանության թեկնածուն կարծես այդ նույն շրջանակից են, շուտով Վճռաբեկ դատարանի նախագահի եւ Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնում նշանակվելիք անձինք եւս այս տրամաբանության կլինեն, միգուցե եւ բանը կհասնի ոստիկանապետի՝ այդ սկզբունքին համապատասխան փոփոխությանը: Այդ կարգի նշանակումները հանգրվանորեն կշարունակվեն, ու մի պահ կպարզվի, որ դրանք մեկ միասնական շրջանակ են ներկայացնում, այդ շրջանակի ձեռքին են բոլոր լծակները:

⇨4

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

## Քառորդ դա՞ր, թե՞ 25 տարի

Ինձ համար այս օրերին տպատառ երկու հոբելյար կա՝ «Ազգը», որի աշխատակիցն եմ 1993-ից ի վեր, 25-ամյակն է բոլորել, եւ գերմանական «Դի ցայթը», որի ընթերցողն եմ, եւ որն իր 70-ամյակն է տոնում: Երկուսն էլ շաբաթը մեկ են ընթերցողի ուղեղին թարմ գաղափարներ մատակարարում, համեստ են, նախընտրում են ստուգված տեղեկատվությունը, աղմուկն ու սկանդալը նրանց թուլությունը չեն, երկուսն էլ համբերատար ընթերցող են դաստիարակում, տեղական լուցկու տուփի մեջ տեղավորվող թեմաների փոխարեն աշխարհ են բացում: Երբ իմացա, որ «Դի ցայթն» էլ քաղաքական որեւէ գործչի չի խնդրել իր հոբելյանը շնորհավորել, ուրախացա, որ կռահել-գտել եմ էական նմանությունը: Եվ տխրեցի, որ Ա 1+ հեռուստաընկերությունը դարձավ միակ բացառիկը, որ փետրվարի 16-ին օրվա համայնապատկերի մեջ հիշատակեց «Ազգի» հոբելյանական սյուժեն: Շնորհավորելն ու կարեւորելն իհարկե մշակույթ է, ինչպես նաեւ այն, որ տպագիր լրագրության մշակույթից հեռանալը բանավոր կառավարվող մեր երկրի հայելին է դարձել: Նույնիսկ մամուլի քարտուղարները թերթ չեն կարդում, ուր մնաց նրանց վերադասները: Ինձ համար դժվար է պատկերացնել մի կայացած երկիր, որ լուրջ թերթի դիմերես չունի, հենարան չունի, ու եռօրյայից 40 հազար տպաքանակով օրաթերթ դարձած «Ազգն» էլ մեր անկախ պետականության տարեգիրը լինելով, հավանաբար հենց այդ պատճառով տարիներ անց ստիպված նոր ձեւաչափ ընտրեց իր համար՝ շաբաթաթերթի մեջ ասելիքի բյուրեղացումը:

Հոբելյանական համար «Ազգն», իհարկե, տարվա ընթացքում կհրատարակի: Ի վերջո, քառորդ դար ասելիք կուտակած կլինի, մանավանդ որ շատախոս սոցիալական ցանց դարձած երիտասարդ լրատվամիջոցների համար վարպետության բաց դասի կարիք միշտ կա: Իսկ մինչ այդ, անկեղծ չի լինի, եթե մենք «Ազգում»՝ մեր տանն ապրած օրերի մասին չբարձրաձայնենք: Եվ քանի գրվելիք բոլոր պատմությունները լրագրությունից մի քանի փողոց հեռու չեն, հետաքրքրական կլինեն նաեւ մեր ընթերցողներին, որոնք կարող են մեր այս շարքը լրացնել իրենց պատմությամբ՝ «Ազգ»-ի հետ իրենց հանդիպման մասին գրառելով:

⇨3



**Աղաղակող փաստեր Լեւոն Հայրապետյանի ...**

էջ 2



**Կարեն Շահնազարով. նոր մարտահրավեր Լեւ Տոլստոյի՞ն**

էջ Ա



**Գրողի ծոցը, բայց ո՞ւմ**

էջ 5

AZG NEW SHABAT 1.QXD 18/02/2016 22:00 Page 2



# Աղաղակող փաստեր Լեւոն Հայրապետյանի դատաքննության ընթացքում



Փետրվարի 16-ին եւ 17-ին Մոսկվայի Զամոսկվորեչյան դատարանում շարունակվել է ճանաչված գործարար եւ բարեգործ Լեւոն Հայրապետյանի նկատմամբ խարդախության հատկանիշներով հարուցված քրեական գործի քննությունը: Հիշեցնենք, որ իրավապահները Հայրապետյանին ակնհայտորեն շինծու մեղադրանքներ են առաջադրել առանձնակի ծանր հանցագործությունների համար ցմահ ազատազրկման դատապարտված Բաշկիրիայի նախկին սենատոր Իգոր Իզմեստեւի մոր հայտարարության հիման վրա. կինը գործարարին մեղադրում է իրենից 700 հազար դոլար յուրացնելու մեջ, իբրեւ թե տղայի հանցանքը մեղմացնելու միջնորդության համար: Լեւոն Հայրապետյանը, ինչպես արդեն տեղեկացրել ենք, սկզբից եւեթ այդ կնոջ ցուցմունքները համարել է պատվեր եւ իր հասցեին արված զրպարտություն, նա իր մեղքը չի ընդունում եւ դատարանում մի քանի անգամ հերքել է 700 հազար դոլար հափշտակելու մասին մեղադրանքները: Իսկ Հայրապետյանի շահերի պաշտպանը՝ Մոսկվայի փաստաբանական պալատի փաստաբան, ՌԴ-ում ճանաչված իրավաբան Դավիթ Խեչյանը, ով մանրամասն ուսումնասիրելով քրեական գործի նյութերը՝ մի շարք աղաղակող փաստեր է ջրի երես հանել եւ ներկայացրել դատարանին:

Ըստ մոսկովյան «Սոբեսեդնիկի» հավաստի տեղեկությունների՝ այս շաբաթ ընթացած դատաքննությունների ընթացքում առավել քան աղմկահարույց եւ սենսացիոն տեղեկություններ են ի հայտ եկել: Նախ, լուրեր են շրջանառվում այն մասին, որ Իզմեստեւի տխրահռչակ փաստաբան Սերգեյ Անտոնովը, որը ներկայումս ՌԴ իրավապահների կողմից գտնվում է հետախուզման մեջ, 2010 թվականին ինքնագլուխ, խաբեության եւ վստահության չարաշահման ճանապարհով, մոլորության մեջ է գցել Իգոր Իզմեստեւի մորը, խոստումներ տվել, իբրեւ թե «վերեւներում» մեծ կապեր ունեցող Հայրապետյանը դրամական խոշոր վարձատրության դիմաց կարող է հասնել նրա որդու նկատմամբ ավելի մեղմ դատավճռի կայացմանը: Սերգեյ Անտոնովը, ըստ վկայությունների, միայնակ ստացել է 700 հազար դոլարը: Բայց դա դեռ ամենը չէ: Այդ ժամանակահատվածում նա տարբեր քրեական գործերի համար արդարացման կամ մեղմացուցիչ վճիռներ ապահովելու նպատակով տարբեր անձանցից նույնպես խաբեության համանման եղանակներով այլ խոշոր գումարներ էլ է վերցրել, որից հետո դիմել է փախուստի եւ ըստ որոշ տեղեկությունների՝ ներկայումս գտնվում է ԱՄՆ-ում:

Այսպիսով, այն հիմնավոր պնդումները, թե Լեւոն Հայրապետյանը հարյուր տոկոսով անմեղ է եւ նրա ձերբակալությունը նման է ապաշնորհ ձեւով կառուցված անողնաշար ու խարխուլ պատվերի եւ քաղաքական հաշվեհարդարի՝ դատաքննությունից դատաքննություն ավելի ու ավելի է որոշակիանում:

Փետրվարի 16-ին դատարան ներկայացավ եւ վկայություն տվեց ցմահ դատապարտվածի՝ նախկին սենատոր Իգոր Իզմեստեւի հայրը, որը ընտանեկան ինչ-ինչ պատճառներով բաժանվել էր կնոջից: Դատավորի այն հարցին, թե ո՞ւմ են տվել խնդրո առարկա գումարը՝ տղամարդը առանց երկմտելու եւ անվարան պատասխանեց՝ իրենց նախկին փաստաբան Անտոնովին: Հարցը այլ կերպ կրկնեցին՝ գումարը Հայրապետյանի՞ն եք տվել: Իզմեստեւի հոր պատասխանը հետեւյալն էր. «Ոչ, կինս տվել է փաստաբան Իվանովին»:

Հայրը նաեւ նշեց, որ ինքը Հայրապետյանին առաջին անգամ է դեմառդեմ հանդիպում, մինչ այդ իրեն երբեւէ չեն տեսել, միշտ գործ են ունեցել որդու փաստաբան Իվանովի հետ, որն ամեն անգամ սուտ խոստումներով կերակրել է իրենց ու խաբել, եւ ըստ իրենց ունեցած տեղեկությունների՝ նա շատերից է փող վերցրել ու փախել:

Այս շաբաթ տեղի ունեցած դատաքննության ընթացքում մի արտառոց իրավիճակ էլ արձանագրվեց դատարանում: Ներկաներից մեկի այն հարցին, թե ինչո՞ւ չեն ձայնագրվում դատական նիստի ցուցմունքներն ու ելույթները, դատավորը պատճառաբանեց, թե սարքավորումը խափանվել է, եւ քիչ անց սկսեցին այդ գործն անել «տնայնագործական» եղանակով՝ հեռախոսով ձայնագրելով...

Եվ այսպես, մոսկովյան դատական շաբաթն անցավ ահա այսպիսի խայտառակ ու ամոթալի «ձեռքբերումներով», ինչը, անկեղծ ասած, ստվեր է գցում արդարադատության մասին ողջախոհ մարդկանց ունեցած պատկերացումներին եւ փլուզվում է հավատը:

Իսկ Լեւոն Հայրապետյանին դատարան էին տեղափոխել հիվանդանոցից եւ նիստերն ավարտվելուն պես կրկին տեղափոխեցին հիվանդանոց:

Մնում է զինվել համբերությամբ եւ սպասել այս ակնհայտ խեղկատակության ավարտին:

Նրան եւ նրա անմեղությանը չկասկածող մարդկանց մեծ համբերություն ենք ցանկանում:

Հաջորդ նիստը նշանակված է փետրվարի 24-ին:

**Ռ. ԱՎԱՆԵՍՅԱՆ**
**Մոսկվա**

## ՀՈՍՈՒՆ ԼՐԱՀՈՍ

### Գալուստ Սահակյանը բարձր տրամադրություն ունի եւ արդեն գարուն է

Չորեքշաբթի օրը ուշ երեկոյան հայտնի դարձավ, որ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը տեղափոխվել է Մխիթար Հերացու անվան թիվ 1 համալսարանական կլինիկա: Ավելի ուշ, բուժկենտրոնի գլխավոր բժիշկ՝ կրկին Սահակյան, բայց՝ Կարենը, հայտարարեց, որ ԱԺ նախագահի վիճակը լավ է, հետազոտությունների արդյունքները նորմալ են եւ որ Գալուստ Սահակյանի մոտ եղել է զարկերակային բարձր ճնշում, հիմա էլ՝ խորհրդարանի նախագահը դեղորայքային բուժում է ստանում:

Հինգշաբթի օրվա տվյալներով Գալուստ Սահակյանը դեռ հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում էր, եւ հարցին, որ եթե նա իրեն լավ է զգում, ինչո՞ւ է վերակենդանացման բաժանմունքում, առողջապահության նախարարը պատասխանել է. «ԱԺ նախագահը վերակենդանացման բաժանմունքում է առանձին՝ իրեն հատկացված սենյակում, որպեսզի շատ ելումուտ չլինի»: Ի դեպ, ԱԺ նախագահին, հիվանդանոցի՝ հատուկ իրեն հատկացված սենյակ այցելել են վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ԱԺ փոխնախագահներ՝ Հերմինե Նաղդալյանն ու Էդուարդ Շարմազանովը, պատգամավորներ Կարապետ Գուլոյանն եւ Աբրահամ Մանուկյանը (ԲՀԿ խմբակցություն), Սահակյանի որդին՝ պետական գույքի կառավարման վարչության պետ Արման Սահակյանը, այլք: Բոլոր հիվանդատեսներն էլ նշել են, որ ԱԺ նախագահն իրեն շատ լավ է զգում եւ բարձր տրամադրություն ունի:

Բժիշկ Կարեն Սահակյանն էլ նշել է, որ խորհրդարանի նախագահը դեռ մեկ օր էլ պարտադիր կմնա հիվանդանոցում, `հետո` կտեսնենք:

Ի դեպ, Հերմինե Նաղդալյանը լրագրողների հետ զրույցում հայտնել է, որ ԱԺ նախագահի առողջության վրա՝ «Գարունն իր ազդեցությունը թողել է: Հուսով եմ՝ շուտով կապաքինվի, քանի որ բժիշկների հսկողության տակ է»:

Առողջություն ենք մաղթում ԱԺ նախագահին, միայն նկատենք, որ գարունը դեռ չի եկել:

### Բա մեր Մասի՞սը

Անկարայում անցյալ չորեքշաբթի տեղի ունեցած պայթյունի հետ կապված Ռուսաստանը ցավակցել է Թուրքիային: Հիշեցնենք, որ չորեքշաբթի օրը Թուրքիայի մայրաքաղաքի այն թաղամասում, որտեղ երկրի պաշտպանական որոշ կառույցների շենքեր են, պայթյուն է գրանցվել, որի հետեւանքով շուրջ երեք տասնյակ մարդ մահացել է, մի քանի տասնյակ հոգի՝ վիրավորվել:

Ռուս-թուրքական՝ մեղմ ասած սառը հարաբերությունների այս ժամանակահատվածում, երբ Ռուսաստանում խոսում են ընդհուպ՝ Արարատ լեռը հայերին վերադարձնելու հնարավորության մասին, Մոսկվայի այս ցավակցությունը կարող է նշանակել, որ... Արարատ լեռը մեզ ոչ ոք չի տալու, մեզանից բացի:

### Թուրքիան Ադրբեջանի կողքին է, իսկ Ադրբեջա՞նը

Բաքվում անցնող շաբաթ սպասում էին Թուրքիայի նախագահ Էրդողանին: Սակայն չորեքշաբթի օրը Անկարայում գրանցված ողբերգական հետեւանքներ ունեցած պայթյունի պատճառով Էրդողանը հետաձգել է իր այցը Բաքու՝ փոխարենն այնտեղ գործուղելով ԱԳ նախարար Մեւլութ Չավուշօղլուին: Վերջինս իր ադրբեջանցի գործընկեր Էլմար Մամեդյարովի հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ Թուրքիան Ադրբեջանի կողքին է միջազգային յուրաքանչյուր հարցում, այդ թվում՝ ԼՂ հակամարտության: Ի պատասխան Մամեդյարովը հայտարարել է, որ Ադրբեջանը կքննարկի Սիրիայում դաշնակիցներին (այդ թվում՝ Թուրքիային) միանալու հնարավորությունը, ինչից ենթադրում ենք, որ Ադրբեջանը ոչ բոլոր միջազգային հարցերում է անվերապահ Թուրքիայի կողքին:

**Պատրաստեց՝ ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆԸ**

## Թուրքիան մեծացնում է ԱՄՆ-ում քարոզչության չափը

Մինչ Մերձավոր Արեւելքում տիրող ճգնաժամային տարաձայնությունների մթնոլորտում (Սիրիայում քուրդ ժողովրդի պաշտպանության միավորումներ (YPG), Բաշիկայում (Իրաք) տեղակայված թուրքական զորագնդեր, եւայլն) Թուրքիան եւ Մ. Նահանգները փորձում են պահպանել իրենց հարաբերությունները, Ամերիկայում ապրող թուրքերն իրենց ներկայությունն այնտեղ ապացուցում են նյութական օժանդակություն ցուցաբերելու տեսքով, գրում է Ռագըպ Սոյլուն «Դեյլի Սաբահ» թերթում (Ստամբուլ):

Ըստ նրա, Մ. Նահանգների թուրքական համայնքի ֆինանսական թեւը համարվող «Քաղաքական գործողությունների խորհուրդը» (PAC), որի առաջին մասնաճյուղը հիմնվել է 2007-ին, անցյալ տարի (2015) ավելի մեծ գումարներ է ստացել քան առաջներում: Այդ խորհուրդների կոալիցիայի գանձապահ Լինկըլն Մկքերդիի հավաստիացումներով, 200-ից ավելի նվիրատուներ մոտ 314 հազար դոլար են փոխանցել խորհուրդներին, իրենց նպատակների իրականացման համար: «Դա 60 տոկոսով ավելի գումար է քան նախորդ տարվա նվիրաբերությունը», գրում է Սոյլուն, եւ ավելացնում, որ մարդիկ ավելի լավ են հասկանում կոնգրեսում լոբբիստական խմբավորումների դերն ու կարեւորությունը: Թուրքիայի քաղաքական համակարգը մեծապես կախված է որոշ պատգամավորների տարեկան դրամաշնորհներ պարգեւելուց: Դրանով նրանք առաջ են տանում թուրքամետ դիրքորոշումներ: Օրինակ՝ 26 հազար դոլար է ներդրվել Դոննա Էդուարդսի թեկնածության օգտին, ով պայքարում է Մերիլենդում հայերի եւ հույների դատը պաշտպանող Քրիս Վան Հոլլենի դեմ: Մյուս ոլորտը, որտեղ թուրքերը հաջողության են հասել թուրքամետ կոնգրեսականների թվի աճն է: Այն հասել է 150-ի եւ հույս կա, որ դառնա 160 անմիջապես, որ Իսրայելի հետ հարաբերությունները կարգավորվեն: PAC-ը նպատակ է հետապնդում դրամական նվիրատվությունների չափը հասցնել 500 հազար դոլարի:

**Հ. Ծ.**

AZG NEW SHABAT 1.QXD 18/02/2016 22:00 Page 3



ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱԼԵՐՅԱՆ

# Ու կրկին ավանդների երաշխավորման մասին

Երաշխավորված ավանդների հատուցման նոր կարգի մասին հրապարակված հոդվածից հետո (տես՝ «Ազգ», 25.12.15, «Բանկային միացումներ. նոր հնարավորություններ») որոշ ընթերցողների մոտ հարց առաջացավ, թե ինչո՞ւ ավանդների հատուցումը չի երաշխավորվում ամբողջ ծավալով։

Մեր խնայողություններն ավանդի տեսքով բանկում ներդնելուց ակնկալում ենք, որ ցանկացած պահի եւ որեւէ իրավիճակում այդ միջոցները հասանելի կլինեն մեզ։

Ավանդի ներդրումն ըստ էության անձի կողմից իր խնայողությունների կառավարման եղանակներից մեկն է։ Ոմանք նախընտրում են ներդրումներ անել արժեթղթերում, որը հարաբերականորեն առավել ռիսկային է, իսկ ոմանք էլ նախընտրում են ներդրումներ անել ավանդի տեսքով՝ համարելով, որ դա առավել հուսալի է, չի պահանջում հատուկ գիտելիքներ ու փորձառություն եւ, ամենակարեւորը, երաշխավորվում է պետության կողմից՝ օրենքով սահմանված չափով։

Անշուշտ, ավանդատուներին մշտապես հետաքրքրում է այն հարցը, թե ինչո՞ւ պետությունն ամբողջ ծավալով չի երաշխավորում ավանդի գումարը։ Չէ՞ որ քաղաքացին իր խնայողությունները հանձնելով բանկին ոչ միայն ակնկալում է կայուն եկամուտ իր համար, այլեւ նպաստում է բանկին բնորոշ ֆինանսական գործունեության իրականացմանը։ Հետեւաբար, շատերն արդարացի չեն համարում ավանդների մասնակի հատուցման համակարգը։

Իրականում, օրենքով սահմանված չափով ավանդների երաշխավորումը բնավ չի նշանակում, որ բանկի ձախողման դեպքում ավանդատուն ստանալու է իր ավանդի միայն երաշխավորված մասը։ Այս պարագայում գործելու է իրավական այլ ռեժիմ, որը բանկի լուծարումն է։ Եթե բանկը ճանաչվել է անվճարունակ եւ լուծարվում է, ապա լուծարման գործընթացի համար հատուկ նշանակված լուծարային կառավարիչը ձեռնարկում է բոլոր միջոցառումները բանկի ամբողջ գույքը հավաքագրելու, իրացնելու եւ իրացման արդյունքում ձեռքբերված միջոցների հաշվին պարտատերերի, այդ թվում՝ ավանդատուների պահանջները բավարարելու համար։ Իհարկե, լուծարման գործընթացը, որպես կանոն, երկար է տեւում, իսկ որոշ դեպքերում էլ հնարավոր է բանկի միջոցները բավարար չլինեն բոլոր ավանդատուների պահանջները բավարարելու համար։ Դրա հետեւանքով քաղաքացին հնարավոր է կորցնի իր խնայողությունների մի մասը։ Սա էլ, ըստ էության, ավանդատուի՝ որպես ներդրողի ռիսկն է։

Հետաքրքրական են այս առումով ԱՄՆ-ում իրականացված ուսումնասիրության արդյունքները, համաձայն որոնց պարզվել է, որ ավանդի տեսքով ներդրումները ունեն նաեւ հոգեբանական տարր։ Մասնավորապես, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անձը, ով միաժամանակ ունի ներդրումներ արժեթղթերում եւ ավանդ բանկում, մեկ օրվա ընթացքում արժեթղթերում ներդրումների արդյունքում մոտ 20% կորուստը համարում է նորմալ, մինչդեռ բանկում ավանդը ներդնելուց հետո, ենթադրենք՝ 10 տարի հետո, ավանդի գումարից 1% կորուստի դեպքում համարում է, որ զրկվել է իր խնայողություններից ֆինանսական համակարգի պատճառով։

Ավանդների երաշխավորման համակարգը ներդրված է այն բանի համար, որ ավանդատուները համոզված լինեն, որ նույնիսկ բանկի ձախողման դեպքում իրենց խնայողություններն արագ եւ առանց դժվարությունների հասանելի կլինեն իրենց։ Դա նվազագույնի կհասցնի ավանդատուների շրջանում հնարավոր խուճապը եւ չի առաջացնի շղթայական ազդեցություն ամբողջ բանկային համակարգի վրա այն առումով, որ այլ բանկերի ավանդատուները եւս կսկսեն դուրս բերել իրենց ավանդները՝ համակարգում առաջացնելով իրացվելիության խնդիր։

Թեեւ ավանդի ամբողջ գումարի հատուցման երաշխավորումը կատարյալ լուծում է ավանդատուի շահը պաշտպանելու տեսանկյունից, այդուհանդերձ, կան մի շարք պատճառներ, որոնց համար արդյունավետ չէ ավանդների ամբողջ ծավալով երաշխավորումը։

Պատճառներից մեկն այսպես կոչված «ռիսկի վտանգն է» (moral hazard)։ Սա նշանակում է, որ եթե ավանդն ամբողջ չափով երաշխավորվի, ապա ավանդատուն բավարար ջանք չի գործադրի այն բանկի ընտրության հարցում, որտեղ ցանկանում է ներդրում կատարել։ Այսինքն, նախքան ավանդը որեւէ բանկում ներդնելը, ավանդատուն բավարար չափով չի ուսումնասիրի եւ հետեւի բանկի ֆինանսական վիճակին (օրինակ՝ որքան կապիտալ ունի տվյալ բանկը, ինչպիսի վարկային քաղաքականություն է վարում, ռիսկերի զսպման ինչպիսի համակարգ է ներդրված), բանկի վարքագծին, ֆինանսական համակարգում ունեցած տեղին ու փոխկապակցվածությանը այլ համակարգերի հետ։

Հաջորդ պատճառը բանկերի «ինքնավստահ» վարքագիծն է։ Ավանդների երաշխավորման, եւ հատկապես, ամբողջ ծավալով երաշխավորման համակարգի առկայությունը կարող է բացասաբար ազդել բանկերի վարքագծի վրա։ Մասնավորապես, բանկը կարող է վարել ոչ շահավետ վարկային եւ ներդրումային քաղաքականություն, օրինակ՝ վարկերն ուղղել չափից շատ ռիսկային ոլորտներին, ինչպես նաեւ բավարար ուշադրություն չդարձնել ռիսկի ախորժակին եւ ռիսկերի կառավարմանը՝ իմանալով, որ ձախողման կամ ֆինանսական խնդիրներ առաջանալու դեպքում պետությունը շատ արագ կլուծի ավանդատուների խնդիրները՝ ավանդների հատուցման համակարգի միջոցով, իսկ անհրաժեշտության պարագայում էլ լրացուցիչ կապիտալ կներարկի (bail-out) ֆինանսական համակարգը փրկելու համար։

Այսպիսով, թեեւ ավանդների երաշխավորման համակարգի նպատակն է պահպանել կայունությունը ֆինանսական շուկաներում եւ չկորցնել սպառողի վստահությունը ֆինանսական համակարգի նկատմամբ, այնուամենայնիվ ավանդների երաշխավորումն ամբողջ ծավալով կնշանակի, որ պետությունը նպաստում է բանկերի ռիսկային վարքագծին՝ պաշտպանելով նրանց եւ ֆինանսական համակարգին հնարավոր կորուստներից։

## Ամերիկացի պատմաբանը հայ որբերին ցուցաբերված մարդասիրական օգնության մասին



Բելմոնտի (Մասաչուսեթս) «Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ընկերության» NAASR կենտրոնում հունվարի 28-ին ամերիկացի պատմաբան Քիթ Դեյվիդ Ուոտենպոն ներկայացրել է իր նոր «Քարից հաց։ Մերձավոր Արեւելքը եւ արդի մարդասիրության ձեւավորումը» («Bread from Stones: The Middle East and the Making of Modern Humanitarianism») գիրքը, որտեղ քննության առնելով մարդու իրավունքների պատմության մեջ կարեւոր դեր ունեցած 20-րդ դարի սկզբնական շրջանում կատարված զանգվածային բռնությունները ու պարտադրված տեղահանությունները, այդ թվում նաեւ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, նա կենտրոնացել է «Near East Relief» ընկերության նման նպաստամատույց կազմակերպությունների հայ որբերին ցուցաբերած մարդասիրական օգնության եւ սփյուռքահայ համայնքների կազմավորման վրա։

Ուոտենպոն (Keith Watenpaugh) արդի իսլամի, մարդու իրավունքների եւ խաղաղության հարցերի գծով պրոֆեսոր օգնական է եւ դասավանդում է UC-Davis կրթօջախի կրոնական ուսումնասիրությունների ծրագրերի բաժնում։ Հեղինակ է բազմաթիվ հոդվածների, որոնք տպագրվել են American Historical Review, The International Journal of Middle East Studies եւ այլ պարբերականներում։

Վերոնշյալ դասախոսությունը հովանավորել են «ՆԱԱՍՐ» կենտրոնն ու Կլարք համալսարանի «Ողջակիզման եւ ցեղասպանության ուսումնասիրությունների Ստրասլեր կենտրոնը»։ Հ. Ծ.

1 Իմ հանդիպումը

# Քառորդ դա՞ր, թե՞ 25 տարի

Լրագրության քանաքը մեր վարպետ Սերգեյ Հարությունյանն էր պատվաստել դպրոցականի մեր բաց երակներ, երբ Ռուզան Խաչատրյանի, Աննա Ստեփանյան-Իսրայելյանի ( եւ ուրիշների ) հետ չորեքշաբթիներին վազում էինք «Շավիղ»՝ «Պիոներ կանչ» թերթում մեր տեղը նվաճելու։ Հենց նրանք՝ քանի ընկերուհիներս, նորաբաց «Ազգ»-ում արդեն իրենց անուն-ազգանունը սիրելի դարձրած, ինձ քաջալերողներն էին։ Փորձաշրջանն անցա ու դրա հետ մեկտեղ հասկացա, որ շատ ու արագ վազելու իմ կարողությունը պիտի կրկնապատկեմ, եւ եթե ուզում եմ օրաթերթի տեսքն իմը դարձնել, ապա պիտի հրաժարվեմ բարձրակրունկ կոշիկներից։ Խմբագիր Համլետ Գասպարյանն առաջին օրն իսկ հենց դա զգուշացրեց։ Նրա բարձր լարմանը մենք բոլորս հրաշալի կոփվեցինք՝ ժամը 10-ին կարդացած լինել բոլոր թերթերը, ընտրել օրվա նյութը եւ պատրաստ լինել վերջին պահին ամբողջ էջը քանդելուն։ «Գզրոցներում ուրիշ նյութ չունես, հենց հիմա գրիր»։

Ազնվականի սպիտակ կեղծամի բնական տարբերակը գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանին այնքան էր սազում, որ դժվարանում էի կռահել նրա տարիքը, բայց երբ մեզ հետ սովորական կենցաղային մի պահի անկեղծանում էր, հասկանում էի, որ այդքան շատ գիտելիքներ ունեցող մարդն անշուշտ մեզ նման երիտասարդ է։ Նրա դասական երաժշտության իմացությունը մեր թերթին ճիշտ չափ է տվել, իսկ մեծ, անվանի մարդկանց հետ նրա բարեկամությունը, արտերկրից հյուրերի առատ, ամենօրյա ներկայությունը ոչ միայն բառուբանով լցրել մեր խմբագրությունը, այլ նաեւ «Ազգի» էջերը։

Հիշում եմ՝ դրսում 90-ականների ցրտերն էին, տներում լույս չկար, իսկ խմբագրությունում, ճիշտ է, չպիտի մոռանայինք մեր գրածն անընդհատ save անել, բայց տաք էր, լուսառատ։ Լեւոն Հախվերդյանը, որ համարյա ամեն օր խմբագրություն էր գալիս, մի անգամ ասաց՝ «Սեղան-աթոռդ ինձ կտա՞ս օրվա մեջ մի քանի ժամով»։ «Ողջ օրը թող Ձերը լինի», ասացի մեղավորության ամենօրյա զգացումով, քանի որ երբ գիշերը 12-ին տուն էի դառնում, տեսնում էի, թե իմ արտոնյալ կարգավիճակն ինչպես է ինձ մոռացնել տալիս ընտանիքիս, մյուսների լույս չունենալու մասին։

Այո, երջանիկ էինք, որ օրաթերթի լրագրությունն էինք ընտրել եւ ոչ թե այսօրվա արտոնյալ հեռուստատեսության, որ այն ժամանակ էներգետիկ ճգնաժամի պատճառով հեռուստադիտող չուներ։ Նրանց հետ էլ ի դեպ հրաշալի, առաջ մղող մրցակցություն կար, բայց մասնագիտական համերաշխությունն այնքան առաջնային էր, որ թվում էր, թե լրագրողները հաջողել են ստեղծագործ աշխարհին հատուկ կրքերը ստորադասել բարձր պրոֆեսիոնալ գաղափարներին։

«Ազգ»-ում անգլալեզու, ֆրանսալեզու համաշխարհային մամուլի հսկա ներկայությունը մեր թերթը դարձնում էր իսկական խմբագրություն։ Այդ լեզուների գիտակները՝ Հակոբ Ծուլիկյանն ու Պետրոս Քեշիշյանը, զարմանալի համեստ մարդիկ, այսօր էլ «Ազգի» միջազգային կյանքը պահում են աշխարհի եռուզեռին շատ մերձ։

Լրագրողներիս էգոն չափից դուրս շատ է սիրում, երբ թերթի, լրատվամիջոցի անունն իր անվանը միաձույլ է տեսնում, նույնը չէ համակարգչի առջեւ նստած գեղարվեստական խմբագիրը, էջադրող վարպետը։ Իմ տեսածներն իրենց գործի գիտակ համեստ մարդիկ էին, որ երբեմն ստիպված էին լինում տուրք տալ ոմանց քմահաճույքներին՝ անունս վերեւում գրիր, առաջին էջ տար հոդվածս։ Չեմ պատկերացնում՝ ի՞նչ կլիներ մեր թերթի վիճակը, եթե «Ազգի» կմախքը լցնող Կարինե Արզումանյանն այնտեղ չլիներ։ Իսկ մեր երկրում թե քանիսին է իր հաց տվող մասնագիտության գաղտնիքները հուշել, հաստատ ինքն էլ չի հիշի։

«Ազգի» ամենաուրախ այցեքարտը՝ Toto-ն մեր թերթն իսկապես միջազգային ռելսերի վրա է դրել։ Նրա սուր միտքն իր արագ աջն այնքան հանգիստ է հանձնում թղթին, որ մտածում ես՝ միգուցե լրագրողներիս գրածն էլ իմաստ չունի։ Հոլանդացի երկու լրագրողներ, երբ 90-ականներին Երեւան էին եկել ու մեր խմբագրություն ամեն օր էին այցելում, հավատացած էին, թե երգիծանկարիչն ապահովված է լավ հոնորարով, այլապես Սուքիաս Թոռոսյանն ոչ իրենց կհյուրասիրի, ոչ էլ հոլանդական հեծանիվ կնվիրի։ Այդ օրերին էր, որ լրագրողների մեր սենյակում ոչ միայն մամայիս մեծ կաթսայով եփած տոլման համտեսեցինք, այլեւ ուրիշ մի օր էլ խաշ կերանք։ Իսկական մեծ ընտանիքի նման։ 1996-ին Ամստերդամում Լեո Էրկեն ուրախությամբ իր մեկ օրը զոհաբերեց ինձ իր քաղաքի անկյունները ցույց տալու ի գին, իսկ Սուքիասի համար Վան Գոգի թանգարանից քանի ներկեր գնեց ու ինձ խնդրեց փոխանցել։

Երբ 1997-ին Գերմանիա եկա, հասկացա, որ «Ազգի» այցեքարտը դռներ է բացում։ Սփյուռքահայերը սիրում էին մեր օրաթերթը, «Ազգի» խմբագիրը «յուրային էր օտարների մեջ», իսկ գերմանացի քաղաքական գործիչները, ում հետ հարցազրույց եմ արել, իրազեկ էին, որ Հայաստանի առաջին անկախ օրաթերթն է, Անդրկովկասում առաջինն է տպագրվել համակարգչային տեխնիկայով, աշխատում է արեւմտյան չափանիշներով, երկու կարծիք է ներկայացնում, աշխատակիցները օտար լեզուներ գիտեն, 1999-ից ունի ինտերնետային ծառայություն, որ ամեն օր թարմացվում էր, լույս էր տեսնում 6 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն, արաբերեն եւ պարսկերեն։ Այն ընթերցում էին աշխարհի ավելի քան 70 երկրներում, օրական միջին հաշվով 4000-4500 հոգի։ Ինտերնետով մենք աշխարհի համար բաց պատուհան էինք այլեւս։ Մեր գրածը ոչ միայն կարդում, այլեւ դրա վրա հենվելով իրենց հոդվածն էին շարադրում ուրիշներ, մենք հավաստի աղբյուր էինք։

*(շարունակելի)*

**Գերմանիա**

AZG NEW SHABAT 1.QXD 18/02/2016 22:00 Page 4



# Ո՞ւմ է հանձնվում իշխանությունը

⇨1 Այս մեր դիտարկումն ավելի առարկայական եւ տեսանելի կլինի մի քանի առանցքային պաշտոններում նշանակումներից հետո հատկապես, իսկ խորհրդարանական կարգի անցումը, կուսակցությունների դերի բարձրացումը, նոր, ավելի լավ Ընտրական օրենսգրքի ընդունումը անհրաժեշտ համեմունքներն են միայն երկարատեւ կերակրման համար նախատեսված ճաշի: Սակայն լրագրության հնաբնակիս համար զարմացնող ոչինչ չի կատարվում: Օրինակ` ժամանակին միգուցե Քոչարյանին իշխանության բերելն ուրիշների համար իշխանափոխություն էր, իսկ ինձ համար` իշխանության լավ նախապատրաստված եւ սահուն հանձնում, դրա համար միայն հերիք էր ժամանակին ներկա լինել Արցախի խորհրդարանի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի` օրուկես տեւած ընտրությանը, որտեղ հնչած տաք ելույթներում հեռագնա շատ բան էր հասկանալի դառնում` հաջորդած իրադարձությունների, ապա եւ հետագայում Հայաստանում իշխանության փոխանցման իմաստով:

Նույնը կարելի է ասել Սերժ Սարգսյանի իշխանության գալու մասին, նրան եւս իշխանությունը հանձնել են, իհարկե ապահովելով բոլոր ատրիբուտները, որոնք պետության ինստիտուտները նախատեսում են: Հիմա այդ ավանդույթն ինչո՞ւ պիտի խախտվի որ, եւ ընդհանրապես` իշխանության ժառանգորդի պատրաստումը շատ սովորական պրակտիկա է եւ անտես կերպով կիրառվում է անգամ աշխարհի մեծ պետություններում, դա թույլ է տալիս իշխանություն ձեւավորել առանց ցնցումների: Հարցն այն է, թե ո՞ւմ է հանձնվում իշխանությունը, եւ հասարակությունն արդյո՞ք գլխի է ընկնում դրա մասին: Բացի այդ` այս դեպքում իշխանության ձեւավորման դեմոկրատական սկզբունքները, նախօրոք կանխորոշված ընտրությունների տեսքով, մնում են միայն դատարկ ցուցափեղկեր, հանրությունն էլ իր իշխանության ձեւավորմանն իրականում չի մասնակցում: Մեր կարծիքով հիմա Հայաստանում տեղի է ունենում դա: Ուղղակի իշխանության սահուն հանձնումը այս անգամ մի փոքր երկար կտեւի եւ շատ ավելի մանրամասն է մտածված, քան նախորդ երկու դեպքերում է եղել: Այժմ այն համեմվել է կառավարման մոդելի արդիականացմամբ, իսկ Հայաստանի նախագահն առայժմ, գոնե իր վերջին ելույթի շեշտադրումներից ելնելով, միգուցե 2018 թվականից հետո էլ մի փոքր մնա իշխանության երեք ճյուղերից մեկում` վերջնականապես իշխանությունը ժառանգորդ(ներ)ին հանձնելու գործընթացն ավելի սահուն դարձնելու համար:

Երեսունից մի փոքր բարձր տարիքի ու նույն շրջանակի մարդկանց` սկսված եւ շարունակական նշանակումները երկրի առանցքային պաշտոններում, մատնացույց են անում հասցե եւ մտահղացման շարժառիթ: Մնացյալը բանահյուսություն է, անհրաժեշտ **անտուրաժ**: Սակայն նկատենք, որ այս ծրագիրն, անշուշտ, միայն մենք նկատած չենք լինի, հավանաբար սա վաղուց գիտեն ե՛ւ իշխանական կուսակցության մեջ, ե՛ւ գործադիրում, ու բնական է, որ այս բոլորին կարող են դիմադրողներ լինել: Ահա այս տեսանկյունից եթե նայենք նախագահի ելույթի որոշ ենթատեքստերին` հասցեատերերին անմիջապես կարելի է գտնել: Նայած թե որքան կպատի դիմադրողների ուժը, եւ մինչեւ ուր կարող են հասնել նրանք: Օրինակ` նախագահի ասած` չկատարած աշխատանքի համար մեղքը վերադասի վրա բարդողները, պաշտոնի տակ բամբասողները, այլընտրանքային գաղափարները մերժողները, սեփական անպարկեշտությունը ուրիշին վերագրողները եւ այս ռանգի շատերը:

Բայց , իհարկե, ժողովուրդն, այնուամենայնիվ փոփոխությունների սպասում ունի, բնականաբար` նախագահի ելույթում այդ սպասումների արձագանքն էլ է առկա շատ մասով, ինչը միշտ էլ այնքան հաճո է բոլորի ականջին, որին այնքան սպասում են մարդիկ` ապրելու համար նախագահի նկարագրած երկրում («ստեղծել այնպիսի Հայաստան, որտեղ ապրողներն իրենց երջանիկ զգան»): Այո, սպասումներ ունեցողներ կան, բոլորը հո լրագրողներիս նման ամեն ինչ տեսած-կերած ցինի՞կ չեն, որոնց համար պատրանքներ չկան: Անգամ սոցիոլոգիայի պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանը սպասումներ ունի` նախագահի ելույթից հետո նա ակնկալում է (hayeli.am) վերին իշխանությունից չորս հիմնական, բայց խոստովանենք` անհավանական քայլ. գործադիր իշխանությունից մուլտիմիլիոնատերերի հեռացում, իրենց անձեռնմխելի բդեշխներ կարծող մարզային իշխանների գահազրկում, «թաղային հեղինակությունների» եւ «պախանների» ծառայություններից ընտրությունների ժամանակ հրաժարում, հանրային համաձայնություն ապահովող հասարակական ինստիտուտների ստեղծում, քանի որ ընդդիմություն, որպես այդպիսին չկա` այդ համաձայնությունը ձեւավորելու համար:

Իսկապես` նոր Սահմանադրությունն, ախր, հակասության մեջ է օլիգարխների շահերի հետ, մենք բազմիցս ականատես ենք եղել եւ հիմա նույնպես այդպիսի փաստեր կան, որ խորհրդարանն ընդունում է օլիգարխների շահերն արտացոլող օրենքներ, բա ինչպե՞ս պետք է գործի խորհրդարանական հանրապետությունը, որտեղ ըստ գաղափարի ենթադրվում է, որ իրադրության տերը պետք է լինեն կուսակցությունները: Այսինքն ի՞նչ, կամ օլիգարխների՞ց պետք է կազմված լինեն այդ կուսակցությունները, ինչպես որ իշխող կուսակցության պարագայում է հիմա, կամ... տնտեսության վերաձեւո՞ւմ է տեղի ունենալու: Թե՞ ավելի տրիվիալ մի բան է կատարվելու` օլիգարխների մի խմբին կամաց-կամաց փոխարինելու է մի այլ` ավելի նեղ խումբ, իսկ որոշ օլիգարխներ ընդհանրապես ունեզրկվելու են` ունեցածը փոխանցելով ուրիշներին: Որովհետեւ մի բան է գեղեցիկ խոսքը թղթի վրա, մի ուրիշ բան տնտեսության լծակների տիրապետումը, որոնց տերերն են ամեն բան թելադրում, անգամ դատական եւ արդարադատության պատկերը, քանի որ արդարադատությունն ընդհանրապես վճարովի է` մի մասը հենց որպես վճարովի ծառայություն, մյուս մասը` ստվերային, կամ ինչպես սիրում են ասել` կոռուպցիոն: Անվճարունակ քաղաքացին ընդհանրապես չի կարող ոչ դատական արդարադատություն, ոչ որակյալ փաստաբանական ծառայություն ակնկալել, այդ դեպքում ինչպե՞ս պետք է նախագահի ասած սոցիալական համերաշխությունը տեղի ունենա: Կամ` ինչպե՞ս պիտի թղթի վրա ծվարած նոր Սահմանադրությունը կոռուպցիա թույլ չտա կամ ընդհանրապես իրականություն դառնի կուսակցական-անօլիգարխիա կառավարումը, անհասկանալի է:

Ընդհանրապես զանազան թղթերի, ճանապարհային քարտեզների, հուշագրերի արժեքը գրոշ է, եթե մեր կյանքի կազմակերպման սկզբունքը չի փոխվելու:Եթե ոչ ոք չի կանգնեցնելու այս սարսափելի բեւեռացումը, որն է՛լ ավելի խորանալու միտումներ է ցույց տալիս ապագայում:

Եթե ոչ ոք չի կանգնեցնելու կնոջը երեսուն հարվածով սպանողին, կամ հանուն «նամուսի» ականջ կտրողին, իսկ կանգնեցնելը ոչ միայն իրավապահական գործառույթ է, այլ մթնոլորտ ու կենցաղավարություն փոխելու համար անհրաժեշտ պայմանների եւ արժեհամակարգի ստեղծում: Եթե ոչ ոք չի բռնելու մեծաշնորհյալների ձեռքը, որոնք խեղդում են հանրությանն իրենց թանկ գներով` Հայաստանից մեկնողների հաշվին երկուսուկես անգամ թանկ ավիատոմսի արժեք յուրացնելով, կրկնակի թանկ բենզին ծախելով բնակչությանը, զանազան հսկա «մոլերով» Երեւանում իր բնի մեջ խեղդելով մանրավաճառին, բանանը միջին գնի կրկնակիով սաղացնելով հայ սպառողի վրա եւ այլն:

Կամ ոնց պետք է 700 մլն դրամ հայտարարագրած պատգամավորը (իսկ այդպիսիք ՀՀԿ , ինչու չէ` ԲՀԿ խմբակցությունների կազմում քիչ չեն, որոնք կթափանցեն նաեւ նոր խորհրդարան), ընդունի 70 հազար դրամ ստացողիս հարկավոր օրենքներ:

Որքան էլ Սերժ Սարգսյանը հիասթափեցնի ստատուս քվոյից զոհ մարդկանց, թե` էական փոփոխությունները շարունակվելու են, դրանք լինելու են փուլ առ փուլ, բայց կայուն ու հետեւողական իրականացված, շարժընթացներն ուրիշ բան են ասում: Մանավանդ եթե հետ դառնանք նախորդ ելույթների խոստումներին ու ներկա վիճակին, ապա հասկանալի է դառնում, որ համակարգի ներսի դիմադրությունը եթե ութ տարում չի կոտրվել, երկու- երեք տարում ավելի դժվար կլինի կոտրել, մանավանդ` կամա թե ակամա, ամեն ինչ արդեն նախընտրական **ստարտի** մեջ է:

Վերջում եւս մի շատ կարեւոր նկատառում:

Մամուլը վերջին շրջանում լցված էր ՀՀԿ-ՀՅԴ համագործակցության առթիվ հուշագրի, պաշտոնների նշանակման վերաբերյալ սպասումով: Ուղղակի սա սպորտի ձեւ է դարձել, որով լրատվամիջոցները հաճույքով զբաղվում են, մարդ են նշանակում պաշտոնի-ազատում են, ու անգամ այստեղ դեր չունեն ՀՀԿ խմբակցության ղեկավար **Վահրամ Բաղդասարյանի** մասնանշած տեխնիկական խնդիրների լուծմանը սպասելը. այն է` եթե լրագրողն օրենսդրություն իմանա, չի պահանջի անմիջապես նշանակում, կամ դրա մասին վստահ տոնով լուր չի գրի` իբր իր «հավաստի աղբյուրից», այլ կմտածի, որ օրենքով նախ պետք է տարածքային կառավարման նախարարությունն առանձնացնել, ինչը բավական ժամանակատար գործողություն է, իսկ առանց այդ անելու անուն հրապարակելն օրենքի խախտում է: Ինչն ի դեպ տեղի ունեցավ երեկ` կառավարությունն առաջարկեց համապատասխան օրենքի փոփոխությամբ տարանջատել արտակարգ իրավիճակների եւ տարածքային կառավարման ոլորտները, իսկ այսօր դա արդեն քվեարկությամբ կընդունի ԱԺ արտահերթ նիստը: Այ հիմա արդեն ոչինչ չի խանգարի նշանակումներ անելուն ու հետն էլ ՀՀԿ-ՀՅԴ համագործակցության հուշագիր ստորագրելուն, ինչին նախագահն ուղիղ խոսքով իր ելույթում չանդրադարձավ:

Եւ վերջում կուզենք մեր խոսքը հասանելի դարձնել նախագահին` նկատի առնելով նրա ելույթում առկա քննադատական մտածելակերպ ունեցող մարդկանց արձագանքելու դրույթը, ըստ այդմ` մեր եւս բնական մտահոգությունը հայտնելու իրավունքը. եթե ուզում եք պատմության մեջ մնալ` իշխանությունը ոչ թե հանձնեք մոտիկներին, այլ իսկապես համակարգային փոփոխություններ կատարեք ի վերջո գործնականում, Սահմանադրության փոփոխություններով ենթադրվելիք «բաց, ճկուն ու ներքուստ բարդ համակարգը» չգիտենք ներառո՞ւմ է արդյոք մեր եւ, վստահ ենք, հասարակության մեծ մասի այս բաղձանքը իրապես: Ազատվեք ներկա օլիգարխներին իշխանության մեջ ներգրավելուց ու այնպես արեք, որ ժողովուրդը շնչի: Դա դժվար է, գիտենք, մանավանդ որ զանազան քծնողները եւ իրենց նյութական սպասելիքը այդ միջոցով առարկայացնողներն այլ բան են շշնջում Ձեր ականջին: Անգամ հասկանում ենք, որ դա ռեալ վտանգներ է պարունակում իր մեջ: Բայց ուրիշ մեկը, որից դա սպասենք, այս պահին չկա, հանգամանքներն այդպես են դասավորվել, Դուք եք, որ ունեք այդ հնարավորությունները նախ իշխանության լծակների տիրապետմամբ, ապա նաեւ հաշվարկելու, նախագծելու ունակությամբ: Հայերիս պատմության մեջ միշտ էլ եղել են խիզախողներ, որոնք իրենց մտերիմների աչքի գրողը դառնալով` այնուամենայնիվ նեղ վիճակում, թեկուզ կարճ ժամանակի մեջ, լուծել են հայերիս խնդիրները,օրինակները պատմության մեջ են, դրանցից մեկն էլ Նժդեհի սխրանքն է: Այլապես դժվար կլինի բազմիցս խաբված հանրության շերտերին դուրս բերել անտարբերությունից եւ **ապատիայից,** որոնց առկայության մասին գոնե Ձեր ելույթի մեջ: Դուք եք արձանագրել եւ լուծել խնդիրները, դիմակայել հիմա արդեն տասնապատկված մարտահրավերներին:

Հայաստանը օլիգարխների երկիրը չէ՛: Կամ ավելի հասկանալի դարձնեմ` Հայաստանը միայն օլիգարխների երկի՛րը չէ: Թե չէ` այն ինչ մենք ենք գրում, Դուք Ձեր ելույթում ավելի մանրամասն ու պատկերավոր եք նշել, բոլոր խնդիրներն եք ձեւակերպել համարյա, բայց չեք նշել կոնկրետ հասցեատերերին, որոնցից սկսելու եք իրականացնել այդ բոլորը, կամ` նշել եք ենթատեքստով եւ անուղղակի: Տաղանդավոր մարդիկ էլ մեր շուրջը շատ կան, նրանք ավելի շատ են հենց կուսակցություններից դուրս, ուղղակի նրանց նկատել է պետք, եւ ոչ թե դոփել նույն շրջանակի մեջ: Թե չէ` բոլոր խնդիրները եւ մարտահրավերները հրաշալի եք ձեւակերպել:

## Իմ բանջարը քո հանճարին վնաս չէ, եղբայր

**Հայտնի է, որ փետրվարի 21-ին պետք է տեղի ունենա «Հայկական վերածնունդ« միավորման հիմնադիր համագումարը: Բայց այս ընթացքում սփյուռքահայ նույնանուն մի կազմակերպություն է հայտնվել, որի մասին մինչ այդ ոչինչ հայտնի չէր գոնե լայն հանրությանը: Այս կազմակերպության Փարիզի հանձնախմբից գրում են, թե պահանջում են «Օրինաց երկրի» ղեկավարությունից, որն իրենց խոսքով ստեղծել է «Հայկական վերածնունդը», չդիպչել իրենց անվանը եւ մի շարք վիրավորական ձեւակերպումներ են անում ձեռնարկի հեղինակների հասցեին: Այ քեզ բան: Բայց կարծեմ Սփյուռքի որեւէ կազմակերպություն Հայաստանի ներսում ստեղծված կառույցի հետ որեւէ մրցակցության եզր պիտի չունենա, այդ թվում` անվան, այնքան որ տարբեր պետք է լինեն խնդիրները եւ դրանց հասցեատերերը: Այլապես ուզած բառը որ դրվի ուզած կազմակերպության վրա, կարող է պարզվել, որ այդ անունով արդեն կոչվում են 10 միլիոնանոց հայկական Սփյուռքի ազգային, մշակութային, տեխնիկական, ոսկերչական, բանվորական, խոհարարական եւ այլ հայտնի ու անհայտ ընկերակցությունները: Այնպես որ զարմանքից բացի` այլ զգացմունք չունենք նաեւ մեր խմբագրության ստացած այս նամակի առնչությամբ, ինչին , ի դեպ, նույն ոգով արձագանքել են «Հայկական վերածնունդի» գրասենյակից: Բայց այնուամենայնիվ` իր նամակից օգուտ քաղեց Սփյուռքի «Հայկական վերածնունդը», նրա մասին իմացան հայրենիքում, թեեւ լրագրողական հանրությունն, այնուամենայնիվ, նրա մասին լսել էր սահմանադրական փոփոխությունների դեմ պայքարող «Նոր Հայաստանին» զորակցելու առիթով:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Գրողի ծոցը, բայց ո՞ւմ



Տեսա՞ք, թե ինչ եղավ Թուրքիայում: Նկատի չունեմ՝ ռուսական Առաջին ալիքով, այնտեղ Թուրքիա էլ չկա, Արարատն էլ՝ մերն է, բայց մեզ մոտ էլ ռուսական իսկայական բանակ է՝ գերհզոր ռազմական տեխնիկայով, այդ գնով է Արարատը մերը, Արարատը մե՞րն է՝ այդ գնով...:

Նկատի ունեմ բոլորովին ուրիշ բան, այն, որ Արթուր Ա.-ն, Արամ Է.-ն եւ Սերժ Բ.-ն կալանավորվել են թուրքական ոստիկանության կողմից եւ մեղադրվում են Ստամբուլում հայտնի ոսկերիչ 87-ամյա Պետրոս Դեմիրջիի տան վրա հարձակվելու, կողոպտելու, Դեմիրջիի սպանության եւ նրա 79-ամյա կնոջը ծանր մարմնական վնասվածքներ հասցնելու մեջ: Պետրոս Դեմիրջին եւ նրա կինը հայեր են, նրանց տան վրա հարձակվելու մեջ մեղադրվողները՝ նաեւ ՀՀ քաղաքացիներ են (այս տեղեկատվությունը հաստատել է ՀՀ ԱԳՆ-ն): Սրանից հետո Մեջլիսի պատգամավոր Կարո Փայլանը հայտարարել է, որ հայաստանցիները Թուրքիայում զբաղվում են մարմնավաճառությամբ, կողոպուտով եւ թմրանյութերի վաճառքով, եւ թուրքերը՝ որպես հասարակություն, պետք է քննարկեն հայաստանցիների հարցը: Կարո Փայլանը եւս հայ է:

Բոլորովին վերջերս էլ ԵԽԽՎ-ում Թուրքիայի պատվիրակությունը ողջ կազմով կողմ քվեարկեց հակահայկական երկու զեկույցներին եւ այդ պատվիրակության անդամներից էր Մարգար Եսայանը: Նա նույնպես հայ է:

Նույն օրերին Հայաստանի նախագահը բարձրաստիճան պաշտոնյաների առջեւ ելույթ ունեցավ, որտեղ նշեց, թե եկեք պատկերացնենք, որ Թուրքիայի եւ Ադրբեջանի տեղում անդունդ է, այսինքն Թուրքիան եւ Ադրբեջանը չկան: Եկեք, բայց դրանից առաջ եկեք հասկանանք, թե կոնկրետ Թուրքիայի տեղում անդունդ տեսնելով մենք ո՞ւմ ենք ուղարկում գրողի ծոցը, որտեղ, հիշեցնեմ, վաղուց են ուղարկված հայ-թուրքական զույգ արձանագրությունները:

Պետրոս Դեմիրջիին ու նրա այրուն՝ նախ եւ առաջ: Ընդ որում խոսքը ոչ թե այս՝ վստահաբար լուսավոր մարդկանց մասին է, այլ Թուրքիայում ապրող-գտնվող հայերի՝ «Դեմիրջի» խմբի մասին: Խոսքը այն հայերի մասին է, ովքեր մշտապես ապրել են Թուրքիայում (անգամ այն ժամանակներում, երբ այդ տարածքում Թուրքիան չէր), եւ կամ հերքում են իրենց հայ լինելը, կամ էլ աշխատում են չխոսել այդ մասին: Նրանք չեն խառնվում քաղաքականությանը, չեն արծարծում, շոշափում ազգային հարցեր, փոխարենը որպես կանոն արհեստավոր են, ընդ որում՝ անվնաս, եւ հանգիստ ու խաղաղ իրենց գործն են անում արդեն դարեր, սերնդեսերունդ:

Ապա Կարո Փայլանին, բայց ոչ թե մեջլիսականին անձամբ, այլ Թուրքիայում ապրող-գտնվող հայերի «Կարո Փայլան» խմբին: Սրանք այն հայերն են, ովքեր պատահում է, որ հերքում են իրենց ազգային պատկանելիությունը, սակայն որպես կանոն այն օգտագործում են՝ իրենց նպատակների համար, որոնք քաղաքական են: Հասկանալի է, որ «Փայլանները» քաղաքականապես ակտիվ են, որպես կանոն քրդամետ կուսակցությունների ներկայացուցիչներ, ժամանակ առ ժամանակ հայտնվում են Մեջլիսում, որտեղ երբեմն-երբեմն խոսում են Հայկական հարցի մասին, բայց ոչ թե այդ հարցը մեկընդմիշտ լուծված տեսնելու նպատակով, այլ՝ թուրքական պետության գործող իշխանությանը հերթական անգամ քննադատելու համար:

Թուրքիայի տեղում պատկերացրեք անդունդ է ասելով՝ մենք գրողի ծոցն ենք ուղարկում նաեւ «Մարգար Եսայան» խմբին: Սրանք այդ երկրում ապրող այն հայերն են, ովքեր ոչ մի դեպքում չեն հերքում իրենց հայ լինելը, քանի որ դա իրենց պետք է թուրքական պետության հանդուրժողականությունը ցույց տալու համար: Եւ ուրեմն հասկանալի է, որ «Մարգարեսայանները» քաղաքականապես ակտիվ են, իշխող կուսակցության ներկայացուցիչներ են եւ լուծում են գեթ մեկ խնդիր՝ ցույց տալ, թե որքան հանդուրժող է Թուրքիան հատկապես հայերի նկատմամբ, որոնց, ասում են, ցեղասպանել է:

Եւ վերջապես, մենք գրողի ծոցն ենք ուղարկում Արամ Է.-ին, Արթուր Ա.-ին եւ Սերժ Բ.-ին, պայմանականորեն այս խումբն անվանենք՝ ԱՍԱ (Արամ, Սերժ, Արթուր): Այս խմբում Թուրքիայում գտնվող, գուցե նաեւ ապրող այն հայերն են, ովքեր ոչ թե չեն հերքում իրենց ազգային պատկանելիությունը, այլեւ դրա հնարավորությունը չունեն, քանի որ նոր-նոր են այնտեղ գնացել Հայաստանից, եւ «ինչպես բոլորը»՝ զբաղվում են մարմնավաճառությամբ, կողոպուտով եւ թմրանյութերի վաճառքով: Ընդ որում, այս վերջին խումբը հատկապես երկկողմանի գրողի ծոցն ուղարկված է, քանի որ երբ պարզ դարձավ, որ Թուրքիայում ձերբակալվել են Հայաստանի քաղաքացիներ, մեր ԱԳՆ-ն, լուրը հաստատելուց հետո, շեշտեց, որ ձերբակալվածներին օգնություն տրամադրել հնարավոր չէ՝ Թուրքիայի հետ դիվանագիտական կամ հյուպատոսական կապեր չունենալու պատճառով:

Հիմա, երբ ասում են, թե Թուրքիայի տեղում անդունդ պատկերացրեք եւ եթե պատկերացնենք, ապա ստացվում է, որ «Դեմիրջիները», «Փայլանները», «Եսայանները» եւ ԱՍԱ՝ հայաստանցիները անդունդում են, այլեւս չկան, գրողի ծոցն են: Իսկ եթե այդպես է, ապա էլ ո՞ւմ հետ, ո՞ւմ օգնությամբ մենք պետք է Հայկական հարցը շարունակ բարձրացված պահենք Թուրքիայում, եթե անգամ այդ հարցը բարձրացվում է ամենեւին էլ ոչ հայրենասիրական կամ ազգասիրական նկրտումներով: Էլ ո՞ւմ միջոցով պետք է ցույց տանք թուրքերին, որ իրականում հայերս ոչ թե ստախոս պատմակեղծարարներ ենք, կամ մարմնավաճառ կողոպտիչներ, այլ՝ անվնաս ոսկերիչներ, ճարտարապետներ, կոշկակարներ, դերձակներ: Ուրեմն գրողի ծո՞ցը նետենք այս ամենը եւ այս բոլորին...Իսկ գուցե դրանով մենք անդունդն ենք նետում նաեւ Ցեղասպանությա՞ն հարցը...

Ինչ վերաբերում է ԱՍԱ՝ հայաստանցիներին, ապա իմ կարծիքով սա մեր ամոթն է, բայց ոչ թե, որովհետեւ Թուրքիայում հայաստանցիները զվաղված են մարմնավաճառությամբ, կողոպուտով եւ թմրանյութերի վաճառքով, այլ որովհետեւ Թուրքիայում հայաստանցիների հարցը պետք է քննարկի թուրք հասարակությունը, ոչ թե մենք:

Ուրեմն Թուրքիան անդունդ չէ, քանի որ մենք այնտեղ անելիք ունենք եւ քանի դեռ մենք այնտեղ ենք, ճիշտ է մեկս հարգված ոսկերիչ է, մեկս՝ հայրենակցի տունը թալանող եւ նրան սպանող, մյուսս՝ իշխանական պատգամավոր, մեկ ուրիշն էլ՝ թուրք հասարակությանը հայաստանցիների հարցը քննարկելու կոչի հեղինակ: Շատերն էլ՝ սեփական ազգության մասին մոռացած: Չօգնել այս մարդկանց եւ չօգտագործել նրանց հնարավորությունները, նշանակում է թողնել նրանց անդունդում, իսկ ավելի ճիշտ՝ հրաժարվել դուրս գալ անդունդից՝ բոլորով միասին: Հրաժարվել Թուրքիայում ապրող-գտնվող հայերին՝ դարձնել միասին...

# Պատասխանատվության ժառանգության մասին

## *Մի քիչ էլ՝ պետության*

**Անցած շաբաթավերջին առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը վերադարձավ Երեւան: Ինչպես գիտենք, նա հունվարի կեսերին մեկնել էր ԱՄՆ՝ վիրահատության, այն անցել է բարեհաջող, գիտենք նաեւ, եւ սա պաշտոնապես գիտենք, որ առաջին նախագահի կյանքին եւ աշխատունակությանը առաջիկա քսան տարիներին որեւէ վտանգ չի սպառնում:**

**Տեր-Պետրոսյանի վերադարձի հաջորդ օրը՝ փետրվարի երրորդ երկուշաբթի օրը, ԱՄՆ-ում ավանդաբար նշվում է Նախագահի օրը: Ի սկզբանե այդ օրը ԱՄՆ-ում նշվել է փետրվարի 22-ին՝ ԱՄՆ առաջին նախագահ Ջորջ Վաշինգտոնի ծննդյան օրը եւ այդպես էլ կոչվել է՝ ԱՄՆ նախագահի ծննդյան օր: Հետո, երբ ԱՄՆ-ը շատ այլ նախագահներ է ունեցել, ովքեր գուցե եւ խանդել են առաջին նախագահին եւ իրենց մի տեսակ պարտավորված չեն զգացել տոնել նրա ծննդյան օրը, որոշվել է ընտրել որեւէ չեզոք օր՝ նշելու, ոչ թե ԱՄՆ նախագահի ծննդյան օրը, այլ ուղղակի՝ ԱՄՆ նախագահի օրը: Որոշվել է, որ այդ օրը պետք է լինի փետրվարի երրորդ երկուշաբթին: Այդ օրը Սպիտակ տան գործող տերը հրավիրում է ԱՄՆ բոլոր (այդ պահին կենդանի) նախագահներին եւ նրանք ճաշում են, զրուցում, կատակում, գուցե եւ խմում, հնարավոր է՝ ինչ-որ խաղեր խաղում, կամ ձի քշում, սաքսոֆոն նվագում....Օրինակ ԱՄՆ նախագահներից Ջորջ Բուշ կրտսերը սիրում է ձի քշել, Բիլ Քլինթոնը հրաշալի սաքսոֆոն է նվագում: Մի խոսքով... այդ օրը Ամերիկան ցույց է տալիս աշխարհին եւ ամերիկացիներին, գուցե՝ ամերիկացիներին եւ աշխարհին, որ իր նախագահները միասին են՝ հանուն երկրի եւ հանուն ամերիկացիների:**

**Կոնկրետ, անցած երկուշաբթի 44-րդ նախագահ Օբաման հյուրընկալել էր (չնայած այս պարագայում հյուրընկալել բառը երեւի տեղին չէ) ԱՄՆ նախագահներ Ջորջ Բուշ կրտսերին, Բիլ Քլինթոնին, Ջորջ Բուշ ավագին եւ Ջիմի Քարտերին: Նրանք բոլորով լուսանկարվել են, լուսանկարահանվելիս էլ՝ ժպտացել են. ԱՄՆ-ում բոլորն են ժպտում, հատկապես՝ նախագահները:**

**Ափսոս, որ մեր առաջին նախագահը փետրվարի երրորդ երկուշաբթի օրն արդեն Միացյալ Նահանգներում չէր: Եթե լիներ, ապա կտեսներ, թե ինչպե՞ս եւ ամենակարեւորը ինչո՞ւ է ԱՄՆ-ը նշում Նախագահի օրը: Գուցե Տեր-Պետրոսյանը ԱՄՆ նախագահներից սովորելու բան չունի՞, հնարավոր է, կամ մի՞թե նա ԱՄՆ-էր գնացել ինչ-որ բան սովորելու, կամ արդյո՞ք նախագահին, այն էլ՝ Հայաստանի, այն էլ՝ Հայաստանի առաջին նախագահին պատշաճում է ինչ-որ բան սովորելը, կամ մի՞թե Հայաստանի նախագահներից միայն առաջինն է, որ պետք է դեռ բան սովորի: Չէ՞ որ սովորելու պարագայում մեր նախագահներն էլ իրենց նախորդներին չեն մեղադրի, ոչ թե որովհետեւ մեղադրելու բան չկա, այլ քանի որ գործող նախագահին չի պատշաճում մեղադրել իր նախորդին: Մինչդեռ մեզանում, օրինակ՝ Քոչարյանի կարծիքով, Հայաստանում ընտրակեղծարարության մեղավորը Տեր-Պետրոսյանն է, որի օրոք էլ հենց հիմք է դրվել այս չարիքի: Սերժ Սարգսյանի կարծիքով՝ Տեր-Պետրոսյանն է ու Քոչարյանը, որոնց օրոք սկիզբ է դրվել եւ զարգացվել է այս չարիքը, իսկ Տեր-Պետրոսյանի կարծիքով՝ մեղավոր են բոլորը, բացի իրենից եւ ոչ միայն ընտրակեղծարարության մեջ:**

**Սա պատասխանատվության ժառանգությունից խուսափելու ձեւ է իրականում, ընդ որում՝ հնացած, մի տեսակ անտրամաբանական: Բանն այն է, որ եթե անգամ Տեր-Պետրոսյանը հիմնադրել է Հայաստանում ընտրակեղծարարությունը, ապա Քոչարյանը հանգիստ կարող էր բացառել այն, չի՞ կարողացել, կամ չի՞ ցանկացել, լավ, ուրեմն դա կարող էր բացառել Սերժ Սարգսյանը: Եւ ուրեմն ո՞վ է մեղավոր, որ այսօր Հայաստանում ընտրակեղծարարություն կա, օրինակ՝ ընտրակեղծարարություն, թե չէ բոլորս էլ գիտենք, որ Հայաստանում շատ բան կա: Կամ ո՞վ, նախագահներից ո՞ր մեկը մեղավոր չէ, որ Հայաստանում ընտրությունները կեղծվել ու կեղծվում են: Ո՞վ մեղավոր չէ, որ Հայաստանից գնացել են ու գնում են, որ տնտեսությունը չի զարգացել եւ չի զարգանում, որ մարդիկ լավ չեն ապրել եւ լավ չեն ապրում: Հիմա ավելի լա՞վ են ապրում, գուցե, բայց ո՞վ ասաց, որ երեկվանից ավելի լավ ապրելը լավ ապրել է:**

**Ու այսքանից հետո մեր նախագահները խոսելու բան չունե՞ն իրար հետ, իրար դեմ՝ որքան ուզես, բայց իրար հետ չունե՞ն, դեմ առ դեմ չունե՞ն, անկեղծ, այնքան, որքան, որ իրենք կարողանում են լինել անկեղծ: Իսկ չունե՞ն մի արժեք, հանուն որի անգամ իրենք կարող են, պետք է որ իրար հետ խոսեն եւ դա հաճախ անեն, տարին մեկ անգամ՝ Նախագահի օրը, բայց մե՛ր Նախագահի օրը: Ընդ որում պարտադիր չէ, որ նախագահները ժպտան, սաքսոֆոն նվագեն, ձի քշեն, ենթադրենք՝ շախմատ խաղան, կամ ջրային եւ կամ ձնային սպորտով զբաղվել (Քոչարյանը՝ բալետ կանի), կամ բանասիրության հարցերից խոսեն (Քոչարյանը կլսի), կամ որսորդությունից խոսեն (Տեր-Պետրոսյանն եւ Սարգսյանը կձանձրանան): Պարտադիր չէ, որ հենց Բաղրամյան 26-ում հանդիպեն. կարելի է անգամ, որ այն լինի ապրիլի 24-ին, որպեսզի գոնե այդ օրը մեր բոլոր նախագահները միասին բարձրանան Ծիծեռնակաբերդ՝ թեկուզ ավանդույթի ուժով, թեկուզ պարտադրված, կարեւորը՝ միասին եւ, այո, ինչպես ամերիկացիները՝ ցույց տալու համար: (*)**

**Մի՞թե կարծում եք, թե ԱՄՆ նախագահները սիրում են իրար: Ամենեւին, նրանք պարզապես սիրում են Ամերիկան, որը մի քանի հարյուր տարվա անկախ պետականության փորձ ունի, ինչի ընթացքում հասկացել է, որ նախկին նախագահները երբեք մեղավոր չեն լինում, քանի որ բոլոր նախագահներն էլ դառնում են նախկին:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

*(*) Հիշեցման կարգով նշենք, որ նախորդ տարի, մայիսի 9-ին, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին հաջողվեց ի մի բերել ՀՀ եւ ԼՂՀ նախագահներին, բացի ՀՀ առաջին նախագահից: Խմբ.:*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Անշարժ գույքի գները, ըստ էության, նվազել են

## *Հայաստանի անշարժ գույքի շուկան 2015-ին*

***Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2015-ին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում կատարվել է 50023 օտարման գործարք, որի գերակշիռ մասը՝ 72,8 տոկոսը առուվաճառքի գործարքներն են: 2014-ի համեմատ օտարման գործարքների քանակը նվազել է 4,3 տոկոսով: Այսինքն, շուկան, ըստ էության պասիվացել է: Այժմ, թե անցյալ տարի ինչպե՞ս են փոխվել բնակարանների եւ անհատական տների գները Երեւանում եւ մարզերում, ի՞նչ է տեղի ունեցել հողի շուկայում, հիպոթեքային վարկավորմամբ ձեռքբերումները ինչպե՞ս են փոխվել:***

### Երեւանում բնակարանների եւ անհատական տների գները դրամով արտահայտված

Բնականաբար, անշարժ գույքի գործարքների մեծ մասը բնակարաններին է առնչվում ու հիմնականում Երեւանում: Այսպես՝ օտարման գործարքների քանակի 36,1 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում: Մայրաքաղաքում 13044 առուվաճառքի գործարքների 65,4 տոկոսն էլ բնակարաններինն է: 2014-ի համեմատ, բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում 2015-ին նվազել է 15,2 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում 2015-ին 2014-ի համեմատ աճել են ընդամենը 0,2 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|
| | 2014թ. | 2015թ. |
| Կենտրոն | 428000 | 428000 |
| Արաբկիր | 356600 | 356600 |
| Քանաքեռ-Զեյթուն | 282700 | 282700 |
| Նոր-Նորք | 252500 | 253300 |
| Ավան | 260200 | 260700 |
| Էրեբունի | 250800 | 252000 |
| Շենգավիթ | 256300 | 257150 |
| Դավթաշեն | 275200 | 275900 |
| Աջափնյակ | 249500 | 250100 |
| Մալաթիա-Սեբաստիա | 242200 | 243300 |
| Նուբարաշեն | 155600 | 156750 |
| Միջինը Երեւանում | 273600 | 274200 |

2015-ին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 4367 գործարք, որից 13334-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2014-ի համեմատ նվազել է 8,2 տոկոսով:

Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2015-ին 2014-ի համեմատ մայրաքաղաքում մնացել են անփոփոխ: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|
| | 2014թ. | 2015թ. |
| Կենտրոն | 476100 | 476100 |
| Արաբկիր | 383000 | 383000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 295000 | 295000 |
| Նորք-Մարաշ | 319200 | 319200 |
| Ավան | 270500 | 270500 |
| Էրեբունի | 239700 | 239750 |
| Շենգավիթ | 255000 | 255000 |
| Դավթաշեն | 276000 | 276000 |
| Աջափնյակ | 250050 | 250050 |
| Մալաթիա-Սեբաստիա | 238000 | 238000 |
| Նուբարաշեն | 150700 | 150800 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր-Նորքից) | 286700 | 286700 |

Այսպիսով, ինչպես երեւում է վերոնշյալ երկու աղյուսակներից, մայրաքաղաքում անցյալ տարի բնակարանների գները չնչին աճ են ունեցել, իսկ անհատական տներինը՝ մնացել անփոփոխ: Դրամով արտահայտված այս ցուցանիշները թերեւս կարելի է ընդունել որպես շուկայական իրական գներ, նկատի ունենալով, որ կադաստրի պետական կոմիտեում միջինացնում են արդեն կատարված գործարքների գները: Սակայն, հարկ է նկատի ունենալ, որ անշարժ գույքի գործարքները հիմնականում կատարվում են դոլարային համարժեքով: Այսինքն, եթե 2014-ին օրինակ Կենտրոնում անհատական տան 1 քմ 476100 դրամ գինը դոլարային արտահայտությամբ մոտ 1150 դոլար էր, ապա արդեն 2015-ին, նկատի ունենալով դրամի մոտ 15 տոկոսով արժեզրկումը՝ 1000 դոլարից էլ ցածր: Հետեւաբար, հարկ է արձանագրել, որ անշարժ գույքի գները մայրաքաղաքում եւ ընդհանրապես Հայաստանում իրականում 2015-ին նվազել են:

### Որտե՞ղ են ամենաթանկ տներն ու բնակարանները Երեւանից դուրս

Մարզերում, բացառությամբ Երեւանը, 2015-ին վաճառվել են 3951 բնակարաններ, որոնց քանակը 2014-ի համեմատ նվազել է 14,8 տոկոսով, իսկ միջին գները՝ աճել են 0,2 տոկոսով (ինչպես արդեն նշեցինք՝ դրամով արտահայտված): Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները 2015-ին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 292 հազար դրամ, Աբովյանում 1 քմ գինը 155 հազար դրամ, Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 154 հազար դրամ: Ապա գալիս են Նոր Հաճնը՝ 128 հազար դրամ, Գորիսը՝ 122 հազար դրամ, Իջեւանը՝ 118 հազար դրամ, Աշտարակը՝ 116 հազար դրամ եւ Մասիսը՝ 115 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

Մարզերում անցյալ տարի վաճառվել են 3033 անհատական տներ՝ 20,9 տոկոսով քիչ նախորդ տարվա համեմատ: Միջինացված՝ 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների միջին գները մարզերում 2015-ին 2014-ի համեմատ մնացել են անփոփոխ: Ամենաթանկ անհատական տները դարձյալ Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է որտեղ 1 քմ-ն կազմել է 157 հազար դրամ, երրորդը Վաղարշապատն է 1 քմ-ն 153 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 136 հազար դրամ, Գորիսը՝ 130 հազար դրամ, Նոր Հաճնը՝ 129 հազար դրամ, Իջեւանը 123 հազար դրամ, Եղվարդը՝ 116 հազար դրամ 1 քմ դիմաց:

### Հողի առուվաճառքի գործարքներն ավելացել են, հիպոթեքային վարկավորման ծավալները՝ նվազել

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2015-ին 2014-ի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8,9 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ 1,7 տոկոսով:

Ինչ մնում է հիպոթեքային վարկերով գույքի ձեռքբերմանը, ապա անցյալ տարի արձանագրվել են հիփոթեքային գրավադրման 1461 գործարքներ, որից 1024-ը՝ Երեւանում: Հիփոթեքային գրավադրման գործարքներից 79,1 տոկոսն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 15 տոկոսը՝ անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգետնակների եւ հողերի նկատմամբ: 2014-ի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 23,2 տոկոսով, ընդ որում Երեւանում՝ 19,1 տոկոսով, իսկ մարզերում՝ 31,3 տոկոսով:

### Անշարժ գույքի շուկան կանգային վիճակում է

Այսպիսով, ի՞նչ միտումներ են գրանցվել 2015-ին անշարժ գույքի շուկայում: Առաջին՝ նվազել են բոլոր գործարքները, բացառությամբ՝ հողի առուվաճառքի: Երկրորդ՝ նվազել են իրական գները: Ամենայն հավանականությամբ, առաջիկայում կացությունը նկատելի փոփոխություններ չի կրի: Չնայած մայրաքաղաքում երկու խոշոր քաղաքաշինական ծրագրեր են նախատեսվում այս տարի, բայց դա լուրջ տեղաշարժերի չի հանգեցնի: Հայաստանի անշարժ գույքի շուկան սկսեց աշխուժանալ 2003-ից՝ երեք տարվա երկնիշ տնտեսական աճի եւ մասնավորապես շինարարության բուռն զարգացման արդյունքում: 2009-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը լուրջ հարված հասցրեց այս ոլորտին, իսկ դրան հաջորդող ցածր տնտեսական աճի տարիները բավարար չեղան անշարժ գույքի շուկայի վրա նկատելի ազդեցություն գործելու համար: Իրականությունն այն է, որ անշարժ գույքի շուկան առաջինն է բացասաբար արձագանքում քաղաքական եւ տնտեսական ցնցումներին, իսկ աշխուժացումը տեղի է ունենում միայն տարիներ տեւող բարձր տնտեսական աճից հետո:

---

## ՀԱՄԱՌՈՏ

### Մարտի 8-ի կապակցությամբ 4 օրյա հանգիստ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը, երեկ կառավարությունը որոշում կայացրեց 2016 թվականի մարտի 7-ի աշխատանքային օրը տեղափոխել 2016 թվականի մարտի 12-ը՝ շաբաթ օրը: Հարցը ներկայացնող կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար **Դավիթ Հարությունյանը** նշեց, որ այսպիսով, մարտի 8-ի կապակցությամբ 4 օր կհանգստանանք:

### Մարզահամերգային համալիրի կառավարումը՝ պետգույքի վարչությանը

Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի կառավարման լիազորությունները պաշտպանության նախարարությունից փոխանցվեցին պետական գույքի կառավարման վարչությանը: Միաժամանակ, համալիրին պահուստային ֆոնդից հատկացվեց 261 մլն դրամ: Հարցին անդրադառնալով վարչապետ **Հովիկ Աբրահամյանը** նշել է, որ պետք է ունենալ համալիրի կառավարման հստակ ծրագիր եւ լինեն այնպիսի մարդիկ, որոնք կկարողանան «աշխատեցնել մարզահամերգային համալիրը, որպեսզի այլ նպատակներով այն չծառայի»:

### ԱՊՊԱ՝ առանց ապահովագրական գործակալներին սպասելու

Ավտոտրանսպորտային պատահարների տվյալների հավաքման գործընթացը պարզեցնելու եւ խցանումները նվազեցնելու նպատակով, կառավարության որոշմամբ պատահարի մասնակիցների համար ստեղծվել է առանց ապահովագրական ընկերությունների համաձայնությունը ստանալու համաձայնեցված հայտարարագիր լրացնելու եւ դրանից հետո պատահարի վայրից հեռանալու հնարավորություն՝ առանց ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչների ժամանմանը սպասելու: Պարզեցվել է պատահարի մասնակից վարորդների կողմից համաձայնեցված հայտարարագրի միջոցով հավաքագրվող ելակետային տվյալների կազմը, հայտարարագրի լրացման հրահանգը: Համաձայնեցված հայտարարագրի ձեւում ավելացվել են ապահովագրական ընկերությունների համաձայնությամբ եւ առանց ապահովագրական ընկերությունների համաձայնության լրացված հայտարարագրի հիման վրա ԱՊՊԱ ոլորտում հատուցման ենթակա առավելագույն չափերի (որոնք կսահմանվեն Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի կանոններով) լրացման տողերը: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ ընդհանուր վնասի չափը չի գերազանցում 50 հազար դրամը:

Միաժամանակ, վարչապետ **Հովիկ Աբրահամյանը** ԿԲ նախագահին առաջարկել է աշխատանքներ տանել ապահովագրական ընկերությունների հետ եւ բարձրացնել սահմանված գումարի շեմը՝ գոնե մինչեւ 100 հազար դրամ:

### Հայաստանում կսկսեն խաղողի օղի արտադրել

Խաղողի օղիների արտադրությունը խթանելու նպատակով կառավարությունը հավանություն է տվել մի քանի օրենսդրական փոփոխությունների: Ըստ հիմնավորման, գործող օրենսդրությամբ խաղողի օղիների արտադրության համար սահմանված տարեկան տուրքի դրույքաչափը կազմում է 15 մլն դրամ: Այդ պատճառով Հայաստանում խաղողի օղի գրեթե չի արտադրվում: Գինու առանձին տեսակների (աղանդերային, կիսաաղանդերային, խերեսային, պորտվեյն, մադերա եւ այլն) արտադրության տեխնոլոգիայով պահանջվում է դրանց ավելացնել բացառապես խաղողի օղի, մինչդեռ խաղողի օղու բացակայության պատճառով ավելացվում է ցորենի օղի, որն արգելված է ԵՄ եւ ՌԴ օրենսդրությամբ: Մյուս կողմից՝ գինու արտադրությամբ զբաղվող տնտեսվարողները հնարավորություն չեն ունենում օղու արտադրության նպատակով թորելու գինու արտադրության համար ոչ պիտանի գինենյութը, վերամշակելու բավականին մեծ ծավալ (շուրջ 25 տոկոս) կազմող մնացորդները, ինչպես նաեւ իրականացնելու խաղողի մի շարք սորտերի մթերումներ, որոնք չեն մթերվում գինու եւ կոնյակի արտադրության նպատակով: Փաթեթի ընդունումից ակնկալվում է, որ կսկսեն մթերել խաղողի մի շարք սորտեր, որոնք չեն մթերվում գինու եւ կոնյակի արտադրության նպատակով, կսկսվի նոր արտադրատեսակի՝ խաղողի օղու արտադրություն, որն ունի իրացման, հատկապես արտահանման ծավալային մեծ պոտենցիալ, կավելանան պետական բյուջեի մուտքերը, ինչպես նաեւ տնտեսվարողների եկամուտները:

**Ա. Մ.**

AZG NEW SHABAT 1.QXD 18/02/2016 22:00 Page 7



# Ի սկզբանէ էր Բանն

*(Դավիթ Բաբայանի հայալեզու աշխատության նախաբանը)*

Զորի ԲԱԼԱՅԱՆ


Հ. Այվազովսկի. «Նոյը իջնում է տապանից»

Իմ առջեւ է պատմական գիտությունների թեկնածու եւ քաղաքագետ Դավիթ Բաբայանի ձեռագիրը՝ զարմանալի վերնագրով. «Հայկական լեռնաշխարհի դերն ու տեղը աստվածաշնչյան աշխարհաքաղաքականության մեջ»: Թեման հրապուրիչ է: Հետաքրքրեց ինձ: Եվ, հավատարիմ սկզբունքին, ես սկսեցի կարդալ ոչ մեծ աշխատությունը՝ մատիտը ձեռքիս: Իրոք, որեւէ մեկն արդյոք երբեւէ մտածե՞լ է, թե ինչու Նոյն իր փրկիչ տապանը տարավ հենց դեպի Արարատ, կամ Աստվածաշնչի լեզվով ասած՝ «Արարատյան լեռներ», այլ ոչ թե, ասենք, որեւէ ուրիշ սարի գագաթ: Չէ՞ որ ջրհեղեղը համաշխարհային էր: Ինչո՞ւ Նոյը խարիսխ չնետեր, օրինակ, աշխարհի ամենաբարձր լեռան՝ Էվերեստի մոտ: Կամ Էլբրուսի, որը թե՛ բարձր է Արարատից, եւ թե՛ բոլորովին հեռու չէ Արարատյան լեռներից: Իհարկե, Նոյյան տապանի երթուղին եւ վերջնագծի տեղը ընտրել էր ինքը՝ Տեր Աստված: Տապանի վրա փրկվեցին ոչ միայն արդարակյաց Նոյն՝ իր ողջ ընտանիքով, այլեւ «ամեն տեսակ անասունից երկերկու հատ» (կա եւ այլ ձեւակերպում՝ «ամեն մարմնից երկերկու հատ»): Այդ բարդ ու դժվարին ժամանակներում ամեն ինչ պարզորոշ մտահղացված էր Աստծո կողմից: Իրոք, չէ՞ որ պետք էր փրկել ոչ միայն բոլոր նրանց, որոնք գտնվում էին Նոյի տապանում, այլեւ անմիջապես հաստատվել: Նոր կյանք ստեղծել: Ըստ էության, ստեղծել նոր մարդկություն: Եվ Տեր Աստված չէր կարող չիմանալ, որ այդպիսի կենսատու, բերքառատ վայր էր այն տարածքը, որը կոչվում է Հայկական բարձրավանդակ: Աշխարհի բոլոր հանրագիտական բառարաններում կա այդ պատմա-աշխարհագրական բառակապակցությունը:

Համառոտ խոսեմ Հայկական բարձրավանդակի բուն անվան, աշխարհագրության, տեղանվան եւ պատմության մասին: Այն իր անվանումն ստացել է ելնելով նրանից, որ բարձրավանդակի սահմաններում էր գտնվում հայ ժողովրդի կազմավորման լայնածավալ պատմական տարածքը: Դարերի խորքից սկսած մինչեւ մեր դարաշրջան Հայկական բարձրավանդակի տարածքում Հայաստանն ունեցել է բազմաթիվ անվանումներ. Արմանում, Հայասա, Նաիրի, Ուրարտու պետության մաս, Մեծ Հայք, Փոքր Հայք, Արեւելյան, Արեւմտյան, Ռուսական, Դաշնակցական, Խորհրդային, Հայաստանի Հանրապետություն: Սակայն մշտապես անփոփոխ է մնացել Հայկական բարձրավանդակի բուն տարածքը, որը հանդիսանում է աշխատության հեղինակ Դավիթ Բաբայանի գլխավոր թեման:

Այդ տարածաշրջանը հզոր հանգույց է, որում ագուցվում են Փոքրասիական եւ Իրանական բարձրավանդակների հյուսիսային եւ հարավային շղթաները, որոնք կազմում են լեռնաշղթաների եւ ծովածքների բարդ համակարգ: Իսկ, եթե օգտվելու լինենք ժամանակակից տերմինաբանությունից, բուն գյուղատնտեսական տարածքն իրենից ներկայացնում էր ոչ միայն, ես կասեի՝ «համեղ սեւահողի» անծայրածիր տարածքներ, այլեւ տուֆաբազալտային պիտանի սարահարթեր: Սա արդեն շինարարության համար: Մոտ երկու հազար մետր բարձրության վրա ընկած անդունդներն ունեցել են չոր հատակներ, որոնք սկիզբ են դրել քաղցրահամ ջրով շատ լճերի: Առավել խոշոր լճերն են Վանը, Սեւանը, Ուրմիան:

Ինչպես ընդունված է ասել՝ Նոյի ժամանակներում Հայկական բարձրավանդակի շատ հատվածներ ծածկված էին անտառներով: Դա արդեն «համեղ» էր դարձնում օդն ու ջուրը: Մի խոսքով, բոլորովին էլ պատահական չէր, որ Նոյը տապանը կառանեց հենց բիբլիական լեռան գագաթին, որը Հայկական բարձրավանդակի ամենաբարձր լեռն է (5165 մետր)՝ 400 հազար քառակուսի կիլոմետր մակերեսով: Միայն այդպիսի «համեղ», կենսատու տարածքի վրայով կարող էր թռչել բիբլիական աղավնին՝ կյանքի խորհրդանշական ճյուղը կտուցին:

Դպրոցական նստարանից ենք հիշում, որ հեթանոսական Հին Հունաստանում, ինչպեսեւ Հայկական բարձրավանդակում կային բերքառատ տարածքներ, որոնք սրբազան էին համարվում: Քանզի այնտեղ հասարակ մահկանացուների հետ ապրում էին նաեւ հելլենական աստվածները՝ Զեւսի գլխավորությամբ: Սակայն այնտեղ անհնար էր տապան կառանել: Ջրհեղեղի ժամանակ ջուրը բարձրացել էր ավելի քան հինգ հազար մետր: Իսկ Հունաստանի ամենաբարձր լեռը՝ Օլիմպոսը 2917 մետր բարձրություն ունի: Այնպես որ, ինչպես գրում է հիանալի աշխատության հեղինակ Դավիթ Բաբայանը, «Աստծո նախախնամությամբ» ապագա մարդկության նախահայրերի հիմնավորման վայրը պետք է լեցուն լիներ կենսապահովման շռայլ հատվածներով:

Ըստ Բաբայանի, իր թեմայի արծարծման գլխավոր աղբյուր է հանդիսանում հենց Աստվածաշունչը, որտեղ կան ե՛ւ Արարատյան լեռները որպես կառանման վայր, ե՛ւ բարձրավանդակում սկիզբ առնող գետերի վտակները, որտեղ կային բոլոր պայմանները նոր կյանքի համար: Դա նշանակում է, բնականաբար, որ ջրհեղեղից հետո մարդը ծնվել է միայն եւ միայն Հայկական բարձրավանդակում: Բնական է եւ այն, որ Հայկական բարձրավանդակում ծնված առաջին մարդը չէր կարող չիմանալ ամենագլխավորի, ամենակարեւորի մասին. Տեր Աստված խիստ պատժեց մարդկային ցեղը անհամար մեղքերի համար: Մարդկանց մեղքի մեջ ներքաշող սատանան հակահարված չստացավ: Դա արդեն այլ պատմություն է:

Աշխատության հեղինակը մի տեսակ նախազգուշաբար խոստովանում է, որ «առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ «աստվածաշնչյան աշխարհաքաղաքականություն» հասկացությունը...»: Եվ բավական տրամաբանորեն բացում է թեման: Վերջիվերջո, «գեոն» դա հողն է, այսպես ասած՝ տարածքը, իսկ «քաղաքականությունը», անկախ նրանից, որ շատ մեծ գլուխներ բավական թունդ նշավակում եւ այպանում են այդ հասկացությունը, այնուամենայնիվ, ցանկանում ենք, թե ոչ, հազարամյակներ շարունակ, ըստ Չերչիլի, հանդիսացել է մարդկանց եւ պետությունների գործունեության համարյա անփոփոխ ոլորտ: Մինչդեռ մեր դեպքում, նկատի ունենալով Բաբայանի աշխատանքը, ամեն ինչ շատ ավելի պարզ է. «Նոյի տապանը խարիսխ նետեց Արարատի գագաթին, որն ըստ էության Հայկական բարձրավանդակի կենտրոնն է»: Եվ լիովին բնական, տրամաբանական է, որ նոր կյանքը, նոր սերունդը կարող էին սկիզբ առնել միայն այնտեղ՝ Հայկական բարձրավանդակում:

Ես հավատացյալ քրիստոնյա եմ: Հարգում եմ բոլորին, ովքեր այլ կրոն են դավանում: Խորապես հավատում եմ ոչ միայն տասը պատվիրաններից յուրաքանչյուրին, այլեւ Սուրբ գրքի յուրաքանչյուր այլ բառին ու տողին: Դա նշանակում է՝ հավատում եմ համաշխարհային ջրհեղեղի եւ Նոյյան տապանի պատճառին եւ էությանը: Երբ երեւանյան իմ տան պատուհանից նայում եմ Արարատի գագաթին, ապա շոշափելիորեն զգում եմ այն պահը, այն ժամանակը, երբ Նոյն իր ողջ ընտանիքով եւ տապանի ողջ «անձնակազմով» ցած իջավ բիբլիական լեռան հյուսիսային լանջով, մոտենալով դաշտավայրին, որը մինչեւ օրս կոչվում է Արարատյան: Եվ ահա այստեղ, սուրբ լեռան ստորոտին, նրանց հայացքի առջեւ բացվեց դրախտային մի անկյուն, որն անվանվեց Նախիջեւան, այսինքն՝ «Մինչեւ վերջնական կանգառ, մինչեւ օթեւան»: Հետազոտող Դավիթ Բաբայանի կարծիքով, հենց այդ տեղում են կնքվել պայմանագրերը Աստծո եւ մարդկանց միջեւ:

Անմոռանալի Լեոնիդ Հուրունցը՝ Ղարաբաղի մասին բազմաթիվ գրքերի, «Իմ քաղցր Շուշեն» հիանալի վիպակի հեղինակը պատմում էր, թե ինչպես էր նենգամիտ գլավլիտը (պետական գրաքննությունը) անխղճաբար մկրատել ամբողջ էջեր՝ մետաքսատու վայրի հազարամյա պատմությունից, որտեղ հայտնվել էր ղարաբաղյան լեգենդար Շուշեն կամ Շոշ գյուղը: Եվ Բաբայանն իր աշխատության մեջ մանրամասն կանգ է առնում ե՛ւ Նախիջեւան, ե՛ւ Շոշ տեղանունների վրա:

Հետաքրքրական է եւս մեկ արցախյան աշխարհագրական կետի պատմությունը, որը գնում է ոչ թե դարերի, ոչ թե հազարամյակների խորքը, այլ երկու միլիոն տարվա՝ նախանեանդերթալյան շրջանի: Դա Արցախի Հադրութի շրջանում գտնվող հռչակավոր Ազոխի քարանձավն է: Հենց այստեղ է կրկին ծնվել կյանքը, կյանքը ջրհեղեղից հետո: Աշխատության հեղինակը փորձում է բացահայտել եւս մեկ թեմա: Խոսքը արդեն «նոր կյանքի» որոշ նոր կրոնների ստեղծման մասին է:

Ծանոթանալով Դավիթ Բաբայանի եզակի հետազոտական աշխատանքին, ակամայից մտորում ես եւս մեկ թեմայի շուրջ: Բոլորովին էլ պատահական չէր, որ հայերն առաջինն ընդունեցին քրիստոնեությունը որպես պետական կրոն: Հիշենք, թե ինչ կրքոտությամբ, ինչ ծանր կորուստներով հաջողվեց հայերին պահպանել հավատը Ավարայրի դաժան ճակատամարտում: Եվ կյանքը ցույց տվեց, որ հենց քրիստոնեությունն է դարերի ընթացքում փրկել հայ ժողովրդին: Ամենաողբերգական պայմաններում արդեն ինքը՝ Հայոց Առաքելական եկեղեցին հայի մեջ պահպանեց հային: Եվ դա եղել է Հայկական բարձրավանդակում՝ մարդկության օրրանում: Առհասարակ, հենց այդ մասին է «Հայկական լեռնաշխարհի դերն ու տեղը աստվածաշնչյան աշխարհաքաղաքականության մեջ» աշխատությունը:

## Ռուսալեզու նոր գիրք՝ եղեռնի մասին



Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի մատենադարան-ինստիտուտը հրատարակել է **Կարապետ Գաբիկյանի «Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծին մայրաքաղաքին Սեբաստիոյ»** գրքի ռուսերեն թարգմանությունը: Գիրքը, որ հուշագրություն-եղեռնապատում է, առաջին անգամ հրատարակվել է 1924 թվականին Բոստոնում: Հեղինակը՝ սեբաստացի Կարապետ Գաբիկյանը, Եղեռնի վերապրողներից է, մասնակիցը գրքում նկարագրվող բոլոր իրադարձությունների: Գաղտնիք չէ, որ Եղեռնի պատմական փաստի համատեքստում Փոքր Հայքը մի տեսակ դուրս է մնացել ուշադրությունից:

Գրքի թարգմանչուհին՝ բանասիրական գիտությունների դոկտոր **Քնարիկ Տեր-Դավթյանը**, տասնամյակներ շարունակ հետաքրքրված է աղբյուրագիտությամբ: Նրա ուսումնասիրությունների շրջանակը լայն է՝ միջնադարյան հայրաբանություն, վարքագրություն, պատմագրություն, իմաստասիրություն ու գեղարվեստական գրականություն: Պատմագիտական ծավալուն ժամանակաշրջանի հետազոտությունները, հատկապես մեր մեծերի վարքագրությունը սովետական տարիներին չէին խրախուսվում, ինչպես չէր խրախուսվում Հայոց ցեղասպանության թեման: Իսկ հատկապես Փոքր Հայքում տեղի ունեցած տեղահանություններն ու ծրագրված բնաջնջումը պատմաբանների ու աղբյուրագետների ուշադրությունից էին դուրս մնացել:

Քնարիկ Տեր-Դավթյանը հիշում է Կարապետ Գաբիկյանի խոսքերը. «Կգա ժամանակ, երբ իմ գիրքն անգնահատելի փաստաթուղթ կդառնա: Դրա արժեքը հետո կիասկանաք»: Սակայն դեռ տասնամյակներ առաջ էր պատմաբան-թարգմանչուհին հասկացել Եղեռնից փրկված սեբաստացու հուշագրության արժեքը: Տարիներ առաջ նա երջանկահիշատակ **Սեն Արեւշատյանի** հետ ձեռնարկել է գրքի ռուսերեն թարգմանությունը: Այսօր գիրքը պատրաստ է, սակայն ակադեմիկոսը, որ աշխատության խմբագիրն էր, չհասցրեց այն տպագրված տեսնել: Ռուսալեզու բազմամիլիոնանոց հասարակությանը «Եղեռնապատում Սեբաստիոյ» գիրքը պատմական հիմնավոր վկայություններ կհաղորդի, որոնք վավերագրական փաստաթղթերի արժեք ունեն: Այն անգնահատելի աղբյուր է 20-րդ դարասկզբի Սեբաստիայի ու հարակից բնակավայրերի հայության վիճակի, առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած դեպքերի մասին:

ՆԱԻՐ ՅԱՆ

AZG NEW SHABAT 1.QXD 18/02/2016 22:00 Page 8



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Պատերազմի «բարիքները»

Պատերազմները իրենց չար կողմին զուգահեռ, ունին նաեւ իրենց օգուտները: Երկու համաշխարհային պատերազմներու ընթացքին գիւտեր կատարուեցան եւ գիտութիւնը ոստում կատարեց, քանի որ,- ինչպէս կ՚ըսեն,- «Կարիքը մայրն է ստեղծագործութեան»:

Պէտք է աւելցնել նաեւ, որ պատերազմները օգտակար են մարդոց հարստութիւն դիզելու համար: Համատարած չքաւորութեան կողքին ի՜նչ հարուստներ մէջտեղ կու գան պատերազմի օրերուն, որոնց յատուկ որակում մը կը տրուի՝ «Պատերազմի հարուստներ»:

Պատուհասներու, դժբախտութիւններու ընթացքին է, որ երեւան կու գայ մարդու իսկական նկարագիրը. մարդ կայ, որ անմիջապէս կը փութայ բարիք ընել, օգնել դժբախտութեան մէջ ինկողին, մարդ ալ կայ, որ առիթը կ՚օգտագործէ չարաշահութիւն ընելու: Պատահած է, որ երկրաշարժի ընթացքին, փլատակներուն տակէն մարդիկ փրկելու փութացած են, մինչ ուրիշներ դիակները կողոպտելով զբաղած են:

Այսպէս ալ կը պատահի այսօր, երբ հազարաւոր փախստականներ Թուրքիայէն Եւրոպական ցամաք կը փորձեն հասնիլ լաստանաւերով: Հարիւրաւորներ խեղդամահ եղան Միջերկրականի ջուրերուն մէջ, սակայն գաղթականներուն հոսքը չդադրեցաւ, քանի որ պատերազմը դեռ կը շարունակուի;

Նոր եւ շահաւէտ գործարք մըն է գաղթականներ տեղափոխելը: Լաստանաւը կը բեռցնեն անոր տարողութենէն շատ աւելի մարդոցմով, որոնց, փրկարար բաճկոններ կը հագցնեն ու ահագին գումար կը գանձեն: Քանի-քանի լաստանաւեր շրջուեցան ու քանիներ ջրամոյն եղան. փաստուեցաւ, որ այդ թրքական փրկարար կոչուած բաճկոնները, կեղծ են եւ երբեք չեն համապատասխաներ օրինաւոր փրկարար ժաքէթներուն, սակայն ո՞ւր հոգը, ոչ այդ բաճկոնները պատրաստողները, ոչ ալ լաստանաւեր բանեցնողները հետաքրքրուած են մահացողներով: Իսկ ամենազարմանալին՝ թրքական կառավարութիւնն ալ տեղեակ ըլլալով այս խայտառակ չարաշահումներէն, ձայն չի հաներ ու առաջքը չառներ:

Ինչո՞ւ առաջքը պիտի առնէ. ուրիշին ողբերգութիւնը իրեն շահու առատահոս աղբիւր է: Անմարդկային պայմաններու մէջ վրաններու տակ ցուրտէն սառող սուրիացի փախստականները եւ իր մօտէն հեռացող, կամ հեռացուող գաղթականներուն հաշւոյն, տակաւին վերջերս երեք միլիառ տոլար ստացաւ... Անկելա Մերքէլը Գերմանիոյ պատմական բարեկամ եւ զինակից ու մեղսակից Թուրքիոյ «զոհողութիւնները» գնահատել գիտէ:






Հիմա Սուրիոյ հիւսիսէն վար իջնենք դէպի հարաւ՝ Յորդանան: Այստեղ ալ պատկերը նոյնն է. այստեղ ալ կան սուրիացի փախստականներ ու անոնց պատճառով նաեւ շահեր...

Դիմատետրին մէջ մէկը կը պատմէ, թէ Սթամպուլէն իր բնակավայր-աշխատավայր Քուէյթ վերադարձին, քանի մը ժամ Ամմանի օդակայանի **թրանզիթի** բաժինը մնալու ստիպուած եղած է, իրեն մօտեցած են ոստիկաններ եւ պահանջած, որ իր մատնադրոշմը դնէ դիմումնագրի մը վրայ որպէս սուրիացի ապաստանեալ. մարդը ընդդիմացած է եւ բացատրած իր տարանցիկ ըլլալը: Չեն ընդունած եւ սպառնացած են... Ստիպուած կնքած է: Երբ մէկուն հարցուցած է այս արարքին պատճառը, մարդը ըսած է, որ իւրաքանչիւր կնիքի համար 3000 տոլար կը ստանայ յորդանանեան պետութիւնը, որպէս օժանդակութիւն գաղթականներու հաշւոյն: Առիթը փախցնել կ՚ըլլա՞յ:

Ահաւասիկ ձեզի օրինակներ պատերազմը շահու աղբիւր դարձնողներու: Թէեւ պիտի գտնուին մարդիկ, որոնք պիտի ըսեն, թէ ասոնք մանրուքներ են, բաղդատած պատերազմի ընթացքին զինամթերքի, վառելանիւթի, թմրանիւթերու եւ այլ գործարքներէ եկած շահերուն:

Պատերազմ... Աշխարհի ամենահասութաբեր պիզնեսը: Ուրեմն, ինչո՞ւ դադրեցնել պատերազմը, մանաւանդ երբ անոր բանալին այդ հարստացողներուն ձեռքն է:

Պատերազմները համայն մարդկութեան համար չարիք են, մինչդեռ ոմանց համար՝ բարիք:

# Բելգիական, բայց ոչ շոկոլադ

Ինչի՞ են ձգտում հայաստանցի 50-ն անց տղամարդիկ, ավելի կոնկրետ՝ 53-ամյաները: Անշուշտ, նայած որ կուսակցության անդամ են, կամ կուսակցակա՞ն են արդյոք: Ենթադրենք, եթե 53-ամյա հայաստանցի տղամարդը հանրապետական է, ապա ինքն էլ ոչ մի բանի չի ձգտում, քանի որ կյանքը մի այլ կարգի ստացվել է, քանի դեռ Հանրապետականը իշխանության է եւ քանի որ Հանրապետականը միշտ է իշխանության լինելու: Եթե, ենթադրենք, դաշնակցական է, ապա ձգտում է ինչ-որ նախարարի պաշտոնի, նվազագույնը՝ փոխնախարարի, մարզպետի, եւ իհարկե, սկզբունքայնության ու գաղափարախոսության տարածմանը՝ ողջ երկրով մեկ, երկրով, այսինքն՝ Միացյալ Հայաստանով: Իսկ եթե, օրինակ ՀԱԿ անդամ է, ապա ձգտում է րոպե առաջ վերջ տալ այս ավազակաբարո ռեժիմին, որպեսզի իրենք դառնան ավազակաբարո ռեժիմ: Մի խոսքով Հայաստանում 53-ամյա տղամարդկանց ձգտումները տարբեր են, բայց եւ նույնը, քանի որ բոլորն էլ ձգտում են թագավորության: Իսկ անկուսակցականները, ավելին՝ կուսակցություններից բան չհասկացողները, գոնե նրանց մեծ մասը, շեշտում եմ՝ 50-ն անց տարիքում դեռ ձգտում են վերջապես սեփական տունն ունենալ, սեփական ծառը տնկել, որդի՞, առնվազն մեկ որդի ունեն, եթե չունեն էլ, ապա արդեն 50-ն անց են եւ հիմնականում՝ Ռուսաստանում:

Բելգիայի 53-ամյա արքայազն Լորանն, անշուշտ, իսկական տղամարդ է: Նախ՝ բոլորովին վերջերս շքեղ վիլլա կառուցեց, որի համար, ի դեպ, ըստ բելգիական լրատվամիջոցների, արքայազն Լորանը կես միլիոն դոլարով դատարկել է պետական բյուջեն, կես միլիոնն, իհարկե շատ չէ, բայց բյուջեն՝ Բելգիայինն է: Ենթադրում եմ, որ վիլլայի բակում առնվազն մեկ ծառ տնկած կլինի, մանավանդ որ Լորանը մեծապես հետաքրքրված է շրջակա միջավայրի պահպանման խնդիրներով: Հետեւաբար տուն ունի, ծառ տնկել է, մի որդու փոխարեն երկուսն ունի. 2005-ի դեկտեմբերին Լորանի կինը՝ Կլեր Կլումբսը լույս աշխարհ բերեց երկվորյակ որդիների՝ Նիկոլային եւ Էյմերիկին: Մինչ այդ արքայազն Լորանը միայն փոքրիկ Լուիզայի հայրն էր: Բայց արի ու տես, որ իսկական տղամարդ դառնալը արքայազն Լորանին մի տեսակ չի բավականացնում՝ կատարյալ երջանիկ լինելու համար եւ նա այս շաբաթ հայտարարել է, որ արդեն հոգնել է՝ ...թագավորական կյանքից: Որպեսզի ամեն ինչ պարզ լինի, տեղեկացնեմ, որ Բելգիայում՝ կոնկրետ Լորանի համար թագավորական կյանքը հետեւյալն է. շքեղ վիլլայի մասին արդեն ասացի, Լորանն ունի նաեւ թագավորական տիտղոս եւ ամուսնությունից հետո նրա կինը՝ Կլերը եւս ստացել է թագավորական տիտղոս, նրա երեխաները եւս տիտղոսներ են կրում: Բացի սրանից, Լորանն անձամբ ամեն ամիս պետությունից ստանում է 342 հազար եվրո թոշակ, եւ սա ոչ թե որովհետեւ Բելգիայում թոշակները բարձր են, կամ որ Բելգիայում 53-ամյա տղամարդիկ թոշակ են ստանում, այլ քանի որ Լորանը թագավորական ընտանիքի ներկայացուցիչ է: Ունի՞ արդյոք արքայազնը կողմնակի բիզնեսներ, չգիտենք, բայց նա սիրում է ձիեր, եւ այլ ընտանի ու վայրի կենդանիներ: Հետեւաբար, ենթադրում ենք, որ թագավորական կյանքը Լորանի համար նաեւ թանկարժեք ձիեր պահելն է եւ ոչ միայն պահելը եւ ոչ միայն ձիեր պահելը:

Մի խոսքով, մարդն այս ամենից հոգնել է, այսինքն էլ չի ցանկանում ապրել շքեղ վիլլայում, ստանալ ամսական 342 հազար եվրո թոշակ, կրել թագավորական տիտղոս եւ վայելել ազնվացեղ ձիերի ընկերակցությունը: Չի բացառվում, որ նրա երեխաներն են ստիպում հայրիկին՝ վերջ տալ թագավորական կյանքին, քանի որ ցանկանում են դուրս գալ բակ եւ խաղալ ուրիշ երեխաների հետ: Իսկ թագավորական բակերում ուրիշ երեխաներ չեն խաղում: Իսկ, եթե ավելի լուրջ կամ ավելի ճիշտ, եթե հայավարի մտածենք, ապա ամենայն հավանականությամբ Լորանի՝ թագավորական կյանքից հոգնելու պատճառը կարող է լինել թագավոր դառնալու ապարդյուն սպասելիքները: Բանն այն է, որ Լորանը բելգիական գահի 14-րդ ժառանգորդն է համարվում, այսինքն՝ մինչեւ Լորանը, դեռ 13 հոգի կան, որ հավակնում են բելգիական գահին: Հիշեցնեմ, որ Լորանը Բելգիայի թագավոր Ալբերտի երկրորդ որդին է, ունի մեծ եղբայր՝ Ֆիլիպը եւ քույր՝ Աստրիդը, երկուսն էլ ունեն իրենց երեխաները, որոնցից յուրաքանչյուրն ավելի մեծ հնարավորություններ ունի դառնալ Բելգիայի թագավոր, քան Լորանը: Ի դեպ, թագավորությունից հոգնելը Լորանը հավանաբար ժառանգել է հորից՝ արքա Ալբերտից, ով, հիշեցնեմ, 2003-ին ինքնակամ հրաժարվեց գահից՝ այն զիջելով որդուն՝ Ֆիլիպին, սակայն պահպանեց Բելգիայի թագավոր տիտղոսը:

Այսինքն չի բացառվում, որ Լորանն ուղղակի իմաստ չի տեսնում՝ արքայազնի կյանքը շարունակելու, քանի որ հրաշալի հասկանում է, որ ինքը երբեք էլ թագավոր չի դառնալու: Իսկ ավելի ճիշտ՝ նա հասկանում է, որ առավելագույնը ինչ նա կարող է դառնալ թագավորն է, իսկ թագավոր լինելն այնքան ձանձրալի է, մանավանդ որ Լորանը բելգիական նավատորմի կապիտան է, Բելգիայի ազգային նվագախմբի պատվավոր նախագահը, իսկ 1995-ից ղեկավարում է իր անունով բացված հիմնադրամը, որը պայքարում է ընտանի եւ վայրի կենդանիների բարեկեցության համար՝ մարդու եւ կենդանիների փոխհարաբերությունները բարելավելու նպատակով: Այսինքն Լորանը այլ, անհամեմատ ավելի հետաքրքրական բաներով է զբաղված՝ սկսած վագրերի եւ մարդկանց միջեւ բարիդրացիություն հաստատելուց, վերջացրած պետական բյուջեն անձնական կարիքների համար կես միլիոն դոլարով աղքատացնելուց: «Հնարավոր է ես ավելի հեշտ ապրեի, եթե արքայազնի տիտղոսը կարողանայի ընտրել, կամ չընտրել: Բայց ի ծնե ես չեմ ունեցել որեւէ այլընտրանք, հենց այս պատճառով էլ արքայազնի տիտղոսն ինձ նյարդայնացնում է եւ հոգնեցնում», հայտարարել է Լորանը, միեւնույն ժամանակ ընդունելով, որ, եթե ինքը թագավորական ընտանիքի անդամ չլիներ, ապա հնարավորություն չէր ունենա ...զբաղվել բարեգործությամբ: Ու քանի որ Լորանը չի շեշտել, թե բարեգործությամբ զբաղվելն իր համար որքան կարեւոր է, ենթադրում ենք, որ նա հոգնել է նաեւ բարեգործությունից, կամ պարբերաբար հոգնում է ու հավանաբար այդ ընթացքում էլ բյուջեից կես միլիոն փող է վերցնում, որպեսզի իր համար վիլլա կառուցի:

Բայց ի վերջո ինչի՞ են ձգտում Հայաստանում 50-ն անց տղամարդիկ՝ այս պարագայում անկախ կուսակցական պատկանելիությունից կամ սոցիալական դիրքից: Թագավորությա՞ն, բայց դա այնքան ձանձրալի է, արդեն թագավո՞ր եք, բա չե՞ք ձանձրանում...

Ես, օրինակ, չնայած 50-ն անց չեմ, ձգտում եմ գոնե մեկ անգամ լինել Բելգիայում, որպեսզի հենց տեղում փորձեմ հանրահայտ բելգիական շոկոլադը: Գուցե սա նրանից է, որ ես 50-ն անց չեմ եւ մի տեսակ պարզ եմ պատկերացնում կյանքը, ծիծաղելի եմ համարում թագավորներին ու թագավորության ձգտողներին եւ տուն-ծառ-որդի շարքից միայն ծառ եմ տնկել, բայց մի հինգ անգամ, եւ չեմ հոգնել: Այնպես որ՝ մի՛ հոգնեք:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT 1.QXD 18/02/2016 22:00 Page 9



# Ռուս-թուրքական բարեկամության պայմանագիրը չեղարկելու առաջարկություն

ՌԴ Պետդումայում պատրաստվել է դիմում բարեկամության ու եղբայրության մասին Մոսկվայի 1921 թ. պայմանագիրը լուծարելու վերաբերյալ:

Պատգամավորներն առաջարկում են չեղարկել 1921 թ. մարտի 16-ին ՌԽՖՍՀ կառավարության եւ Թուրքիայի Ժողովրդական մեծ ժողովի ստորագրած բարեկամության ու եղբայրության պայմանագիրը: ՌԴ Կոմկուսի կենտկոմի փոխնախագահ Վալերի Ռաշկինը եւ կենտկոմի քարտուղար Սերգեյ Օբուխովը նման առաջարկությամբ դիմել են ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին եւ արտգործնախարար Սերգեյ Լավրովին:

«Իզվեստիա» թերթի խմբագրությանը տրամադրած նամակում նրանք մատնանշում են Մոսկվայի հանդեպ Անկարայի հետեւողական նախահարձակ վարքագիծը:

«Կարծում ենք, որ այժմ, թուրքական ագրեսիայի ուժեղացման պայմաններում, մենք պետք է իրավաբանորեն մշակենք մեր երկրի եւ նրա դաշնակիցների համար աննպաստ բոլոր ռուս-թուրքական համաձայնագրերի վերանայման հնարավորությունը: Անկարան պետք է հասկանա, թե իր համար ինչի կարող է վերածվել հակամարտության ծավալումը: Միայն դա կարող է նրան սթափեցնել եւ հետ պահել նոր սադրանքներից», հայտարարել է «Իզվեստիային» Օբուխովը:

Գործընկերների նախաձեռնությունը պաշտպանում են նաեւ «արդար Ռուսաստանում»: Պատգամավոր Օլեգ Պախոլկովի խոսքերով, Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է ի վնաս Ռուսաստանի շահերի:

«Պայմանագրում թուրքերն առաջ քաշեցին շատ ծանր պայմաններ, այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղ ստեղծելու կետը: Բայց թուրքերին հարկավոր է դաստիարակել. այս աշխարհում լուսնի տակ ամեն ինչ չէ, որ հավերժական է: Եվ եթե դուք այսօր կրկին դավաճանական դիրք եք բռնում, ապա բարեկամության ու եղբայրության պայմանագրի չեղարկման հարցը նորմալ միջոց է: Եվ այս հարցում մեզ կաջակցի Հայաստանը: Այդ խզումը կունենա՞ արդյոք իրավաբանական ուժ, հայտնի չէ, բայց տարածքների հետ կապված մեր անհամաձայնությունը ճիշտ է», ասել է **Պախոլկովը**:

Նրա կարծիքով, տվյալ հարցը բարձրացվում է ավելի շատ այն նպատակով, որպեսզի Թուրքիայում լսեն եւ հասկանան, որ ՌԴ քաղաքացիներն ուզում են դա:

«Ռուս-թուրքական հիստերիան սկսվել է երկու կողմից: Քիչ հավանական է, թե մենք կկարողանանք ինչ-որ բանով դրան վերջ դնել: Ստամբուլի ահաբեկչության մասին թուրքական բոլոր ԶԼՄ-ների վերնագրերում նշվում է, որ ենթադրյալ ահաբեկիչների մեջ եղել են ռուսաստանցիներ, թեեւ ահաբեկչությունը միջազգային երեւույթ է», նշել է Պախոլկովը:

Պատգամավորները հիշեցնում են, որ Թուրքիայի ղեկավարությունը ի դեմս նախագահ Էրդողանի մինչեւ օրս ներողություն չի խնդրել Սիրիայի տարածքի վրա ռուսական «Սու-24»-ի ոչնչացման միջադեպի կապակցությամբ:

Հորդանանի թագավոր Աբդալլահ Բ-ի հանդիպման ժամանակ նախագահ Պուտինը Թուրքիայի նախահարձակումը բնութագրեց որպես «ահաբեկիչների գործակցի հարված ՌԴ թիկունքին»:

«Այդ գործակցության հիմքը ահաբեկիչների նավթի գնումն է ու փոխադրումը: 2015 թ. դեկտեմբերի 2-ին ՌԴ պաշտպանության նախարարությունը Ջեր բառերի սպառիչ ապացույցներ ներկայացրեց արբանյակային լուսանկարների տեսքով, որոնց վրա բենզատարների եւ խոշոր նավթատար մեքենաների շարասյուները «Իսլամական պետությանը» ենթակա տարածքներից Թուրքիայի սահմանով անարգել շարժվում են դեպի թուրքական նավահանգիստներ», նշում են կոմունիստները նամակում:

Ըստ որում, Անկարայի կողմից ԻՊ նավթի գնման փաստը 2015 թ. վերջերին ընդունեց ԱՄՆ ֆինանսների նախարարությունը, իսկ ավելի ուշ՝ նաեւ Իսրայելի եւ Հունաստանի իշխանությունները:

Պատգամավորները իրենց նամակում հիշեցնում են ազգային անվտանգության եւ ՌԴ քաղաքացիների պաշտպանության նպատակով Թուրքիայի նկատմամբ Մոսկվայի ձեռնարկած համարժեք քայլերի մասին: Համապատասխան հրամանագրի ստորագրումից հետո Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ վերացվեցին անայցագիր ռեժիմը եւ չարտերային չվերթները, Թուրքիայի իրավասությանը ենթակա կազմակերպությունների համար արգելվեց թուրքական ապրանքների ներմուծումը:

Դրանից հետո Թուրքիայի ղեկավարությունը գիտակցեց տնտեսական պատժամիջոցների ներգործունությունը եւ Մոսկվայի հետ բարեկամական հարաբերությունները վերականգնելու ցանկություն հայտնեց, սակայն, ինչպես նշված է պատգամավորական հարցադրման մեջ, «միաժամանակ Մուստաֆա Ջեմիլեւի հետ քննարկելով Ղրիմի այսպես կոչված ազատագրման հատուկ խմբի ստեղծման հարցը»:



*Մոսկվա, 1921թ., ռուս-թուրքական բանակցություններում*

«Իր ավագ գործընկերների վատթարագույն ավանդույթներին հետեւելով՝ Թուրքիայի ղեկավարությունը ամեն անգամ դրսեւորում է երկակի չափանիշների վրա հիմնված նախահարձակ, եսամոլական քաղաքականություն: Այս կապակցությամբ կարծում ենք, որ ավելորդ չէր լինի թուրքական իշխանություններին հիշեցնել, որ 1921 թ. մարտի 16-ին Թուրքիայի եւ Խորհրդային Ռուսաստանի կնքած բարեկամության ու եղբայրության պայմանագիրը հավերժական չէ», գրված է նամակում:

Օբուխովի խոսքերով, այդ պայմանագրի վերանայման հարցը առաջին անգամ չի քննարկվում: Նացիզմի ջախջախումից հետո, երբ հետպատերազմյան նոր սահմանների գծման գործընթաց էր սկսվել, Խորհրդային Միությունը պահանջեց Անկարայի հետ նոր համաձայնագրի կնքում, բայց Ստալինի մահից հետո ի վերջո հրաժարվեց իր պահանջներից:

«Անդրկովկասյան երեք հանրապետություններից երկուսը՝ Վրաստանը եւ Հայաստանը չեն ճանաչում պայմանագիրը, անարդարացի համարելով այն: Պետք է հասկանալ, որ 1921 թվականին բոլշեւիկների իշխանությունը բառացիորեն դեռ մազից էր կախված. շարունակվում էին օտարերկրյա ներխուժումը, քաղաքացիական պատերազմը: Այդ պայմաններում Խորհրդային Ռուսաստանը չէր կարող հանդես գալ ուժի դիրքերից եւ Թուրքիային պարտադրել փաստաթղթի առավել ձեռնտու պայմաններ: Համաձայնագիրը ի սկզբանե ընկալվում էր իբրեւ ժամանակավոր, եւ արդեն 1945 թվականին, Երկրորդ աշխարհամարտն ավարտելով որպես անվերապահ հաղթող, ԽՍՀՄ-ը անմիջապես իր անհամաձայնությունն արտահայտեց Մոսկվայի պայմանագրի ըստ էության խտրական պայմանների առնչությամբ:

Կնքված պայմանագրի համաձայն, Կարսի մարզ եւ նախկին Բաթումի մարզի հարավային մասը (Ռուսական կայսրության կազմում էին 1878-ից), ինչպես նաեւ Երեւանի նահանգի նախկին Սուրմալու գավառը (Ռուսական կայսրության կազմում էր 1828-ից) Արարատ լեռան հետ անցնում էին Թուրքիային:

Հայաստանի Հանրապետությունը չի ընդունում ի կատարումն Մոսկվայի պայմանագրի կնքված Կարսի պայմանագիրը, իսկ Վրաստանի Հանրապետության խորհրդարանը այն չեղարկել է 2005 թվականին:

Պայմանագրի չեղարկման մասին խոսվում է 1945 թվականից: Խորհրդային պատմաբան եւ արվեստաբանության դոկտոր Ալեքսեյ Ջիվելեգովը 1946 թ. «Իզվեստիա» թերթում հրապարակեց հոդված, որտեղ խոսվում է Մոսկվայի պայմանագրի կնքման անարդարացիության մասին: Հոդվածում Ջիվելեգովն ասում է, որ հայերը անպայման կվերադառնան պատմական սահմաններում իրենց տարածքների վերադարձման մտքին:

Ըստ որում, փորձագետների խոսքերով, Մոսկվայի պայմանագրի չեղարկումը չի նշանակի Կարսի 1921 թ. պայմանագրի ինքնաբերական լուծարում: Նույնիսկ երկու պայմանագրերի չեղարկումը չի նշանակում անդրկովկասյան երեք հանրապետությունների եւ Թուրքիայի սահմանների անհապաղ փոփոխություն:

«Այս կամ այն տարածքների կարգավիճակը ապահովվում է միջազգային պայմանագրերով, համաձայնագրերով կամ որոշումներով: Քանի որ այդ տարածքների առնչությամբ եղել է իրավարար դատարանի վճիռ, ուստի վերջինիս հակասող բոլոր հետագա պայմանագրերը լրիվ չափով լեգիտիմ չեն: Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը սեպարատ (անջատ) պայմանագրեր են եւ հակասում են միջազգային իրավարար դատարանի տառին: Իսկ իրավարար դատարանի վճիռը անչեղարկելի է: Այն վերջնական է եւ բողոքարկման ենթակա չէ», պատմում է քաղաքագետ, արեւելագետ **Կարինե Գեւորգյանը**:

Պ. Ք.

***Խմբ. կողմից.***- *Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետությունը պաշտոնական որեւէ հայտարարություն չի արել Մոսկվայի եւ առավել եւս Կարսի պայմանագիրը չընդունելու մասին:*

## Թուրքիան քանիցս խախտել է ՌԴ հետ բարեկամության ու եղբայրության պայմանագիրը

**1921 թ. ռուս-թուրքական բարեկամության ու եղբայրության պայմանագիրը խախտվել է արդեն Երրորդ աշխարհամարտից առաջ, երբ պանթյուրքական կազմակերպությունները քարոզում էին կայսրության ընդլայնում: Բացի դրանից, Թուրքիան օգնություն է տրամադրել չեչեն գրոհայիններին, նշում է ռուսաստանցի հայտնի փորձագետ Վիկտոր Նադեին-Ռաեւսկին, որը ՌԴ ԳԱ Համաշխարհային տնտեսության եւ միջազգային հարաբերությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող է: Մոսկվայի 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրի չեղարկման վերաբերյալ Պետդումայի կոմունիստ պատգամավորներ Վալերի Ռաշկինի եւ Սերգեյ Օբուխովի արած առաջարկությանն անդրադառնալով՝ Նադեին-Ռաեւսկին ՌԻԱ գործակալության թղթակցին ասել է, որ Մոսկվայի պայմանագրում կա մի շատ կարեւոր հոդված, որը երկու կողմերին պարտավորեցնում է հրաժարվել միմյանց նկատմամբ տարածքային պահանջներից, սեփական տարածքում թույլ չտալ մյուս կողմի դեմ ուղղված որեւէ հակակառավարական գործունեություն, այդ թվում տարածքի մի մասի անջատմանն ուղղված գործունեություն:**

**Սակայն թուրքական կողմը մշտապես խախտել է հենց այդ հոդվածը: Նադեին-Ռաեւսկին հիշեցնում է, որ դեռ Երկրորդ աշխարհամարտից առաջ Թուրքիան ապաստան էր տվել քաղաքական ամեն տեսակ թափթփուկների, որոնք ծրագրում էին ստեղծել Մեծ Թուրան՝ Ադրիատիկ ծովից մինչեւ Խաղաղ օվկիանոս ընկած մի վիթխարի կայսրություն, որտեղ պետք է իշխեին թուրքերը: Սրան գումարվում էին բացահայտորեն կայսրության ընդլայնում քարոզող պանթյուրքիստական կազմակերպությունները, այդ թվում «Ազգայնական շարժման կուսակցությունը» եւ դրա երիտասարդական թեւը՝ «Գորշ գայլեր» կազմակերպությունը: Այսինքն Թուրքիան չի հրաժարվել Մեծ Թուրանի գաղափարից, ինչը պայմանագրի կոպիտ խախտում է:**

**Նադեին-Ռաեւսկու խոսքերով, պայմանագրի մեկ ուրիշ խախտում էր Թուրքիայում չեչեն գրոհայիններին հատկացված օգնությունը: «Թուրքիայի տարածքում ապրում եւ գործում էր այսպես կոչված Իչկերիայի արտգործնախարարը, դրամահավաք էր անցկացվում թուրքական մզկիթներում, թուրք գործակալները Ռուսաստանի տարածքում կռվում էին Իչկերիայի դրոշների ներքո: Բացի դրանից, թուրքական կողմը իսլամիստական ակտիվ քարոզչություն էր իրականացնում: Այսինքն պայմանագրի այդ հոդվածը խախտվել է բավական կանոնավոր կերպով եւ մինչեւ վերջերս: Ուստի Թուրքիան, անկասկած, արժանի է պատժի», գտնում է փորձագետը:**

Պ. Ք.

AZG NEW SHABAT 1.QXD 18/02/2016 22:00 Page 10



# Սիրիական ռազմաճակատում կարող է վճռուել Մերձաւոր Արեւելքի ճակատագիրը

## *Կամ Ռուսաստանը Մերձաւոր Արեւելքում ձգտում է փոխարինել ԱՄՆ-ին*

ՄՆԱՑԱԿԱՆ Ռ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

Ռազմական պատմաբան

### Մաս 5-րդ

Սիրիայի Արաբական Հանրապետությունը դեռ լուրջ անելիքներ ունի յատկապէս Ռաքքայի նահանգի ուղղութեամբ: Յայտնի է, որ հենց Ռաքքան, սիրիական նոյնանուն նահանգի մայրաքաղաքն է հանդիսանում ԻԼԻՊ-ի կամ «Իսլամական պետութեան» մայրաքաղաքը:

Բնականաբար, սիրիական պատերազմը հնարաւոր չէ լիովին մեկուսացուած կամ անջատուած դիտարկել Իրաքում մղուող հակաիլիպեան պատերազմից: Դրանք նոյն պատերազմի երկու ռազմաճակատներն են: Դրանք միմեանց կապուած եւ միմեանց վրայ փոխազդող:

Նկատենք, որ ԻԼԻՊ-ը տարբեր ուժերի հարուածների ներքոյ խիստ թուլացել է ոչ միայն Սիրիայում, այլեւ Իրաքում: Իրաքի պետական տեղեկատուութական գործակալութեան ղեկավար Մուհամեդ Ալի ալ-Հաքիմը հաստատում է. «Ներկայումս ԻԼԻՊ-ին մնացել է սոսկ 34 բազա Մոսուլում, Ռաքքայում եւ այլուր: Նախկինում դրանք մի քանի անգամ աւելի շատ էին»:

Ուստի հիմքեր կան ենթադրելու, թէ Իսլամական պետութիւն կամ Իսլամական խալիֆաթ կոչեցեալի պատմութիւնը աւելի կարճ կլինի, քան ենթադրում էին նրա նախագծի հեղինակները: Իսկ դա նշանակում է, որ չի բացառում նաեւ նախկին «ստատուս քուոյի» վերականգնումը: Այսինքն` աշխարհին վախեցնելու համար ստեղծուած կայուն «խրտուիլակի» եւ սեւ շուկաներին էժան նաւթ մատակարարող «կայուն մատակարարի», ինչպէս նաեւ որոշ երկրների ռազմական բյուջէներում միջոցների դուրս գրման «կայուն կէտի» փոխարէն դարձեալ կլինեն Սիրիայի Արաբական Հանրապետութիւնը եւ Իրաքի Հանրապետութիւնը, որտեղ այս անգամ արդէն բաւական ուժեղ կլինեն Ռուսաստանի եւ Իրանի դիրքերը եւ կտրուկ կթուլանան ԱՄՆ-ի դիրքերը:

Հասկանալի է, որ ո՛չ ԱՄՆ-ին, ո՛չ Թուրքիային, ո՛չ Իսրայէլին, ո՛չ Սաուդեան Արաբիային, ո՛չ էլ սաուդա-թուրք-պակիստանեան եռեակի գլխաւորութեամբ Մերձաւոր Արեւելքում, գուցէ նաեւ ամբողջ մոլորակի վրայ աշխարհաքաղաքական իրադրութիւնը յօգուտ իրենց փոխելու հեռահար ծրագրեր ունեցող 34 պետութիւնների «Իսլամական կոալիցիայի» որոշ անդամներին` Մերձաւոր Արեւելքի այդ կարեւոր հատուածում թէկուզ Սիրիայի եւ Իրաքի պետական-քաղաքական սահմանների առմամբ ստատուս-քուոյի վերականգնումը, առաւել եւս` ռուս-իրանական կողմի հզօրացման բաղադրիչով, մեղմ ասած, բոլորովին ցանկալի չէ:

Այնուամենայնիւ, պաշտօնական Վաշինգտոնը, անընդհատ պնդելով հանդերձ, թէ Ռուսաստանը ամէն ինչ փչացնում է, կամ` մինչ այդ, յամենայն դէպս, նախատեսել էր, կամ էլ` ռուս-իրանա-չինական եւ այլ ուժերի ճնշման ներքոյ, ստիպուած է լինելու համակերպուել Մերձաւոր Արեւելքի վերաբաժանման պլաններում Ռուսաստանի դերի բարձրացմանը, ուստի եւ նրան հասանելիք բաժնի աւելացմանը: Դա կարող է դուր չգալ Թուրքիային, եւ նոյնիսկ Իսրայէլին, դեռ չասած սաուդցիների եւ միւս արաբական սուննի միապետութիւնների մասին, բայց Ռուսաստանը եւ Իրանը ըստ երեւոյթին տրամադրուած չեն նահանջելու...

Ամենայն հաւանականութեամբ, ԻԼԻՊ-ը ԱՄՆ-ի եւ Իսրայէլի համար այն մուրճն է, որով նրանք մտադիր էին ջարդելու Մերձաւոր Արեւելքի ներկայիս սահմանները... ՌԴ-ն հասկանալով դա, որոշակի չափով մասնակցում է այդ սահմանավերաձեւման գործընթացին...



*Նկարում` ՌԴ եւ ԱՄՆ արտաքին գործերի գերատեսչութիւնների ղեկավարները` Սերգէյ Լաւրով եւ Ջոն Քերրի*

Իսկ որ ԻԼԻՊ-ը ամերիկա-իսրայէլական գործիք է, ցոյց է տալիս այն տարօրինակ հանգամանքը, որ նա ոչ մի գործողութիւն, յամենայն դէպս որեւէ լուրջ վտանգ ներկայացնող գործողութիւն չի կատարում ո՛չ ԱՄՆ-ի, ո՛չ Իսրայէլի նկատմամբ...

Սիրիական գրեթէ հնգամեայ պատերազմի, Իրաքում Բաղդադի գրաւմանը եւ նաւթաբեր Մոսուլի վրայ տիրապետութեան պահպանմանը նպատակաուղղուած պատերազմի, Եւրոպայում ահաբեկչական գործողութիւնների շարքի, ամբողջ արաբական եւ մուսուլմանական աշխարհում ահաբեկչութիւնների ու խռովութիւնների արիւնահեղ հետնաբեմի վրայ այնքան բացայայտ է Իսրայէլի նկատմամբ ԻԼԻՊ-ի տարօրինակ չէզոքութիւնը, որ նոյնիսկ «փոքրիկ բեմադրութիւններով» այդ բացթողումն ուղղելու փորձերն անգամ չեն կարող ժխտել ԻԼԻՊ-ԱՄՆ-Իսրայէլ «եռեակ դաշինքի», ուստի եւ Թուրքիա-ԻԼԻՊ-ԱՄՆ-Իսրայէլ «քառեակ» դաշինքի թաքուն կամ բացայայտ գոյութեան փաստը... Այլ հարց է, որ այդ դաշինքում մէկ կամ երկու դաշնակիցներ դատապարտուած են արիւնոտ աշխարհաքաղաքական խաղում վերջնական զոհերից մի քանիսի դժբախտ ճակատագրին արժանանալու...

Իսկ մինչ այդ ԱՄՆ-ն, ըստ CBS-ի եւ այլ հեղինակաւոր լրատուամիջոցների տեղեկութիւնների, կարծես թէ պատրաստւում է իր հովանաւորեալներին` «չափաւոր ընդդիմադիրներին» օգնելու համար իր ցամաքային զօրքերն մտցնել Սիրիա եւ ԻԼԻՊ-ի դէմ ցամաքային ուղղակի ռազմագործողութիւններ սկսել, դրանով իսկ նմանուելով Թուրքիային, որն, իբր, այդ նպատակով իր զօրքերն էր մտցրել Իրաքի հիւսիս...

Չմոռանանք, որ ԱՄՆ-ը եւ իր գլխաւորած արեւմտեան կոալիցիան ԻԼԻՊ-ի դէմ մէկ տարուց աւելի «պատերազմում» են: Եւ այդ ընթացքում ԻԼԻՊ-ի տիրապետութեան ներքոյ գտնուող տարածքները սոսկ ընդլայնուել են... Կարելի է եզրակացնել, որ ԱՄՆ-ն փորձում է Սիրիայի հանգուցային տարածքներից մէկում, այն էլ ՌԴ-ի նախատեսուող ռազմաբազայից ոչ հեռու, իրեն «յենման կէտ» ստեղծել, որպէսզի ՌԴ-Սիրիա-Իրաք-Իրան կոալիցիայի կողմից ԻԼԻՊ-ի ոչնչացման դէպքում անգամ կարողանայ նոր պայքար ծաւալել յանուն սիրիական պետականութեան ոչնչացման...

Ասադի, իսկ աւելի ճիշտ` սիրիական ինքնուրոյն պետականութեան ոչնչացման ամերիկա-իսրայէլական նպատակներից չհրաժարուելու Վաշինգտոնի մտադրութեան մասին է խօսում նաեւ 2016թ. յունուարի 7-ին հրապարակուած Սիրիայի «ազատականացման», այսինքն` «Ասադազերծման» պլանը:

Եւ այսպէս, ըստ Վաշինգտոնի առաջարկած պլանի`

**2016թ. ապրիլ** - Ասադի եւ ընդդիմութեան ներկայացուցիչների միջեւ բանակցութիւնների արդիւնքում պիտի ստեղծուի անվտանգութեան յանձնախումբ` կոմիտէ. վերջինիս ձեւաւորումը պիտի ուղեկցուի կառավարական եւ ռազմական վերնախաւի անդամների, չափաւոր ընդդիմութեան առաջնորդների եւ մարտիկների համաներումով: Ապա ստեղծվում է Սիրիան կառավարող ժամանակաւոր մարմին.

**2016թ. մայիս** - Արձակւում է Սիրիայի ներկայիս խորհրդարանը, որին յաջորդում է ժամանակաւոր օրէնսդրական մարմնի ձեւաւորումը, դոնորների միջազգային համաժողովի անցկացումը. վերջինս ուղղուած կլինի երկրի վերականգնման ֆինանսաւորմանը.

**2016թ. նոյեմբեր** - Սիրիայի նոր սահմանադրութեան նախագծի նախապատրաստում. Սիրիայի ժողովրդին հնարաւորութիւն է տրւում իր կարծիքն արտայայտել այդ փաստաթղթի մասին հանրաքուէի ժամանակ.

**2017թ. յունուար** - Հանրաքուէի անցկացում.

**2017թ. մարտ** - Ասադը եւ իր մերձաւոր շրջապատը հեռանում են Սիրիայի կառավարման բոլոր դիրքերից.

**2017թ. օգոստոս** - խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնների անցկացում եւ Սիրիայի նորընտիր կառավարութեան կողմից բոլոր լիազօրութիւնների ստացում:

Սակայն ինչո՞ւ պիտի Ասադը վայր դնի իր լիազօրութիւնները եւ հեռանայ: Եթէ իրօք լսեն Սիրիայի ժողովրդի զգալի մասի կարծիքը, ապա դժուար թէ վերջինս համաձայն լինի Վաշինգտոնի այս պլանին, եթէ, իհարկէ, ճնշման ինչ-որ լծակներ չկիրառվեն...

Ուստի, ի՞նչ սպասի Սիրիան... Մինչեւ 2016թ. ապրիլը պէտք է շարունակուի պատերազմը, քանզի Սպիտակ տունը եւ իր դաշնակիցները պէտք է համոզեն Սիրիայի ժողովրդին, թէ Ասադը չարիք է, Ասադը պատերազմ է եւ Ասադը չի կարող լինել Սիրիայի օրինական կառավարողը... Ի դէպ, ԱՄՆ-ն կարող է երկարաձգել Մերձաւոր Արեւելքի բաժանման դեռ 2005-2006թթ. «բացայայտուած» արիւնահեղ գործողութիւնը (տե՛ս մեր «Մեծ Մերձաւոր Արեւելք» կամ «3-րդ Աշխարհամարտի Մերձաւորարեւելեան ռազմաբեմը» յօդուածը` «**Ազգ**»-ի նախորդ համարներում):

Սակայն ո՞րն է լինելու «Մերձաւորարեւելեան տորթի» բաժանման ձգձգման ամերիկեան պլանի նպատակը: Գուցէ Սպիտակ տունը ձգտում է ամբողջութեա՞մբ տիրանալ նրան, նոյնիսկ ձեւականօրէն հաշուի չառնելով Սիրիայի, Իրաքի եւ միւս երկրների ժողովուրդների կարծիքները... Բնականաբար, պաշտօնական Վաշինգտոնի այդ ձգտմանը խանգարում է ռուս-իրանա-չինական կողմերի գլխաւորած բաւական բազմանդամ ու բազմադէմ դաշինքը...

Գուցէ դա՞ է պատճառը, որ, ըստ ՏԱՍՍ-ի հաղորդագրութեան, Սպիտակ տունը պետքարտուղար Ջոն Քերրի բերանով 2016 թ. յունուարի 20-ին ՌԴ իր պաշտօնակցի` Սերգէյ Լաւրովի հետ հանդիպման ժամանակ յստակ յայտնել է, թէ ԱՄՆ-ն ցանկութիւն չունի Սիրիան, ի դէպ, նաեւ Իրաքը, ենթարկելու բաժանման...

Չի բացառում նաեւ, որ ամերիկեան վերնախաւում այս հարցի վերաբերեալ իրօք կա նաեւ տեսակէտների հակասութիւն...

Յունուարի 20-ին Շուէյցարիայի Ցիւրիխ քաղաքում արդէն իսկ անցկացուել են բանակցութիւններ ԱՄՆ-ի եւ ՌԴ արտաքին գործերի գերատեսչութիւնների ղեկավարների միջեւ: Հանդիպումն առաջինն էր նոր տարուայ ընթացքում, սակայն, ըստ Լաւրովի` ոչ վերջինը: Քննարկուել են Սիրիայի, Ուկրաինայի արեւելքում պատերազմի, Հիւսիսային Կորէայի, Իրաքի, Լիբիայի եւ Մերձաւոր Արեւելքի ու Հիւսիսային Աֆրիկայի այլ երկրների իրավիճակը: Այսինքն` ՄԱԿ-ի հովանու ներքոյ համաշխարհային հանրութեան ամենաազդեցիկ ուժերը փորձ են անելու` աշխարհը հետ պահել դէպի համաշխարհային պատերազմ տանող ուղուց...

Կողմերը որոշել էին չհետաձգել միջսիրիական, այսինքն Ասադ-ընդդիմութիւն բանակցութիւնները մինչեւ 2016 թ. փետրուարի վերջը... Ժամկէտի վերաբերեալ վերջնական որոշումը կկայացնի ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Պան կի Մունը: Հենց վերջինիս Սիրիայի գծով յատուկ դեսպանորդի` Ստեֆաննա դը Միստուրային էր յանձնարարուած հրաւէրներ ուղարկել միջսիրիական բանակցութիւնների մասնակիցներին: Մնում էր յուսալ, որ բանակցութիւններին ներկայացուած կլինէին սիրիական հասարակութեան առաւելագոյն լայն սպեկտրը: Բնականաբար, շահագրգիռ մեծ պետութիւնները փորձում էին բանակցութիւններին մասնակից դարձնել իրենց հովանաւորեալներին` դրանով իսկ Սիրիայում ապահովելով սեփական շահերի առաջմղումը...

Մոսկուան աշխատում է անպայման բանակցութիւններից դուրս թողնել ԻԼԻՊ-ը եւ «Ջեբհաթ-ան Նուսրան», որոնք մնում են իր թշնամիները եւ պէտք է լիակատար ոչնչացման ենթարկուեն: Բացի այդ, ՌԴ-ն ահաբեկչական է համարում նաեւ «Ջէյշ ալ Իսլամը» եւ «Ահրար աշ-Շամը» եւ դէմ է նրանց` քաղաքական գործընթացին մասնակցութեանը: Դրանցից առաջինը բազմիցս գնդակոծել է Դամասկոսի բնակելի թաղամասերը եւ ՌԴ դեսպանատունը, իսկ երկրորդը` հանդիսանում է «Ալ-Ղաիդայի» ուղղակի ժառանգորդներից մէկը: Մեծ տէրութիւնները չեն մասնակցելու միջսիրիական բանակցութիւններին, այլ միայն «ուղեկցելու են» դրանք, հնարաւորինս օգտակար ձեւերով:

Ահա այս կերպ նախապատրաստւում էին Սիրիայում քաղաքական կարգաւորման պաշտօնական նպատակն ունեցող միջսիրիական քաղաքական բանակցութիւնները` ՄԱԿ-ի հովանաւորութեան ներքոյ... Սակայն ռուս-սիրիա-իրանական հերթական յաջող ռազմագործողութիւնները եւ սիրիական բանակի մօտեցումը թուրքական սահմանին` Կիլիկիայի Ամանոսեան լեռների ուղղութամբ, առիթ դարձան միջսիրիական բանակցութիւնների ընդհատման:

*Յաջորդիւ կանդրադառնանք հակաասադական ուժերին, ինչպէս նաեւ պրո-ասադական ուժերի կառուցուածքին, սպառազինութեանն ու ռազմագործողութիւններին:*

AZG NEW SHABAT 1.QXD 18/02/2016 22:00 Page 11



# «ՌՈԲՈՏ - ՏԱՆԿ»

*Մարտական ռոբոտները միայն սահմանափակներ չեն… Նաեւ նկատի ունենաք, որ միայն պաշտպանողական մարտերի համար չեն… Վճռական յաղթանակը բերնամու հանդէպ ձեռք է բերւում յարձակմամբ… Մեր նախնիները, օրինակ՝ հինգերները, ինչպէ՞ս յաղթեցին եգիպտական հզօր տէրութեանը. իհարկէ, նաեւ տեխնիկակա՛ն առաւելութեամբ… մարտակառքեր եւ երկաթէ սրեր: Ահա՛ ինչու այսօր պէտք է չես չմնա՛նք համաշխարհային ռազմարուեստի եւ ռազմական տեխնիկայի զարգացումից… Ահա այս մասին է ռազմական պատմաբան Մնացական Ռ. Խաչատրեանի ստորեւ ներկայացուող յօդուածը…*



### Ռուսաստանյան «Ուրան-9» ռոբոտ-տանկը

Ըստ միջազգային քաղաքական հարաբերությունների լուսաբանմամբ զբաղվող ամերիկյան «The National Interest» («Ազգային շահ») երկամսյա հանդեսի՝ Ռուսաստանն աշխատում է իրականացնել իր նոր բազմագործառույթային ռոբոտատեխնիկական համալիրի՝ «Ուրան-9»-ի ռոբոտ-տանկի առաջնղումը համաշխարհային շուկաներում: Ամերիկյան հանդեսը գնահատել է ռուսաստանյան «Ուրան-9» ռոբոտ-տանկը որպես «Ապագայի ավետաբեր»: «Ուրան-9»-ը նախատեսված չէ հիմնական մարտական տանկերի՝ S-90-ի եւ S-14 «Արմատայի» փոխարինման համար: «Ուրան-9»-ը կկիրառվի հատուկ նշանակության զորքերի («սպեցնազ») եւ հեռավար հետախուզության (դիստանցիոն ռեքոնեսենս) ստորաբաժանումների աջակցության համար՝ նշում է ամերիկյան պարբերականը: Ռուսական ռոբոտ-տանկը զինված է 30-միլիմետրանոց 2Ա72 ինքնաձիգ թնդանոթով, նրա հետ «զույգված» 7,62-մմ գնդացիրով, ինչպես նաեւ հակատանկային Մ120 «Ատակա» կառավարելի հրթիռներով: «Մ120 «Ատակա» հրթիռների ներառումը «Ուրան-9» ռոբոտ-տանկի սպառազինության մեջ թույլ է տալիս այս մարտական մեքենային մարտի մեջ մտնելու առավել արդիական մարտական տանկերի հետ եւ ոչնչացնելու վերջիններիս 8000 մետր հեռավորությունից: Ռուսական այս մարտական ռոբոտը նաեւ հանդերձված է կառավարման լազերային համակարգով», ավելացնում է վերոհիշյալ ամերիկյան հեղինակավոր հանդեսը:

Ռուսական «Ռոսօբորոնէքսպորտ» պետական կազմակերպության փորձագետների գնահատմամբ՝ «Ուրան-9»-ը կարող է օգտագործվել տեղային պատերազմներում եւ հակաահաբեկչական ռազմագործողություններում: «Ռոսօբորոնէքսպորտ»-ի վերլուծության եւ հեռանկարային պլանավորման վարչության պետ Բորիս Սիմակինը հայտնել է, թե «Ռուսաստանցի զինական զինագործները տիրապետում են բոլոր անհրաժեշտ հնարավորություններին՝ արդիական ռազմական ռոբոտատեխնիկա ստեղծելու համար, որը պահանջված կլինի համաշխարհային շուկայում»: «The National Interest»-ի ռազմական տեսաբան **Դեյվ Մաջումդարը** նշում է, որ «Ուրան-9»-ը այսօրվա դրությամբ արեւմտյան նմանատիպեր չունի, չնայած ԱՄՆ-ը արդեն 20 տարի է, ինչ վարում է անվարորդ եւ անօդաչու մարտական մեքենաների մշակումներ: «Տեխնոլոգիայի վրա դեռ հարկավոր է աշխատել, սակայն արդեն իսկ այժմ «Ուրան-9»-ը կարելի է անվանել ապագայի ավետաբեր»,- նկատում է ամերիկացի փորձագետը, ընդգծելով, թե ռոբոտացված մարտական մեքենաները ապագայում կարող են լիովին փոխարինել իրենց նախորդներին»:

Ելնելով վերոհիշյալ տեղեկատվությունից, ինչպես նաեւ մեր տրամադրության ներքո առկա այլ տվյալներից, կարելի է անել հետեւյալ եզրակացությունները ու առաջարկությունները.- 1. Ռուսները արագորեն առաջ են շարժվում ռազմական ռոբոտաշինության բնագավառում:- 2. Այս բնագավառում մի քանի տասնյակ երկրներ, այդ թվում ռազմական գերտերություններ ՌԴ-ն եւ ԱՄՆ-ն սուր մրցակցության մեջ են:- 3. Հայերս կարող էինք այդ բնագավառում հաջողություններ ունենալ: Այդ մասին առաջարկություններ եմ ներկայացրել ՀՀ ՊՆ ղեկավարությանը դեռեւս 1993-1995թթ.: Այժմ էլ ուշ չէ… - 5. Դա ո՛չ միայն ռազմավարական մասշտաբի ֆինանսատնտեսական կարեւորություն կունենա ՀՀ համար, այլեւ՝ կնպաստի մեր երկրի ռազմական անվտանգության ամրապնդմանն ու հզորացմանը: Այս հարցին դարձյալ անդրադարձել եմ «Անդին» հանդեսի 2015թ. թիվ 6, 7-8 համարներում տպագրված իմ հոդվածում («Հասուցում Հայոց ցեղասպանության համար. ռազմաքաղաքական տեսանկյուն»):

**ՄՆԱՑԱԿԱՆ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# Լեւոն Չուգասզյանը Մոնպելիեի ԳԱ անդամ



Մոնպելիեի գիտությունների եւ գրականության ակադեմիան ստեղծվել է 1846 թվին, ունի 90 լիիրավ, 20 պատվավոր եւ 42 թղթակից անդամներ: Վերջերս այդ հեղինակավոր հաստատության անդամ է ընտրվել Երեւանի պետական համալսարանի հայ արվեստի պատմության եւ տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի վարիչ, պրոֆ. Լեւոն Չուգասզյանը: Անցյալ տարի նա ընտրվել էր Միլանի Ամբրոզյան ակադեմիայի անդամ:

«**ԱԶԳ**»-ը շնորհավորում է հայ գիտնականին, մաղթելով ստեղծագործական նորանոր հաջողություններ:

# Ըստ «Ինդիփենդենտի», Սիրիայում հաղթողներն արդեն հայտնի են

Սիրիայի պատերազմը չի ավարտվել, բայց արդեն կարելի է ասել, թե ովքեր կդառնան առավել հավանական հաղթողները եւ պարտվողները, գրում է բրիտանական «Ինդիփենդենտ» թերթը:

Ռուսաստանն առաջատար դեր է խաղում հակամարտության կարգավորման գործում: Եվ եթե մի քանի ամիս առաջ քննադատներն ասում էին, թե Մոսկվան կզղջա պատերազմին միջամտելու համար, ապա այսօր ոչ ոք չի կասկածում, որ հենց Ռուսաստանն է դարձել պատերազմի ելքը վճռող գլխավոր ուժը:

Ռուսաստանի վերածնունդը ակնհայտ դարձավ Մյունխենի կոնֆերանսում, որտեղ Ջոն Քերրին եւ Սերգեյ Լավրովը հայտարարեցին Սիրիայում զինադադարի հաստատման մասին:

Թերթը կարծում է, որ ռուսական օդուժի եւ շիա մարտիկների օգնության շնորհիվ Բաշար Ասադը տանուլ չի տա պատերազմը: Նաեւ ակնհայտ է, որ Ասադի եւ Ռուսաստանի ուժերը վերջերս էական հաջողությունների են հասել հակաահաբեկչական պայքարում:

Սակայն ԱՄՆ-ի տարածաշրջանային դաշնակիցները չեն համակերպվի պարտությանը: Այսպես, Թուրքիան եւ Սաուդյան Արաբիան քննարկում են Սիրիայում ռազմական գործողություն սկսելու հարցը, բայց, թերթի կարծիքով, նրանցից ոչ մեկն այլեւս չունի Սիրիայի իրադրության վրա ազդելու երբեմնի կարողությունը:

**Պ. Ք.**

# Ցավակցական

Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության երեւանյան մասնաճյուղի աշխատակիցները ցավակցում են ՀՀԿ առաջին փոխնախագահի Արամ Գ. Սարգսյանին՝ նրա սիրելի զարմիկի՝ **Արթուր Վարդանյանի** վաղաժամ մահվան կապակցությամբ եւ վշտակցում նրան:

«**Ազգ**»ը միանում է ցավակցողներին:

# World Press Photo Award 2016- ի մրցանակակիրների թվում նաեւ Ադրիանե Օհանեսյանի լուսանկարը

Փախստականների ճգնաժամն իր արտացոլումն է գտել համաշխարհային լուսանկարչության ամենամյա մրցույթում՝ World Press Photo Award 2016- ի աշխատանքները դիտելիս դրանք առանձնանում են ողբերգական երանգներով: Տարվա լուսանկար է ճանաչվել «Հրատապ լուրեր» անվանակարգում առաջին մրցանակ ստացած ավստրալիացի լուսանկարիչ Ուորրեն Ռիչարդսոնի (Warren Richardson) լուսանկարը: Փախստականը փորձում է նորածնին անցկացնել Հունգարիայի փշալարապատ սահմանից անդին:



Ուորրեն Ռիչարդսոն



Ադրիանե Օհանեսյան

«Արդի թեմա» անվանակարգում երկրորդ մրցանակի է արժանացել Ադրիանե Օհանեսյանի (Adriane Ohanesian) Սուդանում ռմբահարվածների հետեւանքով ծանր այրվածքներ ստացած յոթնամյա Ադամ Աբդելին պատկերող լուսանկարը:

**Ան. Հ.**
**Գերմանիա**

# Խոշորագույն ռազմական տերությունները

Ամերիկյան Global Firepower կայքը հրապարակել է ռազմական զորության համաշխարհային ցուցիչները, որոնց համաձայն խոշորագույն ռազմական տերություններն են ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ Չինաստանը:

126 պետությունների ցանկում հաշվի են առնված միջուկային զենքի առկայությունը, ինչպես նաեւ քաղաքական ու տնտեսական գործոնները: GFP-ի փորձագետների տվյալներով, Ռուսաստանը ԱՄՆ-ից գրեթե կրկնակի շատ տանկեր ունի (15398 եւ 8848), բայց զիջում է օդանավերի թվով (3547 եւ 13444):

Չինաստանը մարտամեքենաների թվով գերազանցում է ԱՄՆ-ին, բայց զիջում է Ռուսաստանին: Փորձագետները հաշվի են առնում հինգ տասնյակ գործոններ, որոնց մեջ գլխավորը պաշտպանական ծախսերն են: Նաեւ հաշվի են առնվում բնապաշարների արդյունահանման ծավալները, ճանապարհների երկարությունը եւ մարդկային ռեսուրսները:

Վարկանիշային ցանկում չորրորդ տեղը զբաղեցնում է (ինչպես անցյալ տարի) Հնդկաստանը: Եվրոպական երկրների մեջ առաջատարը Մեծ Բրիտանիան է: Տասնյակում հայտնվել են նաեւ Ֆրանսիան, Գերմանիան եւ Թուրքիան:

**Պ. Ք.**

AZG NEW SHABAT 1.QXD 18/02/2016 22:00 Page 12



# Ակադեմիկոսների կիսանդրիները՝ մայր բուհում







Օրերս հայ բանասիրության ֆակուլտետում անսովոր իրարանցում էր:

Մեկ հարկի տակ էին հավաքվել համալսարանի դասախոսական կազմը, գրողներ, գրականագետներ, ուսանողներ, իսկ առիթն ակադեմիկոսներ Արսեն Տերտերյանի, Էդվարդ Ջրբաշյանի եւ Հրանտ Թամրազյանի կիսանդրիների բացման հանդիսավոր արարողությունն էր:

Բրոնզե կիսանդրիների հեղինակը քանդակագործ Տիգրան Մուրադյանն է, որն ընդգծում է, թե երբ քանդակում ես հայտնի մարդկանց, հնարավորինս պետք է իրենց հերոսի կերպար տաս, պետք է զգաս, որ անես. « Երբ ծեփում ես, ինքը թելադրում է, թե ոնց պետք է անես»:

Միջոցառման շրջանակում Հրանտ Թամրազյանի անունով է անվանակոչվել հայ գրականության եւ պատմության ամբիոնը:

«Նրանք, որոնք շփվել են անվանի ակադեմիկոսների հետ, կփաստեն, որ շատ բան են սովորել նրանցից»,- հանդիպման ժամանակ նշեց ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան **Արծրուն Ավագյանը** եւ ավելացրեց. «Կիսանդրիների տեղադրումը պատահական չէ. ամեն օր նրանց առջեւով են անցնելու սերունդներ, ուսանողներ, ովքեր հեռակա կարգով զրուցելու են նրանց հետ, ովքեր նրանց ապրած կյանքից, նրանց գրքերից սովորելու են ապրել հայեցի, ազնիվ, ապրել նվիրված լինելով աշխատանքին եւ ժողովրդին»:

ԵՊՀ ռեկտոր **Արամ Սիմոնյանն** էլ փաստեց, որ կիսանդրիների տեղադրումը համալսարանի երախտիքի մի փոքր մասն է միայն դեպի մեծանուն ակադեմիկոսները. «Այսօր իսկապես կա մեծերին մեծարելու անհրաժեշտություն: Այն մարդիկ, որոնք քայլել են այս միջանցքներով, սերունդներ են դաստիարակել, գիտելիք ու իմաստություն են հաղորդել, իսկապես արժանի են, որ մենք նրանց հիշենք: Ուսանողներն ամեն անգամ այս կիսանդրիներին նայելիս երախտագիտության մեծ զգացում են ապրելու դեպի մեծ ուսուցիչները, քանզի անանց արժեքների թվում է նաեւ «ուսուցիչ» հասկացությունը, որը կենարար աղբյուր է, ուսուցիչը, ով մարդացնում է մարդուն»:

Միջոցառման ընթացքում ելույթ ունեցան նաեւ ժառանգները՝ Հրանտ Թամրազյանի որդին բան. գիտ. դոկտոր **Հրաչիկ Թամրազյանը**, եւ Էդվարդ Ջրբաշյանի դուստրը Հայ բանասիրության ֆակուլտետի գրականության տեսության եւ գրաքննադատության ամբիոնի վարիչ **Աշխեն Ջրբաշյանը:**

«Այսօր, եթե մենք չհիշենք մեր մեծերին, ապա չենք կարող առաջ շարժվել: Եվ ընդհանրապես ազգը ազգ չի լինի առանց հիշողության: Պետք է նշեմ, որ նրանց թողած ժառանգությունը մեզ համար այսօր ուղենիշ է»,- ասաց Աշխեն Ջրբաշյանը:

Հայաստանի գրողների միության նախագահի **Էդվարդ Միլիտոնյանն** էլ հավելեց, որ այսպիսի միջոցառումները ապրելու մղում են տալիս, եւ չպետք է մոռանալ, որ մեծ ակադեմիկոսներն իրենց ժամանակին սատար են եղել գրողներին ու գրականության կողքին եղել:

Ս. Հ.

# Բնակարանամուտ Կոտայքի մարզում

**ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից ֆինանսավորվող բնակարանաշինության ծրագրով 2015թ. տարեվերջին Կոտայքի մարզում ավարտվել է մեկ կիսակառույց տան շինարարություն եւ վերանորոգվել է եւս մեկը: ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը եւ «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» նախագահ Աշոտ Եղիազարյանն այցելել են Մայակովսկի համայնք՝ երկու ընտանիքների արդեն բարելավված բնակարանային պայմանները տեսնելու եւ միասին նրանց ուրախությունը կիսելու:**

**Արթուր Անտոնյանի ընտանիքը 13 տարի բնակվել է հայրական տանը. 11 անձ՝ երեք սենյականոց բնակարանում: Նրանց համար հինգ տարի որպես տանիք է ծառայել նաեւ արտերկրում գտնվող հարեւանի տունը: Արդեն մի քանի տարի է Անտոնյանները սկսել են իրենց տան շինարարությունը, սակայն չեն կարողացել ավարտին հասցնել:**



**«Տուն ունենալը երազ էր ինձ համար: Երեխաներս հասակ են առել տնից տուն տեղափոխվելով՝ այդպես էլ սեփական անկյուն չունենալով: Հարազատ տան պատերի ջերմության զգացումը չի կարելի համեմատել ոչինչի հետ: Հիմա մեր երջանկությունն ու երախտագիտությունն անսահման են»,-ասել է Նաիրա Անտոնյանը՝ ընտանիքի մայրը:**

**«Արդյունքի առումով՝ այս ծրագրով իրականացվող բոլոր միջոցառումները նույնն են. բնակարանամուտ է նշվում: Տարբեր են, սակայն, շահառու դարձած ընտանիքների զրկանքներն ու տարիների ապրումները: Մեծ ձեռքբերում է հուսահատությունից անորոշության մեջ հայտնված ընտանիքներին դրական լիցք հաղորդելը: Որքան բարություն եւ դրական էներգիա հաղորդվի այսպիսի ընտանիքներին, այնքան արդյունավետ կլինի տունը շենացնելու, արժանի զավակներ դաստիարակելու եւ երկրին օգտակար լինելու նրանց նպատակը»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**«Հերթական հաջողությունն է, որին այսօր ականատես ենք լինում: Հերթական հայ ընտանիքն է, որ այսուհետեւ ամուր հիմքերի վրա է կանգնած: ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ տարիների համագործակցության արդյունքում 93 ընտանիքի համար լուծվել է տան խնդիրը, ինչը նոր հնարավորությունների ու հաջողությունների հիմնաքար է դարձել այդ ընտանիքների համար»,- ասել է Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» նախագահ Աշոտ Եղիազարյանը:**

**2007թ.-ից ի վեր իրականացվող բնակարանաշինության ծրագրի շրջանակներում, ՎիվաՍել-ՄՏՍ-ը 228,3 մլն. ՀՀ դրամի ներդրում է կատարել՝ օգնելով բարելավել Հայաստանի տասը մարզի 31 գյուղի (այդ թվում՝ 10 սահմանամերձ գյուղի) սոցիալապես անապահով 480 բնակչի կենսական պայմանները:**

## «Հատուկ» սակագնային պլան. ավելի մեծ ինտերնետ փաթեթ՝ առանց ամսավճարի փոփոխության

**Այժմ ՎիվաՍել-ՄՏՍ-ի «Հատուկ» սակագնային պլանի շրջանակում տրամադրվող ինտերնետ փաթեթի ծավալը մեծացել է եւ կազմում է ամսական 2000 ՄԲ՝ նախկին 500 ՄԲ փոխարեն:**

**«Ժամանակի ընթացքում ավելի ու ավելի կենսական է դառնում ինտերնետի անհրաժեշտությունը մեր առօրյայում: Ինտերնետի օգտագործման ծավալներն օրըստօրե ավելանում են: Ընդառաջելով սպառողների պահանջներին՝ այժմ «Հատուկ» սակագնային պլանի բաժանորդներին կտրամադրվի նախորդից չորս անգամ ավելի մեծ ծավալի ինտերնետ-փաթեթ»,- նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Հիշեցնենք, որ «Հատուկ» սակագնային պլանին մինչեւ 2016թ. հուլիսի 31-ը բաժանորդագրվելու դեպքում՝ ամսավճարը կազմում է ընդամենը 2500 դրամ: Ֆիքսված ամսավճարի դիմաց այս սակագնային պլանի բաժանորդները նաեւ ստանում են ամսական 1500 րոպե ներցանցային խոսելաժամանակ եւ դեպի ՀՀ բջջային ցանցեր 150 SMS հաղորդագրություն ուղարկելու հնարավորություն:**

# Հայաստանի կինեմատոգրաֆների միությունը հայտարարում է մրցանակաբաշխություն

Հայաստանի կինեմատոգրաֆիստների միությունը ՀՀԿ-ի, ՌՀՄ-ի եւ ՀՀՄՆ-ի հետ համատեղ հայտարարում են «Համազգային միասնությունը հավաքական ուժի եւ հզորության գրավական» թեմայով, Հայաստանի անկախության 25-ամյա հոբելյանին նվիրված 2016թ. լավագույն վավերագրական ֆիլմերի մրցանակաբաշխություն:

Վավերագրական ֆիլմերի մրցանակաբաշխության թեման ծավալուն է եւ կարող ընդգրկել հայ ժողովրդի համար վճռորոշ իրադարձություններ: Ցանկալի է, որ մրցանակաբաշխությանը ներկայացված ֆիլմերն արծարծեն անկախության 25 տարիների ընթացքում՝ համազգային շահերի շուրջ հայ ժողովրդի միասնության ապահովման ուղղությամբ ձեռք բերված նվաճումները, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության հետ առնչվող հիմնախնդիրները: Մրցանակաբաշխության համար արդյունավետ նյութ կարող են դառնալ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված, ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան իրադարձությունները:

Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել ինչպես պետական, այնպես էլ անկախ ստուդիաները, որոնց ղեկավարները կինեմատոգրաֆիստների միության անդամներ են:

**Ֆիլմերի համար սահմանված են հետեւյալ մրցանակները**

*ա) մեկ առաջին կարգի մրցանակ՝ 3 մլն. դրամ:*
*բ) մեկ երկրորդ կարգի մրցանակ՝ 2 մլն. դրամ:*
*գ) երկու խրախուսական մրցանակ՝ մեկական մլն.դրամ:*
*Մրցութային ֆոնդը կազմում է 7 մլն. դրամ*

Պահպանելով մրցանակաբաշխության համար սահմանված 7 միլիոնանոց մրցանակային ֆոնդը, մրցութային հանձնաժողովին իրավունք է վերապահվում, ելնելով ներկայացված ֆիլմերի թեմատիկայից, բովանդակությունից, կատարել մրցանակային ընդհանուր ֆոնդի 10%-ը չգերազանցող գումարային տեղաշարժ:

Մրցութային ֆիլմերը պետք է ներկայացնել Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն (Երեւան, Վարդանանց 18 հասցեով) մինչեւ 2016 թվականի օգոստոսի 1-ը: Արդյունքները կամփոփվեն 2016 թվականի սեպտեմբերին:

Հայտերը ընդունվում են մինչեւ մարտի 20-ը:

Մրցութային հանձնաժողով
Երեւան, Վարդանանց 18
Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն
հեռ. 010 54 05 28
Էլ փոստ. unikino@yandex.com

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 18.2.2016, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.qxd 18/02/2016 21:36 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ

Թիվ 6(258)
19 ՓԵՏՐՈՒԱՐ,
2016

Գոհար ԲՈՏՈՅԱՆ

*Մոսկվայում «Ազգ»-ի հատուկ թղթակից*

# ԿԱՐԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. նոր մարտահրավեր Լեւ Տոլստոյի՞ն

Հայազգի հայտնի կինոռեժիսոր, սցենարիստ, պրոդյուսեր, «Մոսֆիլմ» կինոկոնցեռնի գլխավոր տնօրեն, ՌԴ ժողովրդական արտիստ, ՌԴ պետական մրցանակների եռակի դափնեկիր Կարեն Գեորգիի Շահնազարովը կրկին հայտնվել է դասական մշակույթը գնահատողների ուշադրության կենտրոնում: Մեր տաղանդավոր հայրենակիցը, ով ժամանակ առ ժամանակ հանդիսատեսին ներկայանում է ինքնատիպ ձեռագրով ու թարմ ասելիքով օժտված իր ֆիլմերով՝ անցյալ տարվա կեսերից անսպասելի եւ համարձակ հայտ ներկայացրեց կինոաշխարհին՝ հայտարարելով, որ պատրաստվում է էկրանավորել Լեւ Տոլստոյի «Աննա Կարենինա» ստեղծագործությունը եւ արդեն սկսվել է դերասանների ընտրության (casting) գործընթացը:



«Աննա Կարենինան» ռուս եւ համաշխարհային կինոարտադրությունում հայտնվել է շուրջ 30 անգամ՝ Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Հնդկաստանում: Միայն Ռուսաստանում այն էկրանավորվել է 6 անգամ՝ համր կինոյի ժամանակներից սկսած մինչեւ 2009 թ.՝ ռուս կինոռեժիսոր Սերգեյ Սոլովյովի ֆիլմը: Այսօր հերթը մեկուկես տասնյակից ավելի ֆիլմերով հանդիսատեսին վաղուց հայտնի եւ միջազգային հեղինակավոր կինոփառատոներում բազմաթիվ մրցանակների արժանացած Կարեն Շահնազարովինն է: Նման բարդ եւ պատասխանատու բեռը ստանձնած ռեժիսորը, որ արդեն ամեն ինչ ասված այս լուսնի տակ, անշուշտ, գիտակցում է իր խոսքի արժեքը, հայտարարել է, որ իրեն ամենեւին չեն կաշկանդում մինչ այժմ եղած էկրանավորումները, ինքը հանդիսատեսին նոր խոսք է ասելու եւ սիրով լծվել է ֆիլմի նկարահանման աշխատանքներին:

Եվ ահա օրերս՝ փետրվարի 8-ին, Կարեն Շահնազարովի հրավերով «Մոսֆիլմ» էր այցելել արտասահմանյան առաջատար հեռուստաընկերությունների, թերթերի եւ ռադիոյի շուրջ 70 լրագրողներից բաղկացած ներկայացուցչական խումբ՝ Ճապոնիայից, Իսպանիայից, Իտալիայից, Բրազիլիայից, Գերմանիայից, Արգենտինայից, Չինաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից, ինչպես նաեւ՝ Մոսկվայում «Ազգ»-ի հատուկ թղթակից Գոհար Բոտոյանը:

Այցելությունը նպատակ ուներ լրագրողներին ծանոթացնելու խորհրդային ժամանակներում աշխարհում կինոգիգանտի համարում ունեցող «Մոսֆիլմ» կինոստուդիայի ներկայիս գործունեությանը, եւ, մասնավորապես, «Աննա Կարենինա» ֆիլմի նկարահանման աշխատանքներին, որոնք այս օրերին ընթանում են հենց կինոստուդիայի տաղավարներում:

1998-ից «Մոսֆիլմ» կինոկոնցեռնի գլխավոր տնօրենի պաշտոնը ստանձնած Կարեն Շահնազարովի ղեկավարությամբ՝ մեծ ճանապարհ անցած կինոստուդիան, հաղթահարելով 90-ականների խորը ճգնաժամը, այսօր դարձել է Եվրոպայի խոշորագույն կինոարտադրական համալիրներից մեկը: Լրագրողների խումբը կինոստուդիայի մասնաշենքերում եւ բաժիններում շրջայց կատարելուց հետո հնարավորություն ունեցավ նաեւ ականատես լինելու «Աննա Կարենինայի» որոշ դրվագների նկարահանումների անմիջական ընթացքին: Տպավորիչ էր հատկապես իտալացի լրագրողների արձագանքը: Ուշի-ուշով հետեւելով Կարեն Շահնազարովի հրահանգներին եւ պրոֆեսիոնալ դիտարկումներին՝ նրանք դիմեցին ֆիլմի գլխավոր ռեժիսորին.

- Իտալիայում հանդիսատեսը Ձեզ ճանաչում է որպես մեր ժամանակների տաղանդավոր եւ ինքնատիպ ռեժիսոր: Մեզ համար մեծ պատիվ է Ձեզ հետ անմիջապես շփումը, անհամբեր սպասում ենք Տոլստոյի անմահ ստեղծագործության էկրանավորմանը եւ շուտափույթ ցուցադրությանը նաեւ մեր երկրում...

Իսկ գերմանացի լրագրողի այն հարցադրմանը, թե ժամանակակից աշխարհում ինչը ստիպեց կրկին հետադարձ հայացք ձգել «Աննա Կարենինայի» ժամանակներին՝ Շահնազարովը պատասխանեց.

- Տղամարդ-կին հարաբերությունները, սերը, ընտանիքը հավերժական թեմաներ են, ինչպես բոլոր ժամանակներում խիստ այժմեական է հնչում հանճարեղ Տոլստոյի հայտնի ձեւակերպումը. «Բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար, յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի»: Իսկ ֆիլմը մեծ էկրան բարձրացնելու մտահղացումը ոչ թե հետադարձ հայացք էր, այլ Լեւ Տոլստոյից մինչեւ մեր ժամանակները ձգվող մի շարք հարցադրումների պատասխանները գտնելու մտահոգություն, անհրաժեշտություն, ու նաեւ՝ բանավեճ, որը մեր սերունդը պարտավոր էր ձեռնարկել...

Կարեն Շահնազարովը լրագրողներին տեղեկացրեց նաեւ, որ ֆիլմի գլխավոր կերպարները մարմնավորում են Ռուսաստանում ճանաչված դերասաններ Ելիզավետա Բոյարսկայան՝ Աննա Կարենինայի դերում եւ Մաքսիմ Մատվեեւը՝ Ալեքսեյ Վրոնսկու դերում:

Ֆիլմը, որը նախատեսված է ավարտին հասցնել այս տարվա ամռանը, նկարահանվում է ոչ պետական միջոցներով: Լիամետրաժ կինոնկարից բացի, գլխավոր ռեժիսորը մտադիր է ստեղծել նաեւ ֆիլմի հեռուստատեսային չորսմասանոց տարբերակը: Իրադարձային տեսարանների նկարահանումները կատարվել են Ղրիմում, իսկ եզրափակիչ դրվագը, երբ հերոսուհին իրեն նետում է գնացքի տակ, նախատեսված է նկարահանել Սանկտ Պետերբուրգի երկաթուղային կայարաններից մեկում...

Կարեն Շահնազարովը դժվարանում է ասել, ֆիլմը կնվաճի՞ Հոլիվուդի բարձունքները, թե՞ ոչ: Բայց որ մեկ շնչով նայվող, այժմեական հարցադրումներ պարունակող եւ հոգեբանական բախումներով առլեցուն հետաքրքրական ստեղծագործություն է սպասում հանդիսատեսին՝ վստահ է եւ համոզված...

Անհրաժեշտ վերջաբան

Ավելորդ չեմ համարում ընթերցողին հիշեցնել, որ Կարեն Շահնազարովը խորհրդային ականավոր քաղաքագետ եւ գիտնական, Միխայիլ Գորբաչովի պաշտոնավարման տարիներին նրա խորհրդական աշխատած Գեորգի Շահնազարովի որդին է: Կարենը ծնվել է 1952-ին, Կրասնոդարում: Ավարտել է Մոսկվայի Կինոյի ինստիտուտը: Շուրջ մեկուկես տասնյակից ավելի ֆիլմերի հեղինակ է, 3 զավակների՝ երկու տղա եւ մեկ աղջիկ, հայր: Հպարտանում է իր հայկական արմատներով, անունով, եւ, մանավանդ, արցախյան հայտնի տոհմի ազգանունով: Նրա «Սպիտակ վագր» ֆիլմը մի իսկական հաղթարշավ ունեցավ, որի երեւանյան պրեմիերան կայացավ 2013-ի հունվարին: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Երեւանում նրան պարգեւատրեց «Պատվո շքանշանով», պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը՝ «Մարշալ Բաղրամյան» շքանշանով, իսկ Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահ Ռուբեն Գեւորգյանցն էլ հանձնեց «Մշակույթի ասպետ» մեդալը՝ համաշխարհային կինոյում նրա ունեցած ավանդի համար:

- Ցեղասպանության եւ ղարաբաղյան թեմաները վաղուց են ինձ հետաքրքրում, ես չափազանց մեծ զգուշությամբ ու պատասխանատվությամբ եմ մոտենում այդ ցավոտ հարցերին,- ասում է Կարեն Շահնազարովը: Եվ չի բացառվում, որ հայկական երկու գլխավոր թեմաներից մեկը մի օր կարող է հայտնվել իմ նոր ֆիլմի առանցքում: Պետք է այդ պահը հասունանա իմ սրտում...

## ԳՈՒՅԺ
## ԱՐՄԱՆ ՄԱՆԱՐՅԱՆ



*Փետրվարի 16-ին, 86 տարեկանում կյանքից հեռացավ ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, կինոռեժիսոր Արման Մանարյանը:*

*Ա. Մանարյանը ծնվել է 1929 թվականին, Թեհրանում, 1946 թվականին հայրենադարձվել է Հայաստան: Սովորել է Երեւանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, ապա Երեւանի պետական կոնսերվատորիայում: Այնուհետեւ ուսումը շարունակել է Համամիութենական կինեմատոգրաֆիայի պետական ինստիտուտում (ՎԳԻԿ): Մեծ է նրա վաստակը հայկական կինեմատոգրաֆիայի զարգացման գործում: Նրա կորուստը սգում ենք բոլորս: Առաջիկայում նրա վաստակին անդրադառնալու առիթներ կունենանք: Մինչ այդ՝ մի քանի տող նրա մասին՝ որպես հրաժեշտի խոսք:* Խմբ.:

**Դժվար է պատկերացնել, որ հայերենադարձ Արման Մանարյանն ընդունվում է Մոսկվայի ՎԳԻԿ, որտեղ ռուսերենի իմացությունը պարտադիր էր, իսկ այդ լեզվի նվազ իմացությունը, որպես կանոն, բուհից դուրս մնալու հիմնավոր պատճառ կարող էր դառնալ հատկապես հայերի համար: ՎԳԻԿԻ-ի ուսանողը 1961-ին նկարահանում է «Տժվժիկ» կարճամետրաժ ֆիլմը՝ անմիջապես իր վրա հրավիրելով համամիութենական մասնագետների ուշադրությունը: Երիտասարդ ռեժիսորի առաջին աշխատանքը՝ Ասրպետի փոքրիկ պատմվածքի էկրանավորումը, դասվում է մեր դասական ֆիլմերի շարքին: Արեւմտահայ կենցաղի, հասարակության նկարագրի, մարդկային հարաբերությունների մեկնաբանության նոր մոտեցում ու ձեռագիր էր «Տժվժիկը», որտեղ խաղում են մեր բեմի մեծերը: Երիտասարդ ռեժիսորի տաղանդին հավատալով՝ մյուս ֆիլմերում եւս նկարահանվեցին անվանի դերասաններ: Ժանրային առումով նորություն էր «Կարինե» երաժշտական ֆիլմը, իսկ Շիրվանզադեի «Մորգանի խնամին» էկրանի վրա մի այլ հմայք ստացավ: Արման Մանարյանին հաջողվել է ստանալ այդ ժամանակների հասարակության, բարքերի, կենցաղավարության ճիշտ պատկերն ու կոլորիտը:**

**Մեկ այլ գույն բերեց «Հեղնար աղբյուրը»: Բոլորովին ուրիշ միջավայր ու թեմա, ուրիշ կերպարներ ու ասելիք: Մանարյանական ձեռագիրն այս ֆիլմում այլ դրսեւում ստացավ:**

**Արման Մանարյանի հայացքը 1990-ականներին դարձյալ ուղղվեց արեւմտահայ գրականությանը: Երվանդ Օտյանի «Ընկեր Փանջունու» էկրանավորումը նոր ժամանակների կարծեցյալ հերոսի նախատիպն ստեղծեց: Այս անգամ եւս Արման Մանարյանի ռեժիսորական մոտեցումը տարբերվեց իր նախորդ ֆիլմերից:**

**Արման Մանարյանը ստեղծագործել է այլ ժանրում եւս՝ անիմացիա: Նրա «Հայելու հեքիաթը» մինչեւ հիմա հայկական մուլտիպլիկացիայի ամենահաջողված ձեռքբերումներից է: «Հայելու հեքիաթից» մի քանի տասնամյակներ անց ռեժիսորն անդրադարձավ հայկական էպոսին: «Սասնա ծռերի» սցենարը դեռ 1995-ից էր պատրաստ, իսկ Խորեն Աբրահամյանի հնչյունավորումը նա ձայնագրել ու պահել էր այն երջանիկ օրվա համար, երբ կսկսեր նկարահանել «Սասնա ծռերը»: 2001-2009 թթ-ին Արման Մանարյանն աշխատել է այդ մուլտֆիլմի վրա՝ ամեն տարի նկարահանելով ընդամենը տասը րոպե:**

**ՆԱԻՐ ՅԱՆ**

# Մեր Արմենակի վերադարձը

## Հրանտ Հակոբյանի նոր ֆիլմը

Սերգեյ ԳԱԼՍՏՅԱՆ

Կինոգետ, գրող

Կինոռեժիսոր Հրանտ Հակոբյանը, ում անունը վաղուց հայտնի է վավերագրական կինոյի երկրպագուներին, գեղարվեստական կինոյից (որպես 2-րդ ռեժիսոր նա հանդես է եկել «Երջանկության մեխանիկա» , «Հրդեհ», «Ձիավոր, որին սպասում էին» խաղարկային ֆիլմերում) գալով «Հայկ» վավերագրական ֆիլմերի կինոստուդիա (1988), ստեղծեց միմյանց հաջորդող բավականին հետաքրքրական աշխատանքներ: Նշեմ լավագույններից «Մոնթե» կինոակնարկը (1993, օպեր. Լ.Պետրոսյան): Եթե յուրաքանչյուր արվեստագետ փոքր ինչ հոգեբան է, ունի լավ ճաշակ եւ գեղարվեստական մտածողություն (իսկ նա զինված է դրանցով), ապա նա չէր կարող չստեղծել առնական հայի, ռազմագիտակ զորավարի հզոր կերպարը: Մոնթեն էկրանին հայտնվում է արցախյան ազատամարտի հերոսական դրվագներում որպես լեգենդար հրամանատար:

Հիշեցնեմ նաեւ «Հավերժական թռիչք» (Հրանտ Դինք)» սրտառուչ ֆիլմը (2007, օպեր. Ս. Բաբասյան), որը պատմում է պոլսահայ համայնքի նշանավոր անհատականության գործունեության ու նրա հավերժական թռիչքի մասին: Պատմում է հարազատի ջերմությամբ, ցավը սրտում, տառապանքով, միաժամանակ սիրով ու հպարտությամբ՝ առ Հրանտ Դինքը...

Ինչո՞ւ հիշեցի այս երկու աշխատանքները: Հիշեցի, որովհետեւ մեր հայության, մեր սփյուռքի հզոր արմատներց է սերված նաեւ մեր Արմենակը, մի հայորդի, որի կյանքն ու գործը շատերիս համար անհայտ էր ու ծպտված... Եվ ես պատրաստվում եմ ըստ Հրանտ Հակոբյանի «Մեր Արմենակը» լիամետրաժ նոր ֆիլմի, պատմել մեր ընթերցողներին նրա ով լինելու, նրա հեղափոխական ոգու ու հերոսական կերպարի մասին:

...2015-ի ապրիլի 20-ին նկարահանող խումբը մեկնում է Թուրքիա: Նկարահանումները ծավալվում են Ստամբուլում, Դիարբեքիրում, Դերսիմում: Մարդիկ, ովքեր հիշում ու պատմում են ֆիլմի հերոսի մասին, հարազատներից բացի նաեւ նրա ընկերներն են. նրանց անունը չի նշվում, դեմքերը մթնեցված է, որովհետեւ մինչեւ այսօր նրանց հետապնդում է թուրքական իշխանությունը: Կիրակոս Քարաջօղլին, ով մոտիկից ճանաչել է Արմենակին, եկել է Բելգիայից, որ օգնի նկարահանող խմբին, ուղեկցի նրանց: Եվ ահա նրանք Դիարբեքիրում են. ահա եւ Դպրեվանքը, որտեղ մինչեւ տասներկու տարեկանը սովորել է Արմենակը: Այստեղ սովորում էին քրդախոս հայ երեխաները, նրանց սովորեցնում էին հայերեն գրել, կարդալ, որպեսզի պահպանեն իրենց ինքնությունը:

Դպրոցի պատերին փակցված են շրջանավարտների նկարները. ահա նա՝ մեր Արմենակը, մատնացույց է անում Կիրակոսը...

Արմենակ Բաքրջյան- Օրհամ Բաքիր...

Տիգրան Մեծի կառուցած արքայանիստ քաղաքում՝ Դիարբեքիրում է ծնվել ու մեծացել Արմենակը: Պատմում է քույրը. «Դպրոցական տարիքից նա չափազանց մաքրասեր էր, կարգապահ ու լավ սովորող տղա... Ուսուցիչները զարմացած հարցնում էին՝ Արմենակ, այդ ի՞նչ անուն է, որտեղից են գալիս արմատները: Բոլորը փոխել էին իրենց անունները, իսկ մենք չէինք փոխում»:

Պատմում է եղբայրը՝ Քեմալ Բաքիրը. «Մենք յոթ երեխա էինք, Արմենակը տարբերվում էր, շատ հանգիստ ու փափուկ բնավորություն ուներ, սիրում էր կարդալ, որ շատ բան իմանար մեր ինքնության մասին: Մի անգամ ինձ հարցրեց՝ գիրք կարդո՞ւմ ես... պետք է անպայման շատ կարդալ, դա զարգացնում է մարդու միտքը: Մի օր էլ գիրք տվեց, կարդացի, հավանեցի, հասկացա, որ իրոք շատ կարդալ է պետք...»:

Ընկերը. «Նա շատ հարգված ու սիրված անձ էր. սիրալիր էր, օգնում էր բոլորին իր խորհուրդներով, ինչով կարողանում էր... Նրա կերպարը միշտ ոգեւորել է ինձ»:

Պատմում է մյուս եղբայրը՝ Իբրահիմ Բաքիրը. «Մի անգամ մայրս հարցրեց հորս. չորս տղա ունես, ի՞նչ է լինելու նրանց ապագան, հայրս նայեց մեզ, նայեց ու ասաց. ես չգիտեմ ով ինչպես, բայց Արմենակը զբաղվելու է քաղաքականությամբ, որովհետեւ գլուխը գրքերի միջից դուրս չի հանում...»:

Եվ ահա այսպես հյուսվում, պատկեր առ պատկեր զարգանում է ֆիլմը: Իր ոճով նա հարում է այն ֆիլմ-հետազոտություններին, որոնք հավասարիմ մնալով կինոժուռնալիստիկայի արտահայտչաձեւերին, իրենց պատումը մոտեցնում են թեմայի կիզակետին: Տրամաբանական մոնտաժը հանդիսատեսին մի պահ կրկին բերում է Երեւան:

**Ռուբեն Մելքոնյան, թուրքագետ:** - Արմենակ Բաքրջյանը թուրքահայ համայնքի պատմության մեջ յուրահատուկ կերպար էր. առաջին՝ նա Թուրքիայում եղել է ձախակողմյան



Արմենակ Բաքրջյան

(հեղափոխական) շարժման ամենավառ ներկայացուցիչը, երկրորդը՝ եղել է պոլսահայ համայնքում թուրքական ճնշումների ու հալածանքների, իր ինքնությունը եւ իր սկզբունքները պահպանած եզակի անհատականություններից մեկը: Հարելով ձախակողմյան գաղափարախոսությանը, ընտրելով պայքարի այդ ուղին, նա չէր նշում իր ազգային պատկանելությունը եւ չէր նշում, որ պայքարում է այդ գաղափարի համար, այլ պաշտպանում է ազգային փոքրամասնությունների շահերը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մենք գործ ունենք մի մոռացված հերոսի հետ, ֆիդայական շարժման շարունակողի հետ: Նա պայքարում էր ցեղասպանությունից հետո հայության բեկորներին վերադարձնելու իրենց արմատներին եւ դա պահպանելու համար»:

Ֆիլմը, որ հարուստ է մեր կորուսյալ հայրենիքի տեսարաններով, վառ դրվագներով (օպերատոր Աշոտ Մկրտչյան), հանդիսատեսին տանում է դեպի մեր նախնիների կառուցած վեհաշուք պարիսպները, ուր հաճախ շրջել է պատանի Արմենակը... Ահա Տիգրիս գետի վրա կառուցված շքեղաշեն այն կամուրջը, որի վրայով անցուդարձ էր արել մեր հերոսը եւ հիշել ծնողների պատմածները՝ թուրքերի բարբարոսությունների մասին... Եվ հենց այդ կամուրջի վրա էլ նա երդվել էր՝ պայքարել հանուն արդարության, հանուն ազգային ինքնությունը վերականգնելու...

Ստամբուլ տեղափոխվելուց հետո նա արդեն Դպրեվանքի աշակերտ էր, որտեղ սովորում էր նաեւ Հրանտ Դինքը: Նրանք դառնում են հավասարիմ ընկերներ եւ որոշում են միասին ելնել պայքարի...

Երբ նրանք ուսանում էին Թուրքիայի պետական համալսարանում, Հրանտը՝ կենսաբանական ֆակուլտետում, Արմենակը՝ բանասիրական, երկու տարի անց Արմենակը որոշում է թողնել համալսարանը եւ վերադառնալ Դերսիմ: Նրան մտադրությունից հետ չպահեց անգամ Հրանտի հորդորները, խնդրանքները. նա արդեն անդամագրվել էր «Tikko» բանվորագյուղացիական ազատագրական բանակին, եւ որպեսզի ապահովագրի ազգականների, հայրենակիցների անվտանգությունը, դիմում է դատարան՝ թուրքական անուն, ազգանուն ստանալու համար՝ Օրհամ Բաքիր:

Նա դառնում է շարժման լիդերը, թեեւ բանակը գլխավորում էին բացի Արմենակից նաեւ երկու անձ: Նրան վերապահված էր միանձնյա որոշումներ կայացնելու արտոնությունը:

Թուրքական իշխանությունը տեղեկանում է, որ ձախակողմյան շարժման բանակը մարտական գործողությունների է պատրաստվում, շրջանառության մեջ է մտնում Օրհամ Բաքիրի անունը: Թուրքը լավ գիտեր հայի վրեժը. եւ սկսվում են հետապնդումները: Արմենակի զինված ջոկատը պատսպարվում է Քարա Քուչա լեռներում:

Ֆիլմը ներկայացնում է մի սրտառուչ պատմություն. մի անգամ Արմենակը մտնում է թուրքական աղոթատեղի, մոլլան մոտենում է նրան՝ ես քեզ ճանաչեցի, դու Օրհամն ես... Մատնելո՞ւ ես, կտրուկ ասում է Արմենակը: Ոչ, որովհետեւ ես էլ եմ հայ...

Եվ Արմենակը պայմանավորվում է իր ջոկատը որոշ ժամանակով տեղափոխել այստեղ:

Իսկ թուրքական կառավարությունը շարունակում էր հսկայական գումարներ խոստանալ նրան, ով կհայտնի Օրհամի տեղը:

Դավաճանության հետեւանքով Արմենակի ջոկատը հայտնվում է ծուղակում, անհավասար մարտում զոհվում է նա (1980 թվականին, 27 տարեկան հասակում): Մոլլան իմանալով լուրը, շպրտում է զգեստը, վզից կախում է խաչը, վերցնում է հրացանը եւ շտապում ջոկատին օգնության, սակայն մնում է կիսաճանապարհին, զոհվում է թուրքերի նենգ գնդակից:

Բանաստեղծություններ են գրվում Արմենակի մասին, երգեր են ձոնվում...

Ֆիլմում հնչում է սրտառուչ մի երգ.

Օրհամ ընկեր, խոստանում ենք քեզ, ընկած զենքերը
Մենք կվերցնենք ու քո ճանապարհով կգնանք,
Քո վրեժը մենք կլուծենք պետությունից.
Դու հանգիստ ննջիր, Օրհամ եղբայր, մենք խոստանում ենք քեզ...

«Օրհամին կառավարությունը մի քանի անգամ վերաթաղեց, նրանք վախենում էին նույնիսկ նրա անշնչացած մարմնից, նրանց մեջ ահուսարսափ էր առաջացրել անգամ նրա գերեզմանը»,- ասում է ընկերներից մեկը:

Ֆիլմի վերջնամասում ցուցադրվում է ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միտինգ, լոզունգներով՝ 1915-2015 թվերով՝ ձեւավորված ու խոշոր անմոռուկով, որը խորհրդանշում է՝ հիշում եւ պահանջում ենք կարգախոսը: Միտինգում հնչում են կարեւոր բառեր, խոսքեր, որոնք հաստատում են, որ շարունակելու են Արմենակի գործը...

Ահա եւ Արմենակի նոր գերեզմանը, նա թաղված է մի վայրում, ուր անչափ շատ է եղել կոտորածը. փաստորեն դա զոհված հայերի գերեզմանոցն է... Ահա թափորը՝ դրոշներով, լոզունգներով գնում է դեպի նրա գերեզմանը, այստեղ նույնպես հնչում են խոսքեր՝ հավաստելով, որ չի մոռացվի նրա հիշատակը...

Լինենք շնորհակալ «Հայկ» կինոստուդիայից, նկարահանող խմբից, անձամբ ռեժիսորից ու օպերատորից, որ նրանք այդքան սիրով ու արվեստով մեզ վերադարձրին մի մոռացված հերոսի, մեր Արմենակին:

## Քրիս Բոհջալյանի նոր վեպը

Անցյալ հունվարին Մ. Նահանգներում վաճառքի հանված Քրիս Բոհջալյանի «Հյուրասենյակը» («The Guest Room») վերնագրով նոր վեպը արդեն իսկ գրաքննադատների դրվատական խոսքերին է արժանացել: «Արվարձանային տան հյուրասենյակում երկու տղամարդկանց դիակներն են, իսկ երկու կանայք էլ փախչում են ոստիկանությունից: Մի զույգի ամուսնությունը խորտակման եզրին է: Ընթերցողն իր շունչը պահած հետաքրքրությամբ է ծանոթանում ճանապարհից շեղված այս խմբի անդամների արկածախնդրություններին», գրում է նրանցից մեկը:

Գրքի շնորհանդեսը կայացել է ՀԲԸՄ-ի Նյու Յորքի կենտրոնական գրասենյակի դահլիճում, կազմակերպությամբ ՀԲԸՄ-ի հասուկ միջոցառումների հանձնախմբի, Հայկական համացանցի, «Համազգային» կրթական եւ մշակութային ընկերության, Հայ ուսանողների ընկերակցության, ԹՄՄ-ի եւ Սբ. Լեւոն հայկական եկեղեցու:

Բոհջալյանը արդեն 18 վեպերի հեղինակ է, որոնք թարգմանվել են ավելի քան 30 լեզուներով, իսկ դրանցից երեքը նաեւ էկրանավորվել են: Հ. Ծ.

## Մոնտեվիդեոյի հրապարակներից մեկը կկոչվի Հնչակյան մեծ հերոս Փարամազի անունով

Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյի քաղաքապետարանի հրամանագրով, քաղաքի կենտրոնական հրապարակներից մեկը որոշվել է անվանակոչել Հնչակյան մեծ հերոս Մաթեւոս Սարգիսյանի՝ Փարամազի անունով:

ՍԴՀԿ մամլո դիվանից ստացված այս հաղորդագրությունը հիշեցնում է, որ անցյալ տարի՝ հուլիսին, ՍԴՀԿ Կենտրոնական վարչության ատենապետ Հակոբ Տիգրանյանը եւ իրեն ուղեկցող պատվիրակությունը հանդիպում էին ունեցել Մոնտեվիդեոյի քաղաքապետ տիկին Աննա Օլիվյերայի հետ: Այսինքն՝ հնչակյան պատվիրակության այցը կամ բարեխոսությունն էր պատճառ դարձել քաղաքապետարանի որոշման:

## «Ընտանեկան պատկերներ»՝ ցուցահանդես Ուոթերթաունի հայկական թանգարանում

Ուոթերթաունի Հայկական թանգարանում (ALMA) հունվարի 17-ին բացվել է «Ընտանեկան պատկերներ» ընդհանուր խորագրով Սյուզան Գրիգորյանի լուսանկարչական ցուցահանդեսը, որտեղ օգտագործելով Օսմանյան դարաշրջանի դիմանկարներ, վավերագրական նյութեր եւ ընտանեկան խորհրդանշաններ ու հայկական սրբազան իրեր, հեղինակը Ամերիկայում ապաստանած հետ-եղեռնյան սերնդի եւ նրանց ժառանգների ինքնությունն է փորձել ներկայացնել, չմոռանալով պատշաճ հարգանքի տուրք հավաստելու նաեւ կորսված հայրենիքին:

Հայկական արմատներին ամուր կառչած ընտանիքում ծնված Սյուզան Գրիգորյանը հաճախել է Թաֆթս համալսարանում գործող Գեղարվեստի թանգարանի վարժարանը, եւ սովորել գծագրություն, նկարչություն, լուսանկարչություն եւ գունային տեսություն: Այնուհետեւ տեղափոխվել է Նյու Յորք եւ զբաղվել ուսուցչությամբ միջնակարգ դպրոցում: Մագիստրոսի գիտական աստիճան է ստացել (կրթության գծով) Բենկ Սթրիթի կրթական քոլեջից: Հ. Ծ.

AZG NEW MSHAKUIT.qxd 18/02/2016 21:36 Page 3



Երվանդ ԱԶԱՏՅԱՆ

# Հայ լրագրողների նահապետ՝ Ռոբեր Հատտեճյանը դարձավ 90 տարեկան

Ռոբեր Հատտեճյանը գուցե այնքան էլ ծանոթ անուն չէ Ատլանտյանի արեւմտյան ափերում, սակայն նրա գրական եւ լրագրողական ձեռքբերումները դասում են նրան հայկական մշակութային պատմության գլխավոր դերակատարների եւ ամենահայտնի անձնավորությունների շարքը: 2016 թվի հունվարին նա մուտք գործեց իր կյանքի իններորդ տասնամյակը, նույնքան եռանդուն եւ նույնքան նվիրված իր գործին ինչպես երբեւէ:

Ստամբուլում եւ Հայաստանում պատշաճորեն նշում են այս արտակարգ մարդու 90-ամյակը: Չնայած գործում է Թուրքիայում, նրա ստեղծագործական բեղմնավոր ուղին իր ազդեցությունն է թողել ոչ միայն ստամբուլահայ համայնքի, այլեւ ամբողջ սփյուռքահայության վրա:

Հատտեճյանի արգասավոր ստեղծագործությունը կարելի է դասել ինչպես գրականության, այնպես էլ լրագրության շարքում: Գրական եւ լրագրողական տաղանդների համակցությունը նրան դարձրել են առողջ դատողության տեր համայնքային մի ղեկավար, ով կարողացել է առաջնորդել իր հայրենակիցներին եւ անցնել նրանց հետ բազմաթիվ փորձությունների ու դժբախտությունների միջով:

Նախեւառաջ նա ականավոր գրող է, ով արձակի ժանրում ստեղծել է այնպիսի գործեր, որոնք նոր ուղի են հարթել: Իր կյանքի 70 տարիները նա նվիրել է հայ լրագրությանը, 50-ը որպես գլխավոր խմբագիր «Մարմարա» օրաթերթի:

Աթաթուրքի կողմից Թուրքիայի Հանրապետության հաստատումից ի վեր այդ երկիրը բազմաթիվ քաղաքական վերիվայրումների միջով է անցել, որոնցից յուրաքանչյուրը անպայմանորեն իր ազդեցությունն է թողել տեղի հայ համայնքի վրա: Հատտեճյանը ապացուցել է, որ այն բացառիկ շրջահայաց ու խելամիտ անձնավորություններից մեկն է, ով համայնքի ֆիզիկական ներկայությունը ապահովելով, կարողացել է պահպանել նաեւ նրա մշակութային ինքնությունը, առանձնահատկությունը:

Հակառակ 1923-ին կնքված Լոզանի պայմանագրի դրույթներին, որոնք լեզվական, մշակութային եւ կրոնական ազատություններ էին խոստանում Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնություններին, հայկական համայնքի կյանքն այնտեղ, նոր հանրապետության սկզբնական շրջանում հատկապես, դարձել էր հեղձուցիչ: Ցեղասպանությունից հետո, հայ համայնքի փոքրաթիվ անդամները կարողացան վերապրել Ստամբուլում՝ թուրքական վրեժխնդիր իշխանություններսի աչալուրջ հսկողության ներքո, որոնք խստագույն սահմանափակումներ էին կիրառում, այդ թվում նաեւ գրական գործերի եւ մամուլի հրատարակումների գրաքննություն: Նման պայմաններում հայերն իրենք իրենց մեղավոր էին զգում, որ չեն «արժանացել» իրենց զոհված եղբայրների ու քույրերի ճակատագրին եւ անհայտ կորել այս աշխարհի երեսից: Ահա այս մթնոլորտում էր, որ հայ համայնքը պետք է ձեւավորեր իր հավաքական կյանքն ու զարգացներ իր գրականությունը:

Մինչեւ համաշխարհային առաջին պատերազմը Ստամբուլը հայկական մշակույթի եւ գրականության կենտրոնն էր, որտեղ հայկական ոգին էր վեր հառնում Վարուժանի, Սիամանթոյի, Թեքեյանի, Զոհրապի եւ մյուսների հանճարեղ ստեղծագործությունների շնորհիվ: Բայց նոր դարաշրջանը, իր սահմանափակումներով, առաջ բերեց մի նոր մթնոլորտ, որտեղ խորհրդանշական եւ սյուրռեալիստական ժանրերը միայն կարող էին անվնաս գոյություն ունենալ: Հայ գրողների մարդկային եւ սոցիալական ընդզումները պետք է արտահայտվեին ավելի լայն, համամարդկային թեմաների շրջանակներում: Նազիմ Հիքմեթի եւ Օրհան Վալիի նման թուրք գրողների ստեղծագործությունների միջոցով եվրոպական գրականությունը ներթափանցեց նաեւ հայ գրականության ոլորտները: Անրի Բերգսոնը, Ալբեր Քամյուն, Ժան Պոլ Սարտրը եւ Թ.Ս. Էլիոթը դարձան օրինակելի տիպարներ հայ գրողների համար: Ռոբեր Հատտեճյանը մեկն էր այդ տաղանդավոր գրողներից: Մյուս խոստումնալից հանճարների թվում էին Հայկազն Գալուստյանը, Կարպիս Ճանճիկյանը, Զավեն Բիբերյանը եւ Անտան Օզերը, որոնք ափսոս, երկար չապրեցին ձախակողմյան քաղաքական շարժմանը մասնակից դառնալու հետեւանքում ձեռք բերած հիվանդությունների կամ տառապանքների պատճառով:




Հատտեճյանը, Զարեհ Խրախունին եւ Զահրադը դիմացան փորձություններին եւ շարունակեցին մեծապես նպաստել ստամբուլահայ գրականության զարգացմանը, որն իր հերթին նաեւ սփյուռքի եւ Հայաստանի գրականության վրա ազդեցություն թողեց, իսկ Վարդերես Գարագյոզյանն ու Գարիկ Պասմաճյանը կամուրջ հանդիսացան այդ երկուսի միջեւ:Հակառակ ծանրաբեռնված լինելով խմբագրի ամենօրյա պարտականություններով, Հատտեճյանը դարձավ իր սերնդի ամենաարգասավոր գրողը: Ավելին, սովորական օրաթերթը վերածեց գրական հանդեսի, որտեղ ականավոր գրողներ գլուխ գլխի եկան եւ երիտասարդ տաղանդներ հայտնաբերվեցին ու դաստիարակվեցին:

Հատտեճյանն իր առաջին թատերախաղը հրատարակեց 1959-ին «Կեանքի մը երեք կիրակիները» խորագրի ներքո, եւ արժանացավ «Անահիտ» գրական մրցանակին: Նրա «Յակոբ Պարոնեանի մտերմութեան մէջ» մենագրությունը (1965 թ.) բացահայտում է մեծ երգիծաբանի կյանքը, տաղանդը եւ տխրությունը: Հնարավոր է, որ այս գործը գրելիս նա ներշնչված է եղել եւ ըստ այդմ կառուցել է իր մենագրությունը Անրի Թրուայայի հայտնի կենսագրությունների ոճով, որտեղ ականավոր մարդկանց (Տոլստոյ, Տուրգենեւ, եւայլն) կյանքի մանրամասները ներկայացնելուց բացի, հեղինակը նաեւ նրանց ժամանակներին հատուկ թեժ հարցեր է քննարկել: «Բառասխալը» կարճ պատմվածքների հատոր է, որ նա հրատարակել է 1972-ին: Իսկ «Կիրակնօրեայ հաշուեփակը» եւ «Վաստակը» թատերախաղեր են, որոնցից առաջինը սիրո եւ ամուսնության մասին է, իսկ երկրորդը՝ ծերանալու, տարիքն առնելու: 1977-ին հրատարակված «Օրագրիս տասնըհինգ էջերը» ճանապարհորդական նոթեր են՝ գրված աշխույժ լրագրողական ոճով եւ համեմված գրական անանց գրավչությամբ: «Մարդոց մեծության եւ խեղճութեան մասին» խորագրով 1977-ին հրատարակված կարճ պատմվածքների մրցանակակիր հատորը խորամուխ է լինում մարդկային երկու հակադիր վիճակների քննության մեջ եւ նոր ու արդիական մոտեցումով է փորձում բացատրել դրանք: Բայց նրա գլուխգործոցը համարվում է «Առաստաղ» վեպը, հրատարակված 1983-ին, որի հերոսը, մի հաշմանդամ, ստիպված է անկողնին գամված, կյանքի մնացյալ օրերն անցկացնել՝ դիտելով առաստաղը, որը փոխաբերական իմաստով դառնում է մի հարթակ, ցուցադրական մի էկրան, որի վրա նա դիտում է իր երեխաների կյանքն օտար երկրում, հեռավոր Կանադայում, վտանգված ձուլման եւ խորթ մշակույթի ենթարկվելու հեռանկարով: Հայկական կարոտախտն է այստեղ խոսում իր ամբողջ ուժգնությամբ:

Նշվածները սոսկ մի փոքրիկ հատվածն են Հատտեճյանի գրական ստեղծագործությունների: Նա շնորհալի, արտակարգ օժտված անձնավորություն է, ֆենոմենալ երեւույթ: Նրա գրիչը սահուն է, ոճը՝ պարզ, հասկանալի, բայց իր պարզության մեջ նաեւ ընդգրկուն, մարդկային բնավորության տարաբնույթ երեսներն ընկալող, եւ այդտեղ է նրա մեծությունը:

Հարգված ու սիրված թերթը՝ «Մարմարան» խմբագրելուց բացի, Հատտեճյանն ստեղծել է նաեւ իր «ապրանքանիշը» համարվող «Յուշատետրը», ամենօրյա հոդվածների շարքը, որտեղ նա ուշադրությունը բեւեռում է մարդկային առօրյա հոգսերի վրա, շատ հաճախ խրվելով փիլիսոփայական խոհերի մեջ: Սովորական մի թռչունի նկարագրությունն, օրինակ, կարող է աստիճանաբար վերածվել բնության գաղտնիքների բացահայտմանը եւ գեղեցկության գովքի: Ընթերցող հասարակայնությունը բախտավոր է, որ այդ ամենօրյա հոդվածների շարքը ի վերջո վերածվում է հատորների, որոնց թիվը, եթե չեմ սխալվում, հասնում է 70-ի: Իսկ նրա գրիչը շարունակում է արտադրել:

Խորհրդածելով այս մարդու կյանքի եւ գործունեության շուրջ, մենք գալիս ենք այն եզրակացության, որ նա ավելին է սովորական մի անհատ լինելուց: Նա շատ ավելի հետաքրքրական է, գրավիչ եւ հուզական: Մի խոսքով, մի ամբողջ գիտական, կրթական կառույց է, հաստատություն:

Նա գրելը դարձրել է իր կյանքի նպատակը եւ ոչ մի րոպե չի ցանկանում վատնել առանց ստեղծագործելու: Դրանով է նա փոխհատուցում այն, ինչ ստացել է համայնքից մասնավորապես եւ մարդկությունից՝ ընդհանրապես, եւ դրանով էլ նա ծառայում է իր համայնքին եւ մարդկությանը որպես ստեղծագործ մարդու օրինակելի տիպար:

Դետրոյթ, ԱՄՆ
Թարգմ. Հ.Ծ.

Նաիր ՅԱՆ

# Վիլեն Գալստյանը 75 տարեկան է



**ՀՀ ժողովրդական արտիստ, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր բալետմայստեր Վիլեն Գալստյանը 75 տարեկան դարձավ: «Գայանե» բալետի՝ փետրվարի 13-ի բեմադրությունը նվիրվեց նրա հոբելյանին:**

**«Գայանեի» մասին Վիլեն Գալստյանն առանձին սիրով է խոսում՝ նշելով, որ ինքն է ծնունդ տվել այդ ներկայացմանը: Պատմում է, որ 1970-ականներին Մոսկվայի բեմում Արամ Խաչատրյանը տեսել է իր պարն ու առաջարկել բեմադրել «Գայանեն»: Վիլեն Գալստյանը, Երեւան վերադառնալով, սկսել է աշխատել. բեմադրել է «Գայանեն»՝ ինքն էլ կերտելով Արմենի կերպարը: 1974-ին բալետը ներկայացրել է Արամ Խաչատրյանին: «Որդիս, հրաշալի է ստացվել»,- ասել է կոմպոզիտորը: Երեսուն տարի անց՝ 2004-ին Վիլեն Գալստյանը «Գայանեն» վերաբեմադրեց՝ պահպանելով Մինաս Ավետիսյանի բեմական ձեւավորումները: Այդ օրվանից բալետային բեմադրությունն օպերային թատրոնի խաղացանկում է, ներկայացվել է նաեւ օտար երկրներում, այդ թվում՝ Թուրքիայում: Վիլեն Գալստյանն ազգային պարերը համադրել է դասականին եւ ստացել սիրո պատմության, ժողովրդական գունեղ պատկերների խճանկար:**

**Վիլեն Գալստյանի կերտած Սպարտակը՝ Արամ Խաչատրյանի «Սպարտակում», Ալբերտը՝ Ադանի «Ժիզելում», Արմենը՝ Խաչատրյանի «Գայանեում», Կոմիտասը՝ «Անտունիում», Դավիթը՝ «Սասունցի Դավիթում», Ռոմեոն՝ Պրոկոֆեւի «Ռոմեո եւ Ջուլիետում», հայ բալետային արվեստի բացառիկ նմուշներից են: Հինգ տարի սովորելով Մոսկվայի Լունաչարսկու անվան թատերական ինստիտուտում՝ նա ձեռք է բերել բալետմայստերի հմտություններ եւ բեմական գործունեությանը զուգահեռ՝ հեղինակել մի շարք ներկայացումներ:**

**Վիլեն Գալստյանի բալետային արվեստով օտարազգի հանդիսատեսը հիացել է Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում: Նկարահանվել է «Նռան գույնը», «Հայկական որմնանկարներ» ֆիլմերում:**

**Իր ծննդյան օրն էլ բալետմայստերն աշխատանքային հոգսերով էր տարված. ներկայացումից առաջ «Գայանեի» վերջին շտկումներն էր անում: Ստեղծագործական խումբն ու երաժիշտները մաեստրոյին ծափողջույններով դիմավորեցին, իսկ նա հորդորեց. «Ինձ համար ամենամեծ նվերն այն կլինի, որ նույն ոգեւորությամբ շարունակեք պարել»:**

**Մի քանի բեմադրություններ կան, որ Վիլեն Գալստյանն կուզենար ներկայացնել արվեստասերի դատին: «Մութ ու ցուրտ տարիներին բեմադրեցի Տիգրան Մանսուրյանի «Ձյունե թագուհին»: Թատրոնում լույս չկար, ջեռուցում չկար: Դեկորացիաները բորբոսնեցին, զգեստները փչացան: Ամեն ինչ տարան, թափեցին: Բեմադրեցի նաեւ Լորիս Ճգնավորյանի «Օթելլոն». լավ ներկայացում ստացվեց, բայց նորից արժանացավ «Ձյունե թագուհու» ճակատագրին: Այնպես է ստացվել, որ իմ արվեստի կեսը թափել են»,- ափսոսանքով նկատեց բալետմայստերը:**

**Հպարտությամբ է հիշում այն տարիները, երբ «Սասունցի Դավիթը», «Գայանեն» ներկայացվեցին Մոսկվայում ու Սանկտ-Պետերբուրգում: Տեղի հանդիսատեսը նշել է, որ հայկական բալետը յուրօրինակ ձեռագիր ու որակ ունի:**

**Անցյալը թողնենք անցյալին՝ ասում է արտիստը: Հիմա նրա համար պատասխանատու շրջան է. սկսել է բեմադրել Արամ Խաչատրյանի «Դիմակահանդեսը»: Երբ մշակույթի նախարարը մաեստրոյի տարեդարձի առիթով զանգել-շնորհավորել է, հոբելյարը տեղեկացրել է իր նոր մտահղացման մասին, նաեւ զգուշացրել, որ «Դիմակահանդեսը» թանկ հաճույք է՝ ֆրակներ, պետերբուրգյան արիստոկրատիա, համապատասխան դեկորացիաներ: Նախարարը խոստացել է, որ նոր բեմադրության բոլոր կարիքները կհոգա: Եթե ամեն ինչ բարեհաջող ընթանա, Արամ Խաչատրյանի «Դիմակահանդեսն» ամռանը բեմ կբարձրանա:**

AZG NEW MSHAKUIT.qxd 18/02/2016 21:36 Page 4



# ԳՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՌԻ ՁԳՈՂԱԿԱՆ ԴԱՇՏԸ

**Արտաշես ԱՐԱՄ**

Օրերս «Թեքեյան» մշակութային կենտրոնում կայացավ Ժիրայր Աղավելյանի ֆոտոարվեստի ժանրում կատարած աշխատանքների ցուցադրությունը եւ «Երեք հասակ» գրքի շնորհանդեսը: Ջերմությամբ ու անկեղծությամբ ողողված պատկերներ, հեքիաթային, ուշագրավ գիրք, որի մեջ տեղ էին գտել ինքնակենսագրական մտորումները, մանրանկար հիշեցնող քնարական ապրումները, հարցազրույցները, ֆոտոարվեստի ոճով ստեղծված գործերի վերատպությունները: Անկեղծ ու ինքնամոռաց որոնումները, Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) կուլտուրայի ինստիտուտի շրջանավարտի առջեւ բազում ու բազմաբնույթ դռներ էին բացելու: Եվ Թեքեյան կենտրոնում Ժիրայր Աղավելյանի եւ նրա գործերը դիտելու եկած հանդիսականի միջեւ ջերմ ու անմիջական զրույց էր ծավալվում, մոռացնել տալով դրսի ցուրտն ու միապաղաղությունը:




Նախ մի քանի խոսք Ժիրայր Աղավելյանի ֆոտոարվեստի սկզբունքով արված գործերի մասին: Իրականի եւ անիրականի սահմանագիծը երիզող ծիրը լեցուն է անդենական շշուկներով, գույներով, հուշի եւ հիշողության կայծկլտուն երանգներով: Պետք է ճշմարտապես օժտված, հետեւողական եւ հանձառու լինես, որ այդ անդենական ծիրում պահ մտածը իրականի հարթակ տեղափոխես, վավերացնես ու դարձնես հանուրի սեփականությունը: Որսալ գույնը, շշուկը, կայծկլտանքը եւ հարաբերել դրանք երկրային ցավի, կարոտի, լույսի ու լավատեսության հետ: Դեպի անհիմանալին ընթանալիս, Ժիրայրին հաստատապես սատարել է ռեժիսորի իր կոչումն ու մտածողությունը: Այստեղ կարեւոր ձեռքբերումը շարժման վավերացումն է, շարժումի պատրանքը: Մթան մեջ պայթող ծաղիկների այդ լուսեղեն բողբոջները, ճախրանքի միտված, սրընթաց աճող այդ ծառերը եւ շառագույնի մեջ պրկված եւ անվերջ փթթող սաղարթն ու ճյուղերը, «հալվող» ծաղկամանն ու ծաղկամանում ներքին լարումից այրվող ծաղկաթերթերը, արգելված պտղի վաղնջական ասքը խաղարկող Ադամն ու Եվան, նույն թեմայի այլազան արծածումները ժամանակի եւ տարածության մեջ, հողի, բնության եւ մարդ-աստվորի տիեզերական կապը խորհրդանշող դիմանկարների շարքը: Ամեն վայրկյան լույսը խելահեղորեն տրոհվում է, եւ թվում է մասնիկների մեկ աննշմար հպումով տարածության մեջ նշմարվում է այդ տրոհված լույսի հետագիծը: Ժիրայրի պատկերած եկեղեցին, եկեղեցու գմբեթն ու խաչը արեգակի դեղին սկավառակի ֆոնին, եւ արեգակի այսպես կոչված կորոնար զանգվածից հրեղեն լավա հիշեցնող շառագույնն է արտամղվում: Ինչպիսի ստեղծագործական մեխանիզմ ուզում ես կիրառիր, եթե ստեղծագործական վերջնական արդյունքում չկա քո ոգու թրթիռը, քո վերապրումի դրոշմը, ցուցանվող պատկերը չի կարող հավաստի ու վավերական լինել: Սույն պարագայում Ժիրայրը կարողացել է դիտողին փոխանցել իր խորապես ընկալածն ու ճանաչածը, իր անհատականության ոսպնյակով անցկացրածը: Ժիրայրը փորձել է լույսի, գույնի այդ միկրոաշխարհներում գտնել ու հայտածել այնպիսի պատկերներ, որոնք ողողված են լույսով ու լավատեսությամբ: Այդպես ամենաաննշան մանրամասնը խորհրդանիշի հնչեղություն է ձեռք բերում: Պիտի կարողանաս հյուսվել քո տեսածին, ընկալածին, որպեսզի տեսածդ ճանապարհ անցնի, տեղ հասնի: Եվ ծավալվում է հորիզոնը, եւ բախվում են գունեռանգները եւ ի հայտ են գալիս նոր տիրույթներ՝ ջերմությամբ, անկեղծությամբ եւ հուզականությամբ լեցուն: Եվ հեռահար մի պատկեր տեսիլվում է քո ներսում, քո ներաշխարհի պատերին: Եվ դու ջանք ես դնում, որ նոր-նոր ծնունդ առած մեղեդին չընդհատվի եւ նույն մեղեդու հնչյուններով լցվի կյանք կոչված լինելիության ծեսը: Ժիրայրի աշխատանքներում գործում է գույն-նշանագիր սկզբունքը եւ հիմնականում հաղթահարված է նյութի դիմադրությունը: Կան գործեր, որոնք օդա են հիշեցնում, յուրօրինակ փառաբանություն՝ առ բնությունը, առ բնականն ու գեղեցիկը: Բառի, գույնի ձգողական դաշտը, եւ եթե անհանգիստ, պրպտող միտք ունես, ապա որոնման հաճույքը, բացահայտելու տենչը քեզ մշտապես պահելու են այդ ձգողական դաշտում: Ժիրայրի պատկերած ձիերը, կարապը, ծիծարնափայլ երկնքում ճախրող արծիվը մարդեղացած են, օժտված՝ մարդկային նկարագրով:

Իր «Երեք հասակ» գրքում Ժիրայրը զետեղել է նաեւ իր ինքնակենսագրական խոհերը, որոնք գալիս, ամբողջացնում են ֆոտոարվեստի ոճով արված նրա գործերն ու քնարական էջերը: Կյանքը լեցուն է որոգայթներով եւ կես ճանապարհին չմնալու համար մենք պետք է ապավինենք մեր արմատներին, այն փոքր ու մեծ աշխարհին, որտեղից ծնունդ ենք առել. «Գյուղում եղած օրերին ինձ միշտ հոգեկան հանգստություն է պարգեւել բնությունը՝ ծառերի «Պարը»,- ինքնակենսագրական իր պատումի մեջ վկայում է Ժիրայրը: Եվ մանկության, պատանության օրերի այդ վառ, անջնջելի պատկերները տարիներ անց պիտի դառնային արդիական ֆոտոարվեստի ոճով արված գործերի ատաղձը: Եվ Ժիրայրի տպավորիչ ծառերը պիտի խոսեին, պիտի պատմեին, պիտի հիշեին ու վերհիշեին. «Խուտուփի ձյունը հագեցնում էր ծարավս: Խուտուփը... Նա միշտ իմ թիկունքին էր, պահպանում եւ ուժ էր տալիս ինձ: Անգամ գյուղի խոնարհված եկեղեցին էր ինձ հավատ ներշնչում եւ հույս տալիս»: Հավատարմության անշիջելի խարույկը, որ հոգեւոր ամենասաստիկ ցրտին անգամ կարող է լույս ու ջերմություն պարգեւել իր շուրջը շղթա կազմած մարդկանց: Եվ դու քո անեղծ վկայությամբ ոգեկոչում ես կյանքից վաղուց հեռացած մարդկանց նվիրական դեմքերը եւ խնկարկում ես հիշատակը նրանց. «Գյուղի տատիկները ջերմությամբ էին պարուրում ինձ: Կանայք հավաքվում էին ձմեռվա հացը՝ լավաշը թխելու: Վերջինիս բուրմունքից արբած՝ այծի պանրով ու հացով «լրացնում» էի երջանկությունս»:

Ժիրայր Աղավելյանը ընթերցողի հետ իր հուշերն է կիսում, ներկայացնում իր կյանքի պատմությունը, խոսում է իր պապի մասին, բայց ընթերցողի աչքերի առջեւ բազում ու բազմաթիվ հայ պապերի առինքնող ու արքենի կերպարներն են հառնում, եւ դու բոլորեքյան զգում ես հողի ուժը, հայրենի երկրի կատարելությունն ու զորությունը. «Պապս ինձ օգնում էր հասկանալու հողի ուժը եւ արմատներ գցելու, հողին ու բնությանը մերվելու գաղտնիքը»: Ժիրայրի ստեղծագործություններում պատկերված ձիերը եւ Ժիրայրի մանկության ձին՝ խաղընկերը փոխկանչի մեջ են, եւ այդ հուզական փոխկանչը լսելի է բոլորին. «Մի օր սարից գալիս էինք, շատ խիտ մառախուղ էր, ճանապարհը չէր երեւում: Իմ ձին կանգ առավ անդունդի եզրին ու առաջ չգնաց՝ փրկելով իմ կյանքը»:

Ի՞նչն է անցողիկը եւ ի՞նչն է մնայունը, աստիճանաբար անշքացող այս աշխարհում ո՞ր գույներն են մնում անանց ու անխամրելի: Եվ ցավեցնող հուշից լույս ու լավատեսություն է բխում, եւ աշխարհի հեռու-հեռավոր թվացող անցուդարձը մոտենում-մոտենում եւ հպվում է սրտիդ պատերին. «Մայրս... Հորս կյանքի անփոխարինելի ընկերը, նրա սերը, ուժը եւ թուլությունը: Նադյա էր մորս անունը, բայց հայրս նրան փաղաքշորեն «Նադյուշ» եւ ավելի հաճախ՝ «Նան» էր անվանում»: Մի հատիկ նվիրական հուշը բառի, գույնի ձգողական դաշտում նոր «թեժ» կետեր է հայտնաբերում, եւ ներանձնական ժամանակը դառնում է անանձնական. «Կեսգիշերային ղողանջներից հետո, երբ սովորաբար կենդանանում են տիկնիկները եւ սիրո խոստովանություն անում միմյանց, այս անգամ հրաշք է տեղի ունենում, գործադրելով վերջին ճիգերը, կտրում են թելերը եւ հպվելով միմյանց, թեւեր առնում ու վեր բարձրանում...»: «Պետք է հաճախ նայել երկնքին ու հիշել, որ վատ մտքերը վերադառնում են որպես տկարություններ, իսկ լավ մտքերը լուսավորում են ճանապարհը»,- համոզված է Ժիրայր Աղավելյանը: Եվ տարակույս չկա, որ Ժիրայրի ստեղծագործական բոլոր որոնումները միտված են լավը, բարին, լուսավորը կայացած տեսնելուն: Եվ բառի ու գույնի նույն ձգողական դաշտում են հղացվել սույն քնարական արծարծումները. «Աշնանային թափուր մի պուրակ (Սիրո հուշ, երազ, Փոքրիկ արահետ), Կախարդված ենք մենք»: Մարդկանց ճանապարհը լուսավորելու նույն անկեղծ ու ազնիվ մղումով է Ժիրայր Աղավելյանը նկարահանել իր բազմաթիվ փաստագեղարվեստական ֆիլմերը, որոնք դրվատանքի, մրցանակների են արժանացել մի շարք փառատոններում. «Վարդանանք», «Քարերի սիմֆոնիա», «Լավաշ», «Ո՞վ է նա. Էդվարդ Ղազարյան», «Նռան ճյուղերով բոցուն» եւ ուրիշ ֆիլմեր:

Ես կփորձեմ հպանցիկ անդրադառնալ միայն հանճարեղ Կոմիտասին ձոնված «Նռան ճյուղերով բոցուն» ֆիլմին, որտեղ ներկայացված է Կոմիտաս բանաստեղծը: Ժիրայրը հանդիսականին է ներկայացրել Կոմիտասի իր ընկալումը: Հնչում են հատվածներ Կոմիտասի բանաստեղծություններից եւ Հայոց աշխարհի, հայ ոգու վաղնջական պարտեզը տեսիլվում է մի նոր լույսի ներքո. «Ես ու դու սեր ենք, Մեկ սրտի տեր ենք, Նռան ճյուղերով բոցուն, Սիրո տաղերով արբուն»: Ժիրայր Աղավելյանի ֆիլմը Կոմիտասի մասին է, բայց եւ ձոնված է հայոց վերածննդին, թե ինչպես հայոց ճղակոտոր նռնենին, հայոց անխորտակ ոգուն ապավինած նոր ճյուղեր արձակեց, առավել՝ հզոր, ավելի՝ ոգեղեն ու բոցուն:

Ժիրայր Աղավելյանի ֆոտոարվեստի ոճով արված ստեղծագործությունները, քնարական մանրանկարները, ֆիլմերը ստեղծված անկեղծությամբ, ջերմությամբ ու գորովանքով, հաստատապես գտնելու են դեպի հանդիսականը, ընթերցողը տանող ճանապարհը եւ այդ հանդիպումից հաստատապես շահելու է հույսի ու մաքառման ճանապարհների վրա հայտնված հայ մարդը:

## Հայտնաբերելով ականատեսներին

**Հայոց ցեղասպանության հարյուրամյակը լավ առիթ էր պատմաբանների, արվեստագետների եւ գրողների համար վերհիշելու Օսմանյան կայսրության իրականացրած հանցագործություններն ու տեղահանությունները: Ցուցահանդեսների կազմակերպումը աշխարհով մեկ ստիպեց այդ գործի մասնագետներին փորփրել արխիվները եւ նոր նյութեր երեւան հանել, գրում է «Հաֆինգտոն Պոստ» թերթում Սառա էլ Քամելը Նյու Յորքից, այցելելով լուսանկարչուհի Դիանա Մարկոսյանի «1915» խորագիրը կրող ցուցահանդեսը, Նյու Յորք համալսարանի Հակոբ Գեւորգյանի անվան «Մերձավոր Արեւելքի ուսումնասիրությունների կենտրոնում»:**





**Մարկոսյանը ամերիկահայ լուսանկարչուհի է, ծանոթ Չեչնիայում երիտասարդ մահմեդական աղջիկների կյանքը լուսաբանող նկարների շարքով: Իր նոր՝ «1915» ծրագրով նա 2014-ի հոկտեմբերից ճանապարհ է ընկել որոնելու Հայաստանում ապրող ականատեսների: Նա հանդիպել է նրանցից 10-ի հետ, սակայն միայն 3-ը կարողացել էին հիշողություններ պատմել անցյալից. Եփրաքսյա Գեւորգյանը (110 տարեկան), Մովսես Հանեշյանը (105 տարեկան) եւ Մարիամ Սահակյանը: Այդ հիշողությունների հետքերով նա մեկնել է Թուրքիա, այցելել նշված վայրերը եւ վերադարձին իր հետ բերել ազդեցիկ, մեծածավալ պաննոներ, որոնք ի ցույց է դրվել ականատեսներին: Տեսնելով իրենց մանկության տներն ու վայրերը՝ նրանք հուզվել են, արցունքներ թափել, իսկ նրանցից մեկը՝ Մովսես Հանեշյանը սկսել է պարել: «Դա հենց այն էր, ինչ ակնկալում էր լուսանկարիչը», եզրափակում է իր հոդվածը Սառա էլ Քամելը:**



Հ. Ծ.